ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

(74-րդ տարի) Թիվ-7 (1641) Յուլիս 2020

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Կարո Արմենյան
Ովքեր պիտի բանան նոր դարագլուխը (էջ 1-2)

2- Հարցազրույց

Պատասխանում է ՀՅԴ Բյուրոյի անդամ Վիգեն Բաղումեանը
Որակական փոփոխութիւնն անխուսափելի է (էջ 3-5)

3- Քաղաքական

Արծվիկ Մինասյան
Հայաստանի Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխության իրավաքաղաքական հարցերի շուրջ (էջ 6-10)

Արա Նռանյան
Դաշնակցության պատասխանատվության պահը(էջ 11-14)

Վ.Հ.
Ներքաղաքական զարգացումները Հայաստանում (էջ 15-17)

4- Հայրենիք Սփյուռք

Վիգեն Աբրահամեան
Հայկական տեսլականի տագնապը (էջ 18-22)

Մկրտիչ Մկրտիչեան
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (7) (էջ 23-25)

5- ՀՅԴ ծննդյան 130 և հայրենիքում վերընձյուղման 30 ամյակներ

Մուշեղ Իշխան
Դաշնակցութեան ուժին գաղտնիքը (էջ 26-27)

6- Դաշնակցական բեմ

Աւօ Գաթրճեան
Կուսակցական դպրոցի կարեւորութիւնը (էջ 28-29)

7- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Չինյալ պայքարը Սփյուռքում. «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» և «Հայ յեղափոխական բանակ»(էջ 30-32)

† Համլետ Գեւորգյան
ՀՅԴ կառույցների վերականգնումը Վան-Վասպուրականում 1904-1905 թթ. էջ (33-42)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Վերցուցէ՛ք ձեր ծունկը մեր պարանոցին վրայէն(էջ 43-44)

Ովքե՞ր պիտի բանան հայ պետականութեան նոր դարագլուխը

Կարօ Արմենեան

Այսօր ազգովին կը գտնուինք խորապէս տագնապեցնող այս հարցականին առջև և չունինք բարոյական իրաւունքը՝ վարանելու, տնտնալու, պատրուակներ որոնելու, քաւութեան նոխազներ յօրինելու: Ազգին և պետութեան առջև դրուած է ղեկավարութեան վճռորոշ խնդիրը և զգաստութեան կը հրաւիրէ մեզ համաշխարհային վարակի այս դժնդակ պայմաններուն մէջ: Պարզ խօսքով՝ հազար փաունտ կշռող «կոռիլլան» իր գարշահոտ զանգուածով նստած է մեր շեմին և պարտաւորիչ կը դարձնէ մեր հաւաքական պատասխանը հետևեալ երկու հարցումներուն՝ ինչպէ՞ս շարժել իր տեղէն այս գերբնական սպառնալիքը, և ո՞վ պիտի ըլլայ զայն իր տեղէն շարժողը:

Միւս բոլոր հարցերով կրնան զբաղուիլ մեր վերապրող սերունդները իրենց այլևայլ հայեցակարգերով: Այսօրուան մեր գործն է վճռական լուծում բերել այս անշրջանցելի պարտաւորութեան:

Յստակ է այսօր, որ ներկայ համավարակը կը խախտէ աշխարհակարգի բոլոր ներքին հաւասարակշռութիւնները՝ ստիպելով, որ համաշխարհային միտքը ձեռնարկէ քաղաքակրթական համակարգի արմատական վերաքննութեան: Միաժամանակ երբեք յստակ չէ, թէ ով կամ ովքեր պիտի առաջնորդեն համաշխարհային այս նախաձեռնութիւնը յառաջիկայ ամիսներուն և տարիներուն: Համավարակը շղթայազերծած է իսկական յեղափոխութիւն մը՝ առանց յեղափոխականներու... Մեծ, տարերային, անհակակշռելի թուող մակընթացութիւն մը, որ առայժմ կը գործէ «անպատիժ» և կը պատուհասէ բոլորը անխտիր... Յանկարծ կ'արթննանք (որպէս մարդկութիւն) և կը տեսնենք, որ մեզի ծանօթ յարացոյցը (paradigm, այսինքն՝ ցարդ «մեր սորված քերականութիւնը») փոշիացած է մէկընդմիշտ, և մենք դրուած ենք ապրելիութեան նոր յարացոյցի մը (նոր կենսակարգի մը) ձևաւորման հրամայականին առջև:

Այս կացութեան մէջ երբեմնի գերտէրութիւնները սրբուած կը թուին ըլլալ օրուան մայրուղիէն: Անոնք այլևս չեն խօսիր աշխարհին ղեկավարութիւն հայթայթելու իրենց պարտաւորութեան մասին:

Անոնք տրամադիր չեն մեծ յաձնառութիւններու գնով տիրութիւն ընելու աշխարհի կնճիռներուն:

Ասիկա այն ժամանակն է, երբ ամէն պետութիւն և ամէն ազգ մնացած է ինքն իր ճարին: Արտաքին սպառնալիքը, որուն դէմ ամէն պետութիւն կը փորձէր պաշտպանուիլ, արդէն մտած է ներս, և գէթ պատմութեան այս հանգրուանին վրայ արտաքին և ներքին սպառնալիքները միախառնուած են և դարձած անզանազանելի: Կը պարզուի, որ ազգային գերիշխանութեան կանոնը աւելի յստակօրէն կը գործէ, երբ աշխարհ ինկած է քաոսի մէջ...

Առակս կը ցուցանէ, որ ոչ միայն մեծ է մեր



դիմագրաւած մարտահրաւէրը, այլ նաև լայն չափերով մինակ ենք մենք այս մարտահրաւէրին առջև: Հետևաբար մենք ենք և մեր քանքարը: Մենք ենք և մեր ստեղծագործական ներոյժը: Մենք ենք և մեր վճռականութիւնը՝ «արութեան նոր գործը» (մեծ Պատմահօր բանաձևով) կրկին կեանքի կոչելու: Ինքն իր ճակատագրին համար պատասխանատուութիւն վերցնելու նոր հանգրուանն է, որուն առջև կը գտնուինք իբրև պետականութիւն և հետևաբար պէտք է հարց տանք, թէ որոնք են այս պատասխանատուութեան ճշգրիտ եզրերը կեանքի իրական հողին վրայ:

Դժբախտաբար, քաղաքակրթական այս ճգնաժամը մենք ազգովին կը դիմագրաւենք մեր երկրի քաղաքական բեմի կոտորակուած պայմաններուն մէջ: 2018ի իշխանափոխութիւնը յեղափոխութիւն կը խոստանար մեր ժողովուրդին՝ առանց յեղափոխութեան խարիսխ հանդիսացող անհրաժեշտ գաղափարախօսութեան և յստակ ռազմավարութեան: Ժողովրդային շարժման տարերային ալիքը հսկայ մեծամասնութեամբ մը օժտեց մեր երկրի այս նոր իշխանութիւնը: Մեծ և պատմական պատեհութիւն մըն էր՝ ասիկա իշխանափոխութիւնը իսկական յեղափոխութեան վերածելու և երկիրը տանելու նոր վերելքի և գերազանցութեան: Մեծ պատեհութիւն մը՝ կառուցելու հայ ազգային համաձայնութեան հզօր միջնաբերդը և հաւաքագրելու հայութեան կարողականութիւնները ամէն կողմէ: Կասկած չկայ, որ այդ բոլորին սկզբնական դրսևորումները մենք տեսանք իշխանափոխութեան առաջին ամիսներուն և ողջունեցինք խանդավառութեամբ: Փաստը այն է, որ, առանց դոյզն վերապահութեան, Դաշնակցութիւնը ինքզինք դրաւ իշխանութեան տրամադրութեան տակ և կարևոր պատասխանատուութիւններ վերցուց իր ուսերուն:

Ցաւ ի սիրտ կը հաստատենք սակայն, որ այս իշխանութեան գործի տարերոյթը (dynamics) երկիրը տարաւ բոլորովին այլ և յաճախ մեր երկրի

գերագոյն շահերուն անյարիր ուղղութիւններով: Ի՞նչ պատահեցաւ: Վաղուան պատմաքննութիւնը շատ բան ունի ընելիք իրադարձութիւններու ծալքերը բացայայտելու տեսակէտէն: Փաստը այն է, որ իշխանական մեծամասնութեան քաղաքական վարքագիծը արագօրէն այլասերեցաւ՝ հետզհետէ ծնունդ տալով ամբողջատիրական մտայնութեամբ յագեցած ներկայ վարչաձևին, և իրական հողի վրայ անկիրարկելի դարձուց եռեակ իշխանութեանց տարանջատութեան գործընթացը: Այլ խօսքով՝ խախտեցան հիմերը երկրի ժողովրդավարական կարգերուն: Քաղաքական բանավէճը կանգ առաւ: Խորհրդարանական ընդդիմութիւնը կորսնցուց իր քաղաքական արժէքը: Արտախորհրդարանական ընդդիմութիւնը դուրս քշուեցաւ մտքերու փոխանակութեան ասպարէզէն և ենթարկուեցաւ քաղաքական շրջափակումի: Եւ հսկայ մեծամասնութեամբ գործող իշխանութիւնը (փոխան ազգային համերաշխութեան) ծնունդ տուաւ պառակտուած քաղաքական դաշտի մը, որ բոլորովին անպատրաստ էր ազգային մեծ ճգնաժամը համապատասխան ներուժով դիմագրաւելու:

Ըսուի թերևս, որ անպատրաստ էր ամբողջ աշխարհը վարակի մարտահրաւէրին դիմաց, և ՀՀ իշխանութիւնը կարելի չէ այպանել այդ բանին համար: Ճիշդ է, կարելի չէ այպանել որևէ պետութիւն «ջրհեղեղ»ի աղէտին համար, և այդ չէ, որ քննարկման տակ է այսօր: Քննարկման տակ է ղեկավարութեան խնդիրը երկրի ճգնաժամերուն հակազդելու իր ստուգանիշներով: Համավարակի առաջին օրերուն իսկ Դաշնակցութիւնը (իբրև արտախորհրդարանական ուժ) ձեռնարկեց կացութեան ամբողջական արժևորման և ձևաւորեց իր հակաճգնաժամային ծրագիրն ու զայն դրաւ իշխանութեան տրամադրութեան տակ: Ան նաև կոչ ըրաւ իշխանութեան մէկդի դնելու քաղաքական տարակարծութիւնները և մէկտեղուելու համաճարակը յաղթահարելու ազգային առաջնահերթութեան շուրջ: Խլացուցիչ էր լռութիւնը իշխանութեան ոլորտէն: Ոչ մէկ լուրջ արձագանգ: Ոչ մէկ փորձ՝ քաղաքական այլակարծութեան տեղ տալու: Զայն լսելու: Թեկուզ առարկայական հակաճառութեան սիրոյն երկխօսութեան տեղ բանալու:

Կ՚արձանագրենք այս դառն փաստերը և կ՚անցնինք մեր բուն նիւթին:

Հակառակ իրենց աղիտալի հետևանքներուն՝ համաճարակները անցողակի երևոյթներ են: Կասկած չկայ, որ այս դաժան հոլովոյթն ալ պիտի հասնի իր անխուսափելի աւարտին: Հարց է, թէ ան իր աւարտին պիտի հասնի իր գերյագեցման կէտին հասնելէ՞ետք միայն, թէ՞ զայն կանխող գիտակ միջոցառումներով: Հոս է, որ կրկին կը դրուի ղեկավարութեան խնդիրը: Մէկ բան յստակ է այսօր: Երկիրը կորսնցուցած է թանկագին ժամանակ: Երկիրը մսխած է կենսական միջոցներ: Համավարակը արդէն իսկ իր բաժինը գանձած է «կանխիկ»: Ան այրած է ժամանակի թանկագին շերտ մը քանի մը սերունդներու կենսագրութենէն: Աղէտը մեր տուներուն մէջն է թէ՛ այսօրուան և թէ՛ վաղուան հաշւոյն:

Հետևաբար մենք կը գտնուինք երկու զուգահեռ հրամայականներու առջև միաժամանակ: Մեր խնդիրն է զինուիլ կանխարգելիչ ռազմավարութեան նոր և ազդու զէնքերով, բայց նաև անյապաղ պատրաստուիլ վաղորդայնի մարտահրաւէրներուն: Եւ այդ երկուքը անկախ չեն իրարմէ: Անոնք այսօր իսկ կը պայմանաւորեն զիրար: Մեր խնդիրն է այսօրուընէ սկսեալ կերտել յղացքը վերակառուցման գործին, որ պարտադիր կը դարձնէ, որ իշխանութիւնը դուրս գայ իր խոզակէն: ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՐԸ ՆՈՐ Է, ՈՐ ՊԻՏԻ ՍԿՍԻ, ԵՒ ՄԵՐ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է ԲԱՆԱԼ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ:

Հայ անկախ պետականութիւնը պիտի մտնէ նոր դարաշրջան: Պիտի մտնէ նոր գործիքներով: Պիտի մտնէ գոյաձևաւորման նոր ու հզօր զինարանով: Պիտի մտնէ նոր թափով և նոր համարձակութեամբ, իր կեանքի վաղուան կենսականութիւնները իրագործելի տեսնելու նո՛ր ներուժով: Համավարակը շատ մեծ է ՀՀ քաղաքական ուժերէն ամէն մէկուն համար առանձին: Բայց ան շատ փոքր է մեր երկրի քաղաքական ուժերու միասնական կամքին դիմաց, որ կամքն է մեր ժողովուրդին: Նոյն տրամաբանութեամբ համավարակին յաջորդելիք խնդիրները մեծ են և անյաղթահարելի մեզմէ ամէն մէկուն համար: Եւ առաջին հերթին՝ իշխանութեա՛ն: Մենք պարտաւոր ենք կրկին լսելու Եղիշէ Չարենցի հզօր պատգամը: Մենք պարտաւոր ենք ստեղծելու այնպիսի հաւաքական ուժ, որուն լիարժէքօրէն ստորադասուին մեր բոլոր մարտահրաւէրները:

Դաշնակցութիւնը այս հրաւէրն է, որ կ՚ուղղէ իշխանութեան և քաղաքական բեմի բոլոր ուժերուն: Ընթացիկ գործի (business as usual) օրերը վաղուց սրբուած են մեր կեանքէն: Այն, ինչ ճիշտ էր երէկ, այսօր այլևս չունի այժմէութիւն: Այն, ինչ սխալ էր երէկ, անսերելի է այսօր: Այն, ինչ անկարելի էր երէկ, այսօր արդէն չունի գոյութեան իրաւունք: ԵԿԱԾ Է ԺԱՄԱՆԱԿԸ ԱՋԳՈՎԻՆ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՈՐ ՆՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽԸ ՄԵՆՔ ՄԻԱՄՆԱԲԱՐ ԲԱՑՈՒԱԾ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ԲՈԼՈՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ, ԲՈԼՈՐ ՎԱԽԵՐԸ, ԲՈԼՈՐ ԿԱՍԿԱԾՆԵՐԸ, ԲՈԼՈՐ ՆԵՂՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՏՆԱԿՈՒՆ ԸՆԵԼՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՎՃՌԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ:

Ասիկա մեր հաւաքական պայմանագիրն է մեր երկրի բոլոր ներկայ և ապագայ սերունդներուն հետ: Մեր պայմանագիրն է մեզի հետ՝ որպէս ազգի: Մեր պատմութեան հետ և մեր լինելիութեա՛ն: Ասիկա մեր ազգային ուխտն է՝ մեր քաղաքակրթութեան նոր գրոհը միասնաբար ճամբայ հանելու: Թող ամէն մէկը այսօր իսկ հարց տայ ինքզինքին՝ ինք պատրա՞ստ է պատմութեան այս ձեռնոցը ասպետօրէն վերցնելու:

Որակական փոփոխությունն անխուսափելի է

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Վիգեն Բաղումեանի հետ

- Հարգելի՛ ընկեր Վիգեն, նախա-համաճարակային ամիսներին բավականին բուռն իրադարձություններ տեղի ունեցան Իրանի շուրջ: Նկատի ունեմ տարածաշրջանային հարցերը, ամերիկյան պատժամիջոցները, որոնք չընդհատվեցին անգամ, երբ համաճարակի պատճառով որոշակի զինադադար հաստատվեց ամենուր: Այդ քաղաքականությունը բացասական ազդեցություն էր թողնում Իրանի տնտեսության, ինչպես և հանրային տրամադրությունների վրա: Ներկայումս ինչպիսի՞ մթնոլորտ է Իրանում ներքին ու արտաքին խնդիրների առնչությամբ, և կարելի՞ է ասել, թե համաշխարհային իրավիճակների բերումով, այսպես ասած, ժամանակավոր զինադադար է հաստատված արտաքին ճակատում:

- ԱՄՆի ներկայ վարչախումբը նոյնիսկ համաճարակից յետոյ պատժամիջոցները չդադարեցրեց: Ընդհակառակը՝ դրանք աւելի շեշտակի բնոյթ ստացան:

Այն, որ այս բազմամեայ ու բազմապիսի պատժամիջոցները անչափելի վնաս են հասցրել Իրանի տնտեսութեանը, և ոչ միայն, կասկածից վեր է:

Այն, որ կենսամակարդակը մի քանի անգամ անկում է արձանագրել, անհերքելի փաստ է:

Միայն մի օրինակ բերեմ: Անցնող 2-3 տարիների հետ համեմատած՝ նաւթի վաճառքի գները (զուտ արտադրական ծախսերը հանած) կիսուել են, իսկ արտահանման ծաւալները՝ 4-5 անգամ նուազել: Հետևաբար նաւթի վաճառքից ստացուած եկամուտը 8-10 անգամ անկում է արձանագրել: Սակայն, միւս կողմից, որոշակի բնագաւառներում Իրանին յաջողուեց ճարտարուեստական զարգացում ապահովել:

Լինելով մեծ ու հարուստ երկիր՝ այդ անկումը չի հանգեցրել սոցիալական սուր տագնապի, և կարելի է ասել՝ կեանքը քիչ թէ շատ բնականոն հունի մէջ է:

Արտաքին քաղաքականութեան և անվտանգութեան առումով Իրանի կարևորագոյն դաշնակիցները ՌԴն և Չինաստանն են: Այդ առումով, եթէ անակնկալներ չլինեն, ապա դժուար թէ ռազմական ծանր գործողութիւնների դուռ բացուի, յատկապէս նկատի առնելով նաև Իրանի հզօր ռազմական ենթակառոյցները, Արևմուտքի դաշնակից և Իրանի հարևանութեամբ գտնուող երկրների խոցելիութիւնը, ինչպէս նաև տարածաշրջանում բազմաթիւ դաշնակից խմբաւորումների անվերապահ հաւատարմութիւնը Իրանին:

- Չինաստանից հետո համաշխարհային համավարակը կարծես թե ամենից ուժեղ հարվածեց Իրանին: Նախնական տպավորություն էր, թե այս երկիրը կունենա մեծագույն կորուստներ, և մեծ հարց էր թվում, թե իշխանությունները որքանով ունակ կլինեն վերահսկելիության շրջանակում պահելու իրավիճակը: Իսլամական այս երկիրն աղետի դեմ պայքարում համեմատաբար լավ արդյունք և նվազ կորուստներ գրանցեց, քան աշխարհի ամենազարգացածը համարվող շատ երկրներ: Ինչ գործոններով կբացատրեք այս երևույթը:

- Դուք գիտէք, որ ամբողջ աշխարհում յայտարարուած թային տուեալները կորուստների և յատկապէս վարակուածների մասին 100 տոկոսով ճշգրիտ չեն:

Յաճախ խնդիրը ոչ թէ թաքցնելը կամ կեղծելն է, ինչը Արևմտեան որոշ շրջանակներ խարդախօրէն փորձում են վերագրել իրենց մրցակից պետութիւններին, այդ թւում՝ նաև Իրանին, այլ տուեալների ճշգրիտ գնահատման, զեկուցման, կենտրոնացման ու համակարգման շղթայում թոյլ տրուած վրիպակներն են, նաև առողջապահական ու բժշկական արդիական միջոցների անբաւարար քանակն ու որակը:Հետևաբար կարծում եմ՝ դեռևս հնարաւոր չէ կանխատեսել վերջնական պատկերը:

Այն, որ Իրանում այս կամ այն չափով կարելին արուել է, համաձայն եմ, բայց բաւարար հետևողականութեամբ սահմանափակումները չեն պարտադրուել ու մարդկանց կողմից չեն յարգուել, յատկապէս ճամփորդութիւնների, մեծ ու

բազմապիսի ոչ ահրաժեշտ հաւաքների և հանրային փոխադրամիջոցների ապահով օգտագործման հետ կապուած: Ժամանակից շուտ արգելքներն ու սահմանափակումները զանց առնելը սխալ պատգամ է փոխանցում հանրութեանը և կարող է կացութիւնը անվերահսկելի դարձնել՝ հասկանալով հանդերձ տնտեսութեան վերաշխուժացման հետ կապուած անհերքելի մտահոգութիւնները:

- Ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում Իրանի հայկական կազմակերպությունների և մասնավորապես ՀՅԴ-ի ու վերջինիս ուղեկից կառույցների կողմից այս դժվարին օրերին հայկական համայնքներին աջակցելու գործում:

- Իրանահայ համայնքը ղեկավարւում է աշխարհագրական բաժանման հիմունքով պատմութեան ընթացքում ձևաւորուած երեք նմանատիպ կառոյցների միջոցով՝ Թեհրանի, Իսֆահանի (Նոր Ջուղա) և Թաւրիզի թեմական կառոյցներով: Սրանցից իւրաքանչիւրը ունի իր իշխանութիւնը՝ Պատգամաւորական ժողովը, և դրանից բխած գործադիր մարմինը՝ Թեմական խորհուրդը: Ամբողջապէս համայնքի անդամների քուէներով ընտրուած այս երեք կառոյցները, գործելով միմեանցից անկախ, մտնում են Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանու ներքոյ:

ՀՅԴ տեղական մարմինները կարևոր դերակատարութիւն ունեն սոյն կառոյցների գործունէութեան մէջ ընդհանրապէս, ինչպէս նաև համաճարակի պայմաններում կարիքաւոր զանգուածին աջակցութիւն հասցնելու գործում: Կարելի է ասել՝ համայնքի կարիքաւոր հատուածին ուղղուած օժանդակութիւնների աշխատանքը մեծ չափով կենտրոնացած է Թեմական խորհուրդներում: Գոյութիւն ունեն նաև բարեսիրական, եկեղեցական, կանանց և այլ միաւորներ, որոնց մի մասը նորից կապուած է և զեկուցում է ազգային երեք առաջնորդարաններին:

Հասցէագրուած օժանդակութիւնները գոյանում են համայնքում հանգանակութիւններ կազմակերպելով, ինչպէս սփիւռքեան միւս համայնքներում, հաշուի առնելով այն իրողութիւնը, որ մեր կառոյցները առանձնաբար եկամուտի այլ աղբիւրներ չունեն: Միևնոյն ժամանակ առայժմ համայնքում դադարեցուել են մարզական, մշակութային և հասարակական միջոցառումները, եկեղեցական արարողութիւնները:

- Գաղտնիք չէ, որ Հայաստանում, ի դեպ նաև Իրանում, հայությունը շատ զգայուն է հայ-իրանական հարաբերությունների հարցում: Սա բնական է, եթե նկատի ունենանք Իրանի՝ որպես հարևան ու բարեկամ երկրի կարևորությունը մեզ համար: Ինչ վիճակում են ներկայումս այդ հարաբերությունները, որքանո՞վ է շարունակվում փոխադարձ վստահության վրա հիմնված գործակցությունը: Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացի առիթով վերջերս ցույց տեղի ունեցավ Իրանում Հայաստանի դեսպանատան դիմաց: Այս երևույթը քննարկվեց հայաստանյան տարբեր շրջանակների կողմից: Շատերը սրա մեջ Հայաստանին ուղղված նախազգուշական ուղերձներ տեսան: Նաև այս միջադեպին անդրադարձեք խնդրեմ ձեր պատասխանի մեջ:

- Ոչ միայն որպէս հարևան ու բարեկամ երկիր, այլև որպէս ելք դէպի արտաքին աշխարհ: Սա շատ կարևոր հանգամանք է: Հաշուի առնելով մեր հարևաններից երկուսի խիստ թշնամական դիրքը ՀՀ նկատմամբ՝ Իրանը և Վրաստանը հանդիսանում են մեր 2 բնական ելքերը՝ բոլոր առումներով, այն տարբերութեամբ, որ Իրանը, լինելով շատ աւելի հզօր, ունի առաւել անկախ քաղաքականութիւն և ենթակայ չէ սրա-նրա, այդ թւում՝ Թուրքիայի ճնշումներին: Նաև Իրանը Հայաստանի հետ ունի (քիչ արտայայտուած, բայց իրական) հասարակաց աշխարհաքաղաքական շահ, այն է՝ արգելակել պանթուրքիզմի ագրեսիան, որը սպառնում է ոչ միայն Հայաստանին, այլև Իրանին:

Այս բոլորը մեզ յուշում են Իրանի հետ յարաբերութիւնների խիստ զգայուն լինելու մասին:

Իմ գնահատմամբ՝ Իրան-Հայաստան յարաբերութիւնները բարեկամական են և փոխվստահութեան հիմքի վրայ կառուցուած: Գոյութիւն ունի երկու կարևոր հանգամանք, որոնք կարող են խաթարել տարիների ընթացքում ձևաւորուած լաւ յարաբերութիւնները: Առաջինը Հայաստանի Հանրապետութեան չափից աւելի թեքումն է դէպի Արևմուտք, և երկրորդը Իսրայէլի հետ կապերը հզօրացնելու որոշումն է:

Հետաքրքիր է՝ Իսրայէլի հետ դիւանագիտական կապերը հաստատուել են 1992 թ.՝ Լևոն Տէր-Պետրոսեանի օրոք, իսկ հիմա յարաբերութիւնների մակարդակի բարձրացման խնդիրը մէջտեղ է նետուում Նիկոլ Փաշինեանի վարչապետութեան ժամանակներում: Արդեօք սա պէ՞տք է վերագրել

ՀՀՇ-իմքայլական միասնութեան մէջ Իսրայէլի համախոհների ակտիւ ներկայութեան: Հարցն այն է, որ ո՛չ անցեալում և ո՛չ էլ այսօր սոյն յարաբերութիւններից մեզ շահ չկայ: Ընդհակառակը՝ այն կը վշտացնի Իրանին և արաբ-իսլամական որոշ շրջանակներին:

Բայց լիայոյս եմ, որ գոնէ այս հարցով ողջախոհութիւնը կը յաղթի, և Իրան-Հայաստան կապերը կը մնան անխախտ, ու երկկողմ շահերն ապահովող բարեկամական մթնոլորտը չի վտանգուի:

- Ոչ պակաս կարևորություն են ներկայացնում

Հայաստանի հարաբերությունների բնույթն ու որակը Սփյուռքի հետ: Հայաստանի ներկա իշխանություններն այդ հարաբերությունների և գործակցության աստիճանը նախարարության մակարդակից իջեցրին հանձնակատարի մակարդակի: Խնդրում եմ՝ գնահատեք Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ներկա վիճակը, Հայաստանի վերաբերմունքը և իրականացվող քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ:

- Ճիշտ էք, նախարարութիւնը յանձնակատարի գրասենեակով փոխարինելը ոչ մի դրական բան չի ենթադրում, ընդհակառակը՝ փաստում է այս իշխանութիւնների սխալ պատկերացումներն ու թերագնահատումը: Անկախ այս քայլից՝ իշխանութիւնների կիրառած քայլերում նկատելի է մի անընդունելի միտում:

Նրանք Սփիւռքը պատկերացնում են կամ ցանկանում են տեսնել գոյութիւն ունեցող կայացած կառոյցներից դուրս՝ հնարաւորինս շրջանցելով դրանք: Կառոյցներ, որոնք մի քանի տասնեակ տարիների կենսագրութիւն ունեն և գրեթէ միակ դերակատարն են եղել համայնքների՝ Սփիւռքի կազմաւորման գործում: Ազգային առաջնորդարաններ, կուսակցութիւններ, Հայ դատի կառոյցներ, մշակութային, բարեսիրական, կրթական, մարզական և այլ հիմնարկներ, որոնք այսօր կազմում են մի ամբողջական կուռ համակարգ:

Այդ շրջանցման քայլերին զուգահեռ՝ իշխանութիւնները փորձում են աճեցնել իրենց դրածոներին: Սա ևս պառակտման տանող գործելաոճ է: Ապարդիւն: 30 տարուայ մէջ փորձուած, բայց արագ յետ քաշուած քայլեր: Պէտք է ասել՝ մի՛ քանդէք եղածը, նորը չէք կարող սարքել: Այս ոճով Սփիւռքը ևս նոյն ճակատագրին կարժանացնէք, ինչ Հայաստանը: Բոլորս կը տուժենք, բայց դուք հաստատ չէք շահի:

- Համաժողովրդական խանդավառության ալիքի վրա Հայաստանում իշխանության եկած կառավարող ուժը օրեցօր կորցնում է իր հեղինակությունը: Սրան զուգահեռ սրվում է ներքաղաքական մթնոլորտը, ավելի ու ավելի շատ ձայներ են լսվում այն մասին, որ ներկա իշխանությունը ոչ միայն ունակ չէ իր խոստացած բարեփոխումներն իրականացնելու, այլև նորանոր վտանգներ է ստեղծում կայացման ընթացքի մեջ գտնվող հայոց պետականության համար: Այս մտահոգությունների շուրջ իր գնահատականներն է հնչեցնում նաև Դաշնակցության ղեկավարությունը: Ինչպե՞ս կմեկնաբանեք ստեղծված իրավիճակը:

- Այո՛, դժբախտաբար, բոլոր որոշումներն ու ջղաձգումների պայմաններում արձակուած հրահանգները, չհամապատասխանելով խոստացուած բարեփոխումների ոգուն, հանգեցրին լիակատար ձախողման:

Հենց սկզբից մի կողմ դրուեց շարժման «թաւշեայ» բնոյթը: Սկսուեցին կրքոտ հետապնդումներ՝ ոչ թէ հիմնուած օրէնքի և անկողմնակալութեան վրայ, այլ թիրախաւորուած: Քինախնդրութիւնը փոխարինեց լայնախոհ արդարամտութեանը: Յետոյ սկսուեց պառակտման գործընթացը, ապա՝ ազգայինին յարուածելու քաղաքական գիծը: Ամբողջ երկու տարի անձնակենտրոն գործելաոճը երկիրը հասցրեց միապետութեան սեմին: Սա ոչ ոքի համար ցանկալի վերջաբան չէ, բայց հասել է մի տեղ, երբ որակական փոփոխութիւնն անխուսափելի է:

Հայաստանի Սահմանադրության 213-րդ հոդվածի փոփոխության իրավաքաղաքական հարցերի շուրջ

Արծվիկ Մինասյան

Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո պարբերաբար հետապնդվում էր դատական իշխանությունը քաղաքական իշխանությանը ենթարկելու հարցը: Քաղաքական մեծամասնությունը, շահարկելով ժողովրդի լայն աջակցությունը, որը զերզգացական պայմաններում Ազգային ժողովի ընտրություններում Նիկոլ Փաշինյանի ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առանցքի շուրջ ձևավորված «Իմ քայլը» դաշինքին տվել էր 70 % և ավելի ձայն, պարբերաբար պնդում էր, որ դատական համակարգը չի վայելում ժողովրդի վստահությունը: Որպես ժողովրդի վստահության մարմնավորող նրանք նկատի ունեն իրենց՝ կառավարությանը, Ազգային ժողովի մեծամասնությանը և անշուշտ Նիկոլ Փաշինյանին: Որպես վստահության դրսևորում նրանք պահանջում էին դատական իշխանության անմնացորդ նվիրվածություն և դատավճիռների կայացում այն անձանց նկատմամբ, որոնք, ըստ իշխանությունների, հանցագործներ են և պետք է պատասխանատվության ենթարկվեն: Իշխանության համար հարյուրերորդական են արդարադատության հիմնարար սկզբունքները և մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Եթե իշխանությունը հայտարարում է, որ այս կամ այն անձը հանցագործ է, ուրեմն դատական իշխանության և իրավապահ մարմինների գործունեության նպատակը պետք է լինի կազմել մեղադրականը և դատապարտել այդ անձանց, ընդ որում՝ ոչ թե ըստ էության դատաքննության հիման վրա, այլ ի սկզբանե խափանման միջոցն ընտրելու պահից: Սա է պատճառներից մեկը, որ Հայաստանում հանրային հնչեղություն ունեցող քրեական հետապնդման դեպքերում ամենից հաճախ կիրառված խափանման միջոցը հենց կալանավորումն է:

Այսպիսի պայմաններում բոլոր այն դատարաններն ու դատավորները, որոնք կարող են ընդդիմանալ այս կատեգորիկ պահանջին, արժանանում են քաղաքական իշխանության և անձամբ Նիկոլ Փաշինյանի անարգանքին: Վերջինս կարող է կոչով և ցուցումով կազմալուծել դատարանների ու դատավորների աշխատանքը՝ կազմակերպելով դատարանների շրջափակում: Ընդ որում, գործադրվող միջոցառումները կախված են նաև քննվող գործի բնույթից և մեղադրվող անձից: Հատկապես այն դեպքում, երբ խոսքը Հայաստանի երկրորդ նախագահի մասին է, որին Նիկոլ Փաշինյանը հռչակել է դարի հանցագործ, զսպվածության որևէ դրսևորում և բառապաշարի ու գործողության որևէ սահմանափակում չի գործում: Ընդհակառակը՝ խրախուսելի են այն բոլոր մեթոդներն

ու միջոցները, որոնք ավելի շատ կցուցադրեն երկրորդ նախագահի և վերջինիս շրջապատի նկատմամբ կիրառվող դաժանությունը: Իսկ այն դատավորներն ու դատարանները, որոնք կփորձեն իրավունքի գերակայության սկզբունքը գործադրել ու արդարադատություն իրականացնել և կարող են որոշակի առումով շեղվել կույր դաժանության չափանիշից, իշխանության համար դառնում են նախկին հանցավոր ռեժիմի սպասարկուներ և անցանկալի անձինք, ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատասխանատուներ:

Սա է այն հիմնական դրդապատճառը, որն իրականում քաղաքական իշխանությանը մղում է ամեն գնով ազատվելու դատական համակարգի անցանկալի անձանցից: Դրա արտահայտման առավել ցայտուն օրինակը Սահմանադրական դատարանի նախագահից և իր կողմից չնշանակված դատարանի անդամներից ազատվելու՝ մեկ տարուց ավելի ձեռնարկված գործողություններն են: Հակահիրավական տարբեր մեթոդների անարդյունք գործադրումից հետո (դատարանների շրջափակում, Սահմանադրական դատարանի նախագահի և նրա մերձավորների նկատմամբ քրեական հետապնդումներ, Սահմանադրական դատարանի դատավորների նկատմամբ սպառնալիքներ, նրանց օրինական կերպով կաշառելու փորձեր, վարկաբեկման կազմակերպված արշավներ, անցանկալի դատավորներից ազատվելու համար ապօրինի հանրաքվեի առաջադրում ու կորոնավիրուսի պատրվակով դրա կասեցում և այլն) քաղաքական իշխանությունը որոշեց դիմել հայոց անկախ պետականության պատմության մեջ դեռևս չլսված ու չտեսնված ապօրինության: Մի քանի

ժամվա ընթացքում քաղաքական մեծամասնությունը միայնակ փոփոխության ենթարկեց Հայաստանի Հանրապետության մայր օրենքը՝ Սահմանադրությունը: Շտապողականության թիվ մեկ պատճառը, անշուշտ, առնչվում է Սահմանադրական դատարանում քննարկվող գործերից մեկին, որը հայտնի է որպես Ռոբերտ Քոչարյանի հարցը կամ, որ առավել ճիշտ է, քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության՝ Հայաստանի Սահմանադրության համապատասխանության հարցի քննարկումը: Խնդիրն այն է, որ Սահմանադրական դատարանը այս հարցով դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Վենետիկի հանձնաժողովին՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար: Այս երկու կառույցներից էլ ստացվել էին կարծիքներ, որոնց համադրումն ակնհայտորեն վկայում էր, որ Սահմանադրական դատարանի որոշումը մեծ հավանականությամբ կփաստեր, որ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը, դրան իրավակիրառ պրակտիկայում տրվող մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրությանը: Իսկ սա կնշանակեր, որ շուրջ երկու տարի հասարակությանը կեղծ թեզերով սնուցած քաղաքական թիմն ու նրան պաշտպանող իրավական հարցերով աջակիցները կոպտագույն սխալ են թույլ տվել: Հետևաբար չեղարկելու համար այս հնարավոր զարգացումը քաղաքական իշխանությունը գնաց մեկ օրվա ընթացքում (22.06.2020 թ.) Սահմանադրությունը հակասահմանադրական, հակաքաղաքական, ժողովրդավարական կանոնների կոպիտ խախտմամբ փոխելու տարբերակի գործադրմանը: Անգամ արհամարհվեց նույն իշխանության խնդրանքով Վենետիկի հանձնաժողովից պատշաճ տեսակետ ստանալու նախաձեռնությունը, որի մասին իր կարծիքում նշեց այս հանձնաժողովը:

Այսպիսով, քաղաքական իշխանությունը որոշել էր ամեն գնով, մի քանի օրվա ընթացքում հասնել իր նպատակին՝ ազատվել Սահմանադրական դատարանի իր համար անցանկալի դատավորներից և դատարանի նախագահից: Արհամարհելով Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգը՝ իշխանությունը Սահմանադրության փոփոխության տեքստը ոչ միայն չուղարկեց Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությամբ ամրագրված նախնական սահմանադրական վերահսկողությունը պատշաճ իրականացնելու համար, այլև նույն օրը փոփոխության ենթարկեց նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը՝ զրկելով հանրապետության նախագահին Սահմանադրության տեքստը ստորագրելու և հրապարակելու լիազորությունից: Բացի այդ՝ նույն քաղաքական մեծամասնությունը, որ ամիսներ առաջ սահմանադրական խախտումներով որոշել էր 2020 թ. ապրիլի 5-ին հանրաքվեի միջոցով փոխել Սահմանադրության նույն հոդվածը՝ առանց նույնիսկ ձևական առումով այդ որոշումը վերացնելու, այս անգամ որոշեց փոփոխել Սահմանադրության նույն հոդվածը, այս դեպքում՝ այլ ձևակերպմամբ և արդեն որպես Ազգային ժողով: Այս ամենը, սակայն, միայն ընթացակարգային առումով, մինչդեռ բովանդակային տեսանկյունից նույնպես Սահմանադրության փոփոխված 213-րդ հոդվածը պարունակում է բազմաթիվ խութեր և իրավական պետության սկզբունքները ոտնահարող ձևակերպումներ:

Ի՞նչ է ներկայացնում Սահմանադրության 213-րդ հոդվածը:

Նախ նշենք, որ 213-րդ հոդվածը Սահմանադրության անցումային դրույթներից է, կարգավորում է դատական իշխանությանը վերաբերող սահմանադրական հոդվածների ուժի մեջ մտնելու պահին և դրանից հետո Սահմանադրական դատարանի նախագահին և անդամներին վերաբերող հարցերը: Մինչև փոփոխություն կատարելը հոդվածում նշված էր. «Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար Հանրապետության նախագահը, դատավորների ընդհանուր ժողովը և Կառավարությունը»: Ընդ որում, այս ձևակերպման առաջին նախադասության միտքն ամրագրված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածում, որին առանձին անդրադարձ կկատարենք փոփոխության վերլուծության և իրավական հակասությունների բացահայտման բաժնում:

Մի քանի ժամվա ընթացքում փոփոխության ենթարկված 213-րդ հոդվածը վերաձևակերպվել է այսպես.

«1. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված և Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի պաշտոնում ընդհանուր տևողությամբ ոչ պակաս, քան 12 տարի պաշտոնավարած Սահմանադրական դատարանի անդամի (դատավորի) լիազորությունների ժամկետը համարվում է ավարտված, և պաշտոնավարումը դադարում է:

2. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամը, որի պաշտոնավարումը չի դադարում սույն հոդվածի 1-ին մասի ուժով, շարունակում է պաշտոնավարել որպես Սահմանադրական դատարանի դատավոր մինչև այդ պաշտոնում նրա պաշտոնավարման 12 տարին լրանալը՝ հաշվի առնելով նաև մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը որպես Սահմանադրական դատարանի անդամ պաշտոնավարած ժամկետը:

3. Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար

առաջադրումները կատարում են հաջորդաբար Կառավարությունը, Հանրապետության նախագահը և դատավորների ընդհանուր ժողովը: Սույն հոդվածի 1-ին մասի հիմքով առաջացած՝ Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղերի համար առաջադրումները կատարվում են թափուր տեղն առաջանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարումը դադարում է: Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվում է Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով, որն իրականացվում է Սահմանադրական դատարանի դատավորների՝ սույն հոդվածի 1-ին մասի հիմքով առաջացած թափուր տեղերը համալրելուց հետո»: Փորձենք դիտարկել այս փոփոխությունները մի քանի տեսանկյունից:

Սահմանադրության փոփոխության ընդունման իրավականության մասին

Այս փոփոխությունը, ինչպես նշեցինք, չուղարկվեց Սահմանադրական դատարան, այն դեպքում, երբ Սահմանադրության 168-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրության փոփոխության նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանը լիազորված է կայացնել որոշում՝ արդյոք առաջարկվող փոփոխությունը համապատասխանում է Սահմանադրությանը: Այս լիազորությունը բխում է Սահմանադրական դատարանի կարգավիճակից՝ ապահովել Սահմանադրության գերակայությունը և իրականացնել նախնական սահմանադրական վերահսկողություն: Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ Սահմանադրության փոփոխության հարցով Սահմանադրական դատարան է դիմում Ազգային ժողովը: Մինչդեռ քաղաքական մեծամասնությունը՝ «Իմ քայլը» խմբակցությունը, քվեարկությամբ հատուկ մերժեց Սահմանադրական դատարան Սահմանադրության փոփոխությունները ներկայացնելու առաջարկը: Այս գործողությամբ քաղաքական մեծամասնությունը, փաստորեն, Ազգային ժողովին զրկեց իր սահմանադրական պարտականությունը կատարելուց, պարտադրեց շրջանցել Սահմանադրական դատարանը, ինչպես նաև զրկեց վերջինիս իր սահմանադրական պարտականությունները և հակակշիռ լինելու գործառույթը կատարելուց: Այս քայլը մտածված էր ի սկզբանե, քանի որ քաղաքական մեծամասնությունը քաջ գիտակցում էր, որ այս փոփոխությունները բազմաթիվ հակահիրավական դրույթներ են պարունակում: Սահմանադրության փոփոխությունը դատարան չներկայացնելու պատճառն էր այն, որ քաղաքական մեծամասնությունն առաջնորդվում էր քողարկված հրատապությամբ, և այն, որ իբր Սահմանադրական դատարանը չի կարող իր անդամների վերաբերյալ հարց քննարկել կեղծ հիմնավորմամբ: Խախտվեցին նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսված օրինականության և 4-րդ հոդվածով սահմանված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքները:

Այս խախտումները, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն, համարվում են առանձնապես ծանր հանցագործություններ, որոնց համար նախատեսված են ազատազրկման տեսքով պատիժներ՝ 10-15 տարի ժամկետով:

Իրավունքի վերաբերյալ միջազգային սկզբունքներին համապատասխանության մասին

Ինչպես նշեցինք, Սահմանադրության անցումային դրույթ համարվող 213-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը, այսինքն՝ 2018 թ. ապրիլի 9-ը ընտրված անդամների և նախագահի պաշտոնավարմանը: Այս դրույթի նպատակն է ապահովել դատարանի գործունեության շարունակականությունը և դատավորների անկախության երաշխավորությունը: Սրանք միջազգային չափորոշիչներ են: Դրանց մասին նշվում է ինչպես միջազգային հիմնարար փաստաթղթերում, այնպես էլ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքներում: Մինչդեռ ընդունված փոփոխությունը հակասում է դատարանի և դատավորի անկախության միջազգային ընդունված սկզբունքներին, ինչպես նաև չի համապատասխանում միջազգային իրավական փորձաքննության առաջարկներին:

Ինչո՞ւ է Սահմանադրության անցումային դրույթը կարևոր

Սահմանադրության 213-րդ հոդվածի դրույթներին համանման դրույթներ սահմանված են նաև Սահմանադրության անցումային մյուս հոդվածներում՝ սահմանադրական այլ մարմինների ու պաշտոնատար անձանց համար: Օրինակ՝ գլխավոր դատախազի, դատավորների և դատարանների ու Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, համայնքների ղեկավարների և ավագանու անդամների, մարդու իրավունքների պաշտպանի, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի անդամների, Կենտրոնական բանկի խորհրդի անդամների համար սահմանված են նույնական անցումային դրույթներ: Սա տրամաբանական է, քանի որ Սահմանադրության

ամբողջությամբ ուժի մեջ մտնելը չի կարող խաթարել պետական իշխանության բնականոն գործունեությունը: Ընդհակառակը՝ անցումային դրույթները, ներառյալ Սահմանադրական դատարանին վերաբերող դրույթը, ապահովում են այդ անցնցում անցումը: Հետևաբար անցումային բոլոր դրույթները պետք է դիտարկել համակարգային կապով պայմանավորված մեկ ամբողջության մեջ: Սակայն ընդունված փոփոխությունը վերաբերում է միայն Սահմանադրական դատարանին և այն էլ այն անդամներին, որոնք, ըստ էության, ընտրվել են (նշանակվել են) Հայաստանում ոչ ներկայումս իշխող քաղաքական ուժի կողմից: Ավելին, բացի անձնավորված քաղաքական շահադիտությունից, որևէ ողջամիտ բացատրություն չի տրվում Սահմանադրական դատարանի գործող կազմը փոփոխելու հարցում քաղաքական իշխանության շտապողականությանը: Սա ակնառու է, քանի որ արդեն իսկ ձևավորվել է սահմանադրական առավել լայն փոփոխություններ մշակող հանձնախումբ: Այսինքն՝ առաջարկվող փոփոխությունը հակահամակարգային է: Ավելին՝ այն անձնավորված և խիստ քաղաքականացված է, ինչը չի համապատասխանում դատական համակարգի ինքնուրույնության հիմնարար սկզբունքին:

Կամակատար Սահմանադրական դատարան ունենալու հնարավոր նպատակների ու ազդեցությունների մասին

Ինչպես նշեցինք, արագընթաց փոփոխության հիմնական շարժառիթը քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով սպասվելիք Սահմանադրական դատարանի որոշումն էր: Փոխելով Սահմանադրական դատարանի անդամների մեծ մասին՝ օրվա իշխանությունը կանխում է նաև այս զարգացումը: Բացի այդ, նկատի առնելով Սահմանադրական դատարանի լիազորությունները, մամուլում ներկայացված հրապարակումները և քաղաքական իշխանության ներկայացուցիչների ջղաձիգ

կեցվածքը, կարող ենք ողջամտորեն կասկածել, որ հնազանդ Սահմանադրական դատարան ունենալն անհրաժեշտ է ինչպես անմեղության կանխավարկածն արհամարհող, աղմկահարույց քրեական գործերով քաղաքական պատվերն իրավական ուղեկցմամբ սպասարկելու համար, այնպես էլ այնպիսի հարցերի, որոնք կարող են առնչվել Արցախին, հայ-թուրքական հարաբերություններին, պետության կառավարման սահմանադրական կարգին և/կամ ազգային արժեհամակարգերին: Սա այն դեպքում, երբ երկրի ներկա վիճակը, պայմանավորված կորոնավիրուսի համավարակի և արտակարգ դրության առկայությամբ, բացարձակապես անհարիր է իրավական և քաղաքական նոր ճգնաժամերի առաջացմանը: Բացի այդ՝ գաղտնիք չէ, որ քաղաքական գործընթացները, հատկապես դատական իշխանության ներքաշմամբ, ներդրումային բարձր ռիսկերի ցուցիչներ են: Հետևաբար այսպիսի քաղաքական ակտիվության պայմանները կասեցնում են տնտեսության ոլորտում ներդրումները, ավելորդ սպասողականություն են ձևավորում տնտեսվարող սուբյեկտների մոտ, անվստահության մթնոլորտ է ձևավորվում քաղաքական կայունության առումով և այլն: Ուստի քաղաքական իշխանության այսպիսի արկածախնդրությունը երկիրը կանգնեցնում է անհաղթահարելի իրավիճակի առաջ:

Սահմանադրության փոփոխության իրավական անհստակությունների և հակասությունների մասին

Ինչպես վերը տեսանք, Սահմանադրության 213-րդ հոդվածը մինչև փոփոխությունը կազմված էր երկու մասից: Առաջին մասն իրացվել է 2018 թ. ապրիլի 9-ին և ըստ էության, սպառել է իր կարևոր գործառույթը՝ ապահովել է Սահմանադրության՝ ամբողջությամբ ուժի մեջ մտնելու անխոչընդոտ անցումը: Հետևաբար, երբ փոփոխվում է արդեն իսկ իրացված իրավական նորմը, անհասկանալի է, թե ինչ հետևանքների է հանգեցնելու նոր կարգավորումը, հատկապես վատթարացնող իրավանորմի հետադարձ ուժի կիրառման արգելքի գործադրման պայմաններում: Մասնավորապես որո՞նք են 2018 թ. ապրիլի 9-ից մինչ օրս պաշտոնավարած Սահմանադրական դատարանի դատավորների կողմից կայացված որոշումների իրավական հետևանքները, ինչպե՞ս և ի՞նչ ծավալներով են իրացվելու նրանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված սոցիալական երաշխիքները և այլն:

Երկրորդ մասով սահմանված էր, որ Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելու պահից, այսինքն՝ 2018 թ. ապրիլի 9-ից հետո, Սահմանադրական դատարանի դատավորների առաջադրումը կատարվելու էր հետևյալ հաջորդականությամբ՝ հանրապետության նախագահ, դատավորների ընդհանուր ժողով և Կառավարություն: Հարկ է արձանագրել, որ 2018 թ. ապրիլի 9-ից հետո այս հոդվածը մի քանի անգամ կիրառվել է: Այսպես, հանրապետության նախագահի կողմից մի քանի անգամ առաջադրվեցին Սահմանադրական դատարանի

անդամի թեկնածուներ, որոնց քաղաքական մեծամասնությունը մերժեց, ապա պարտադրեց Վահե Գրիգորյանի թեկնածությունը, վերջինիս ընտրեց Սահմանադրական դատարանի անդամ, ով իրեն հռչակեց Սահմանադրական դատարանի նախագահ: Դատավորների ընդհանուր ժողովը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրելու իր իրավասությունը իրացրեց 2018 թ. սեպտեմբերի 18-ին, երբ ընտրվեց Արման Դիլանյանը, որը, թեև ընտրվել է նախորդ խորհրդարանի կողմից, բայց ներկա քաղաքական իշխանության համար ընդունելի է: Եթե չլիներ փոփոխությունը, ապա Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուի առաջադրման հերթը Կառավարությանն էր, որը, ի դեպ, Սահմանադրական դատարանի՝ մինչև փոփոխությունը առկա կազմի պայմաններում կհասներ 2021 թ. հունվար, երբ լրանալու է պաշտոնավարման համար նախատեսված փոխնախագահ Ալվինա Գյուլումյանի տարիքը: Այսինքն՝ 213-րդ հոդվածի երկրորդ մասը մինչև փոփոխվելը գործել է և երկու դեպքում կիրառվել: Ընդունված փոփոխությամբ փոխվել է նաև այս կարգավորումը, և հաջորդականության առումով առաջ է բերվել Կառավարության առաջադրման հերթը: Այսինքն՝ բավական չէ, որ փոխվում է թեկնածուի առաջադրման հերթականությունը, նոր կարգավորման համաձայն, ըստ էության, նախատեսվում է մի ժամանակահատված, երբ երկիրը չի ունենա իրավազոր Սահմանադրական դատարան և դատարանի նախագահ (անկախ ժամանակահատվածից՝ կազմալուծվում է սահմանադրական արդարադատության համակարգը): Նոր կարգավորման մեկ այլ խառնաշփոթ էլ առաջանում է, երբ դիտարկում ենք փոփոխության 1-ին և 4-րդ մասերը՝ համադրելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի հետ: Փոփոխության 1-ին մասում նշվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված և Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի պաշտոնում ընդհանուր տևողությամբ ոչ պակաս, քան 12 տարի պաշտոնավարած Սահմանադրական դատարանի անդամի (դատավորի) լիազորությունների ժամկետը համարվում է ավարտված, և պաշտոնավարումը՝ դադարած: Նույնը վերաբերում է սահմանադրական փոփոխությունների 4-րդ մասում նշված ՍԴ նախագահին: Իսկ արդեն սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները 12 տարվա ժամկետը լրանալուց հետո շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Այսինքն՝ ստացվում է, որ սահմանադրական օրենքի և Սահմանադրության փոփոխությունների միջև առկա է առերևույթ հակասություն, որպիսի փաստը պետք է հաստատվի Սահմանադրական դատարանի կողմից: Այնուամենայնիվ, քանի դեռ առկա է այս հակասությունը, Սահմանադրական դատարանի գործող նախագահը և դատավորներն ունեն առարկայորեն հաստատված իրավունքներ, ինչպես նաև դրանց խախտման դեմ պայքարի լիակատար պաշտպանության իրավունք: Այս իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով, ինչպես նաև հստակ ներկայացված է աշխատանքային ու վարչական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Վերջին առումով չափազանց կարևոր է նաև ամրագրել, որ նկարագրված չէ, թե Սահմանադրության փոփոխության հիմքով դատարանի անդամի լիազորությունների դադարեցումը ինչպես է հաստատվում, ինչ իրավական ակտով, որ պահից և այլն: Այս բոլորը իրավական առումով անորոշ են, հետևաբար նաև չարաշահումների տեղիք են տալիս և դատավորների իրավունքների խախտման համար պարարտ հող են ստեղծում: Ի վերջո, ըստ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, դատավորի թափուր տեղերի առաջանալու մասին պաշտոնական ծանուցման պահը հստակ սահմանելը չափազանց կարևոր է թափուր տեղերի համար թեկնածուներ առաջադրող իրավասու մարմինների համար, քանի որ նրանց համար օրենսդրությունը սահմանել է կոնկրետ ժամկետներում պարտադիր կատարման գործողություններ, որոնք ճշգրիտ կերպով չկատարելը հանգեցնում է սահմանադրական նոր խախտումների: Այսպիսով՝ հապճեպ իրականացված փոփոխությունը չի բավարարում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին, որն անշուշտ չէր լինի, եթե Սահմանադրության փոփոխությունը ներկայացվեր և ընդունվեր Սահմանադրությամբ սահմանված կանոններին համապատասխան:

Այնուամենայնիվ, Սահմանադրության փոփոխության ամբողջական իրականացումը, ըստ էության, հանգեցնելու է Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության նոր կազմի ձևավորմանը, և այն կքաղաքականացվի (կկուսակցականացվի): Սա կրում է անընդհատ բնույթ՝ հակասելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման, դատական իշխանության ապակուսակցական (ապաքաղաքական) լինելու միջազգային, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքներին:

Ամփոփելով արձանագրենք, որ այս խնդիրներն արդյունք են քաղաքական իշխանությունների անհեռանկար, նեղ անձնական ու խմբային շահերն ազգային-պետական շահերից վեր դասելու անթաքույց գործողությունների: Պետական իշխանության յուրացման և սահմանադրական կարգն առերևույթ տապալելու այս գործողությունները, ցավոք սրտի, ստվեր են նետում հայոց պետականության ներկա ընթացքի վրա: ■

Դաշնակցության պատասխանատվության պահը

Արա Նոռանյան

Հայ քաղաքական մտքի կազմակերպական ձևավորման շրջանում, 19-րդ դարի վերջին, հայ ժողովրդի տվյալ ժամանակի լավագույն զավակները հիմնադրեցին հայկական կուսակցությունները: Իրենց կյանքը հայ ազատագրական պայքարին, իսկ այնուհետև պետականության կերտմանը նվիրած մարդիկ ստացել էին լավագույն կրթություն, առաջադեմ էին, ունեին լայն աշխարհայացք, հավակնություններ և մեծ երազանք:

Դաստիարակությունը, կրթությունը, գիտելիքը, կազմակերպական ունակությունները, աշխարհում սեփական տեղը հիմնավորապես զբաղեցնելու վճռականությունն ու ազգային հոգեկերտվածքն ապահովեցին ոչ միայն Առաջին հանրապետության ծնունդը, այլ նաև անկախության երկու տարիների աննախադեպ ծրագրերի մեկնարկը:

Այսօրվա հայացքով աներևակայելի է այն ամենը, ինչ նախաձեռնել էին համաճարակի, հազարավոր փախստականների, սովի ու պատերազմի պայմաններում անկախ պետականության փորձ չունեցող նվիրյալները 1918-1920 թվականներին՝ կրթությունից ու քաղաքաշինությունից մինչև բանակաշինություն և արտաքին քաղաքականություն: Սա իսկապես ոգեշնչման և հիացմունքի աղբյուր է ժամանակակից սերնդի համար: Չէ՞ որ վերջին 30 տարվա այս տեղապտույտը մշտապես հիմնավորվում է պատերազմով, դրա հետևանքներով, ԽՍՀՄ փլուզումով, շրջափակումով, երիտասարդ պետություն լինելու հանգամանքով, միջազգային դավադրություններով, ընդդիմության խոչընդոտելով, բնական պաշարների սակավությամբ, աղքատ պետություն լինելով և այլն: Մեղավոր են բոլորն ու ամեն ինչ՝ բացի իշխանություններից և իրական պատասխանատուներից:

Անկախության կորստով պայմանավորված նոր իրականությունը փոխեց Հայ Յեղափոխական Դաշնակցության առջև դրված խնդիրները: Երկիրը Խորհրդային Միության մաս էր, սակայն հայ քաղաքական միտքը նույնիսկ այդ պայմաններում չէր կարող հրաժարվել իր ազգային ծրագրերից և ի նպաստ հայության գործելու առաքելությունից: Կուսակցությունը հստակ տարանջատում էր ազգային և օրվա իշխանությունների շահերը: Իշխանություններն անցողիկ են, իսկ Հայաստանի ու հայ ազգի շահերը՝ վեր ամեն ինչից: Գտնվելով աշխարհաքաղաքացիական կոմունիստական գաղափարախոսությանը հակադիր ճամբարում՝ ազգային և ընկերվարական Դաշնակցությունը տասնամյակներ շարունակ հսկայական աշխատանք տարավ հայապահպանության, օտար պետություններում հայ ժողովրդի և եկեղեցու իրավունքների պաշտպանության, Հայ դատի և պահանջատիրության հարցերում:

1990թ. կազմակերպական կառույցի բացահայտումից

և Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալելուց հետո, նույնիսկ ՀՀՇ-ական իշխանության տարիներին ենթարկվելով բազմաթիվ հալածանքների (1992թ.՝ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանի արտաքսումը հայրենիքից, Ընդհանուր ժողովի անցկացմանը խոչընդոտելը, 1994-1995 թթ.՝ կուսակցականների ձերբակալությունները, կուսակցության գործունեության կասեցումը, գրասենյակների ջախջախումը, գույքի բռնագրավումը, լրատվամիջոցների արգելքը և այլն), Դաշնակցությունը ակտիվորեն ու վճռականորեն մասնակցեց Արցախյան ազատամարտին, տարբեր եղանակներով շարունակեց աջակցությունը Հայաստանին՝ ռազմականից մինչև հումանիտար օգնություն, ինչպես նաև լոբբիստական աշխատանք արտաքին աշխարհում:

Երկրորդ նախագահի օրոք ՀՅԴ-ն իշխանության հետ համագործակցության շրջանակում մաս կազմեց կառավարությանը: Քանի որ արտաքին քաղաքականությունն ավելի մոտ էր ազգային ուղեգծի վերաբերյալ Դաշնակցության մոտեցումներին, խորացվեցին կապերը Սփյուռքի հետ, բարելավվեց բնակչության սոցիալական վիճակը և այլն, սակայն մշտապես առկա էին տարաձայնություններ կադրային քաղաքականության, մասնավորեցումների, հակակոռուպցիոն պայքարի, քաղաքական և ընտրական գործընթացների հարցերում և այլն: Հստակ գիտակցելով բազմաթիվ ոլորտներում փոփոխությունների անհրաժեշտությունը՝ Դաշնակցությունը մասնակցությունը իշխանությանը դիտարկում էր որպես ճանապարհ, որը թույլ կտար քայլ առ քայլ իշխանություններին մղելու սահմանադրական, ընտրական, քաղաքական, սոցիալական, ժողովրդավարական և այլ բարեփոխումների:

2008 թ. Դաշնակցությունը չաջակցեց ապագա երրորդ նախագահի թեկնածությանը և ընտրություններին առաջադրեց սեփական թեկնածուին, իսկ 2009 թ. «ֆուտբոլային» դիվանագիտության պատճառով դարձավ արմատական ընդդիմություն՝ ակտիվորեն պայքարելով հայ-թուրքական արձանագրությունների

դեմ: Այդ ժամանակաշրջանը լի էր իշխանության հետ տարբեր հարցերի շուրջ հակասություններով, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական ոլորտում (կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում, հարկաբյուջետային քաղաքականություն և այլն), սակայն վերջին տարիներին հայ-թուրքական արձանագրությունների չեղարկման շուրջ երկխոսությունը և խորհրդարանական կառավարման անցման սահմանադրական փոփոխությունները բարենպաստ միջավայր ստեղծեցին համագործակցության համար:

Դաշնակցությունը նաև աջակցեց 2018 թվականի ժողովրդական շարժմանը, մաս կազմեց անցումային կառավարությանը և պատրաստակամություն հայտնեց իր բոլոր կարողություններով նպաստելու հին արատների վերացմանն ու նոր՝ ավելի արդար երկրի կառուցման գործին: Այստեղ նույնպես ունենալով լուրջ տարաձայնություններ իշխող քաղաքական խմբավորման առաջնորդի հետ՝ Դաշնակցությունն առաջնային համարեց ժողովրդի և պետության շահը՝ տարանջատելով այն իշխանության շահից: Պատահական չէ, որ ՀՅԴ ղեկավարները, բազմաթիվ հարցերում ունենալով քննադատական վերաբերմունք գործող իշխանության հանդեպ, միաժամանակ մի քանի անգամ նշել են, որ հանուն ազգային խնդիրների լուծման և պետության շահի պատրաստ են աջակցելու Հայաստանի իշխանությանը:

Սույն հոդվածը նպատակ չունի վերլուծելու Դաշնակցության համագործակցությունը տարբեր տարիների իշխանությունների հետ կամ անդրադառնալու նրանց հետ ունեցած այս կամ այն սկզբունքային տարաձայնությանը: Խնդիրն այլ է: ՀՅԴ-ն, անկախ քաղաքական դաշտում սեփական դիրքավորումից, մշտապես հայտարարել է, որ իր համար տարբեր են իշխանությունն ու պետությունը, և պատրաստ է աջակցելու պետությանը՝ անկախ օրվա իշխանություններից: Սակայն այս մոտեցումը թելադրում է անդրադառնալ մի շարք խնդիրների:

Ակնհայտ է, որ նման կեցվածքը հանգեցնում է դժվարությունների հասարակության հետ հարաբերություններում: Հայաստանի ընտրողները ցանկանում են տեսնել պարզ ու հստակ քաղաքական դիրքորոշում, և հաճախ նրանց հասկանալի չէ, թե ինչպես կարող է կուսակցությունը լինել իշխանության մաս, սակայն ունենալ ընդդիմադիր կեցվածք բազմաթիվ հարցերում կամ լինել ընդդիմադիր, սակայն մի շարք հարցերում աջակցել կառավարությանը՝ սկսած արտերկրում զորավիգ լինելուց մինչև հակահամավարակային հակաճգնաժամային ծրագրի ներկայացումը (որն իշխանությունն այնուամենայնիվ անտեսեց, իսկ սեփական քաղաքականությունը ձախողեց):

Այս ամենն իսկապես հանգեցնում է վատ հասկացվածության Հայաստանի քաղաքացիների մոտ: Այլ էր վիճակը, երբ Հայաստանն անկախ պետություն չէր, և բազմաթիվ խնդիրներ Սփյուռքում ընկալվում էին որպես ազգի առջև ծառացած պատմական մարտահրավերներ: Բոլորովին այլ է խնդիրն անկախ երկրի քաղաքական համակարգի դեպքում, երբ կուսակցությունը քաղաքական կյանքի և ընտրական գործընթացների ակտիվ մասնակից է: Վերը նշված խնդիրը գուցե այլ կերպ է ընկալվում Սփյուռքի հայրենակիցների կողմից, սակայն Հայաստանում դժվարընկալելի է լինել իշխանություններին ընդդիմադիր, սակայն աջակցել նրանց արտերկրում:

Սա հանգեցնում է նաև տարբեր կողմերից կուսակցության պիտակավորմանը:

Երբ դա բխում է իրենց շահերից, մյուս ընդդիմադիր ուժերը ընդդիմադիր ՀՅԴ-ին ներկայացնում են որպես կեղծ ընդդիմություն, որը «գործարքի» մեջ է օրվա իշխանության հետ, իսկ իշխանությունը թմբկահարում է «երկու դաշնակցությունների» թեզը, քանի որ տեսնում է քննադատություն ներսում, սակայն ջերմ ընդունելություն դրսում:

Նույն խնդիրն առաջանում է, երբ ՀՅԴ-ն, մաս կազմելով կառավարությանը, քննադատում է իշխանության սխալներն ու արատները: Իշխանական զանգվածի համար կուսակցությունը մնում է ընդդիմադիր, իսկ ընդդիմադիր զանգվածի համար՝ մեղսակից և իշխանական: Որպես արդյունք՝ երկու կողմի համար էլ ոչ ընդունելի:

Եվ որքան էլ ՀՅԴ-ն ներկայացնի սեփական մեկնաբանությունը, Հայաստանի հասարակությունը և հայ ընտրողն այդ «անհասկանալի» դիրքորոշումը երբեք չեն ընդունել, չեն ընդունում և չեն ընդունելու:

Այս վիճակն իր հերթին ազդում է երկրում կուսակցության վարկանիշի և ընտրության արդյունքների վրա: Սա խնդիր է, որն օր առաջ պահանջում է հստակ լուծում:

Հաջորդ կարևորագույն հարցը վերաբերում է այլ քաղաքական ուժերի հետ համագործակցությանը կամ կոալիցիաների պայմաններում սեփական ծրագրերն իրագործելու հնարավորությանը: Հայաստանում գրեթե բոլոր կուսակցությունները պաշտոնապես հռչակված են ազատական: Իրականում նրանք հռչակում են իրենց այդպիսին զուտ հետխորհրդային պետություններում ձևավորված ավանդույթի ուժով: Այն ազատականությունը, որ կա Հայաստանում, որևէ կապ չունի արևմտյան աշխարհի ազատականության հետ: Այսպիսի երկրներում այն ստանում է կամ նեոլիբերալիզմի, կամ վուլգար ազատականության դրսևորում: Ձախակողմյան քաղաքական ուժեր, որպես այդպիսին, փաստացի չկան:

Նեոլիբերալ կամ վուլգար ազատական կուսակցությունների հետ համագործակցությունը խոչընդոտում և, ըստ էության, անհնարին է դարձնում ՀՅԴ ծրագրի իրականացումը:

Հայաստանում հասարակական, քաղաքական և նույնիսկ զուտ մարդկային հարաբերությունները շատ քաղաքականացված են: Եվ քանի որ շատերի համար քաղաքականությունը փոխկապակցված չէ սկզբունքայնության հետ, գործունեության շարժառիթը

ոչ թե գաղափարներն ու ծրագրերն են, այլ նեղ խմբային շահերը, որտեղ անկեղծ ու բաց խոսքը կամ արդար գնահատականները տեղ չունեն: Այնինչ հատկապես հանրային անձանցից մարդիկ կարիք ունեն լսելու հստակ դիրքորոշում լավի և վատի, ճշտի և սխալի, սևի և սպիտակի մասին: Պատճառը տասնամյակներ շարունակ լսած կեղծիքը և սուտն են, ինչից բոլորը հոգնել են: Մարդիկ ակնկալում էին անկախ Հայաստանում լսել արդարության, համերաշխության ու ճշմարտության մասին: Սակայն քաղաքական շահը մեր երկրում վեր է դասվել ճշմարտությունից, իսկ քաղաքական անձինք հաճախ խաբել են հասարակությանը: Յուրաքանչյուրը ներկայացրել է գնահատականներ, վերլուծություններ կամ դիրքորոշումներ բացառապես սեփական շահի տեսանկյունից: Ընդդիմության ներկայացուցիչը, որին հասարակությունը ճանաչում է որպես կոռումպացված անձ, կարող է խոսել արդարությունից ու ազնվությունից, իսկ երկրին վնաս տված պետական պաշտոնյան՝ վիրավորական գնահատականներ հնչեցնել հասարակության մեջ բարի համբավ ունեցող ազնիվ քննադատի հասցեին: Անկախությունից հետո ոչ միայն լավն ու վատը չտարանջատվեցին, այլև պետությունն ընկղմվեց օրեցօր բազմացող կեղծիքների հորձանուտի մեջ: Այն ընդգրկեց բոլոր ոլորտները՝ քաղաքականություն և մշակույթ, ընտրություններ և տնտեսություն, պարզ մարդկային հարաբերություններ կամ բիզնես: Հասարակությունը սկսեց ապրել իրականությունից կտրված հարթությունում: 2018 թվականին այդ կեղծ իրականությունը չփոխվեց: Ավելի խորացավ տոտալ կեղծիքը՝ ստանալով նոր դրսևորումներ և մսխելով արմատական ու համակարգային բարեփոխումների իրականացման հնարավորությունը: Անկախության տարիների բազմաթիվ քաղաքական իրադարձություններ, այդ թվում՝ ողբերգական կամ շրջադարձային, ներկայացվել են կեղծ լույսի ներքո և շարունակում են կեղծվել քաղաքական շահերից ելնելով: Հազարավոր մարդիկ իրենց երևակայության մեջ ապրում են մի հուզական մթնոլորտում, որը դարձնում է նրանց կառավարելի: Հաճախ քաղաքացիները չեն զգում՝ ինչպես են փոխում սեփական տեսակետները

հրամցված հիմարությունների և տարիներ շարունակ կրկնվող առասպելների ազդեցությամբ: Հոկտեմբերի 27, Մարտի 1, 2018 թ. իշխանափոխություն, տարբեր իրադարձություններում օտարերկրյա պետությունների ազդեցություն և այլն... Այս և բազմաթիվ այլ հարցեր դարձել են քաղաքացիների ուղեղների լվացման և նոր կաղապարների ձևավորման ամուր հենապյուներ:

Հայ հասարակությունը (իսկ այսօր վստահաբար կարող ենք ասել, որ նաև Սփյուռքի զգալի մասը), ապրելով կեղծ իրականության մեջ, կտրվեց պետության իրական խնդիրներից:

Հայաստանը կարիք ունի քաղաքական ուժի, որը, անտեսելով օրվա քաղաքական շահն ու խնդիրը, կասի ժողովրդին ճշմարտությունը: ՀՅԴ-ն պարբերաբար փորձել է դա անել, սակայն, վերը նշված հարցերի պատճառով չընկալվելով հասարակության կողմից ունեցել է դժվարություններ՝ հասարակական կյանքում ստանձնելու վճռական դերակատարություն:

Փոխզիջումների ժամանակն անցել է: Այսօր հասարակության բոլոր անդամները, անկախ քաղաքական դիրքորոշումից, հոգու խորքում գիտեն, որ նույնիսկ իրենց ընտրած քաղաքական ուժը՝ իշխանական թե ընդդիմադիր, չունի երկրի զարգացման վճռական խոսք ասելու համար բավարար ներուժ:

Միակ քաղաքական կուսակցությունը, որն ունի գաղափարական, քաղաքական, մասնագիտական, կադրային, կազմակերպական և ֆինանսական անհրաժեշտ պաշարը՝ նոր մոդելով պետության կառուցումն առաջնորդելու և զարգացման արդիական ռազմավարություն կենսագործելու համար, Հայ Յեղափոխական Դաշնակցությունն է:

Արձանագրենք, որ.

- հայ իրականության ոչ մի քաղաքական ուժ խմբված չէ գաղափարի ու գաղափարախոսության շուրջ. բոլորը կա՛մ մեկ անձի շուրջ հավաքված, կա՛մ խմբային նեղ շահեր հետապնդող կուսակցություններ են,

- «ազատական», սակայն իրականում վուլգար լիբերալիզմի գաղափարակիրները չունեն ժամանակակից պետություն կառուցելու շատ թե քիչ ամբողջական ծրագիր և ռազմավարություն, իսկ նեոլիբերալները վաղուց ձախողվել են,

- ՀՅԴ քաղաքական և մասնագիտական կադրային բազան իր պատրաստվածությամբ գերազանցում է բոլոր քաղաքական կուսակցությունների ներուժը՝ միասին վերցրած,

- ցանկացած այլ կուսակցության իշխանություն Հայաստանում հանգեցնելու է քաղաքացիական հակամարտության և ներքին թշնամանքի: Միայն ՀՅԴ-ն կարող է համախմբել ու հանդարտեցնել հասարակության բոլոր շերտերը՝ առանց բաժանելու ու թշնամացնելու միմյանց:

Ժամանակն է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հայտ ներկայացնի և ստանձնի ամբողջական պատասխանատվություն երկրի ճակատագրի համար:

Միայն սեփական իշխանության օրոք ՀՅԴ-ն կարող

է վստահեցնել ժողովրդին, որ.

- վերադարձնելու է պետությանը կարգավորիչ գործառույթները և ստեղծելու է առողջ պետական համակարգ՝ զերծ քաղաքական կոռուպցիայից և հովանավորչությունից,
- չի խուսափելու անհրաժեշտության դեպքում պետական մասնակցությամբ ընկերություններ ստեղծելուց,
- վերացնելու է կուտակային կենսաթոշակային համակարգը,
- ներդնելու է պրոգրեսիվ հարկային համակարգ,
- նվազեցնելու է էներգետիկ և ջրային համակարգերի կորուստները,
- գործադրելու է վարձատրության միասնական համակարգ,
- սոցիալական քաղաքականությունն իրականացնելու է կենսապահովման նվազագույն բյուջեի հիման վրա,
- ոչ թե պաշտպանելու է օլիգարխիայի, ներկրողների կամ ֆինանսական շուկայի շահերը, այլ առաջնորդվելու է տնտեսության բոլոր ճյուղերի, որպես մեկ ամբողջության, շահերով,
- դադարեցնելու է բնապահպանական աղետը և հանքային պաշարների թալանը,
- ձևավորելու է գաղափարական բանավեճի և կիրթ երկխոսության վրա հիմնված քաղաքական համակարգ, որտեղ իշխանավորները չեն վախենա իշխանությունը կորցնելուց՝ առողջ քաղաքական գործընթացների արդյունքում,
- բանակն ու ուժային կառույցները ծառայելու են բացառապես պետությանն ու պետական շահին, այլ ոչ թե օրվա իշխանության քմահաճույքին:

Ժամանակն է՝ հասարակությունը պահանջի Դաշնակցությունից ամբողջական պատասխանատվություն: Դա կլինի, երբ ՀՅԴ-ն իշխանության անցնելու հստակ հայտ կներկայացնի, հստակ կդիրքորոշվի որպես ամբողջական ընդդիմություն և ապագա իշխանություն՝ ազատ որևէ կաշկանդումից ու որևէ պայմանավորվածությունից, և կգնա դեպի իշխանության ստանձնում: ՀՅԴ-ն, ի տարբերություն մեր տեսած չորս իշխանությունների, մինչև պատասխանատվություն ստանձնելը հստակ հռչակելու է իր ծրագրերը՝ բոլոր ուղղություններով, և իշխանության անցնելուց հետո առաջնորդվելու է իր նախընտրական ծրագրով: Գոնե մեկ անգամ երկիրը կարիք ունի տեսնելու սեփական ծրագրերն ու խոստումներն իրագործելու քաղաքական մշակույթ, որը խթանիչ ազդակ կլինի ողջ քաղաքական համակարգի առողջացման համար:

Անշուշտ, սույն գործընթացում կարող են ներգրավվել այլ քաղաքական միավորներ, որոնք ստիպված կլինեն ՀՅԴ-ին օրինակ և առանցք ընդունելով և իրենց հերթին առաջնորդվելով բարձր նշաձողով գնալ գաղափարականացման և ինստիտուցիոնալ կայացման ճանապարհով: Այնուամենայնիվ ապագա կառավարության և երկրի զարգացման գաղափարախոսության ու ծրագրի հիմքում պետք է լինեն Հայ Յեղափոխական Դաշնակցությունը և նրա ծրագիրը:

Ի վերջո, երեք տասնամյակ անց հայ ժողովուրդն իրավունք ունի ունենալու ազնիվ, գրագետ, կազմակերպված և լուրջ իշխանություն:

Իսկ եթե ընդհանուր համերաշխության կարգախոսի ներքո լինեն փոխզիջումներ, ապա կա վտանգ, որ հասարակությունը հերթական անգամ չի ընդունի կիսատ որոշումները և չի հասկանա շարժառիթները, քանի որ տարիներ շարունակ տեսել է այդ ամենի ցածր արդյունավետությունը: Դա հերթական անգամ կհանգեցնի խոր հիասթափության: Եվ ամեն նման հիասթափությունից հետո ավելի ու ավելի դժվար է լինելու սեփական հայրենիքի ու պետության հանդեպ ժողովրդի հավատի վերականգնումը:

Հայաստանին անհրաժեշտ է նվիրյալների այնպիսի սերունդ, որպիսին ավելի քան հարյուր տարի առաջ կերտեց Առաջին անկախ հանրապետությունը: Դա կլինի նաև մեր ժողովրդի լիակատար բարոյական հաղթանակը, որին կհաջորդի պետության հոգևոր, մշակութային, կրթական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և ռազմական վերելքը: ■

Հ. Այվազովսկի

Ներքաղաքական զարգացումները Հայաստանում

Վ.Հ.

Երկու տարի պահանջվեց, որպեսզի հասարակության զգալի մասը հասկանա, որ խաբված է այսօրվա իշխանությունների կողմից, որ նրանք ի զորու չեն կառավարելու պետությունը, զարգացնելու տնտեսությունը, կարգավորելու մարդկանց սոցիալական կյանքը, լուծելու երկրի արտաքին քաղաքական խնդիրները: Համաճարակն էլ վերջնականապես բացահայտեց նրանց անզորությունը՝ որպես կառավարողների: Հասարակության մեջ գնալով աճում է սոցիալական դժգոհությունը, մարում են ապագայի նկատմամբ եղած հույսերը: Հասարակության մեջ արդեն ձևավորվել և ընդլայնվում է մի շերտ, որը համամիտ է ընդդիմադիր քաղաքական-հասարակական այն գործիչների հետ, որոնք համոզիչ փաստարկներով հիմնավորում են, որ գործող կառավարության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը խարխլում է մեր պետության հիմքերը, և պահանջում են վերջինիս հրաժարականը:

Սկսված քաղաքական գործընթացը և դրա զարգացումները հասկանալու համար պետք է հաշվի առնել քաղաքական դաշտի ձևավորման յուրահատկությունները և դրանում ընդունված խաղի կանոնները:

Քաղաքական դաշտը ձևավորվել է 90-ականների սկզբներին՝ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների համար սոցիալիզմից կապիտալիզմ հեղափոխական անցումն իրականացնելու համար՝ արևմտյան ստանդարտների հաստատմամբ: Նախ անհրաժեշտ էր ապամոնտաժել խորհրդային համակարգը և դրա փոխարեն ստեղծել շուկայական տնտեսություն, սեփականատիրական նոր հարաբերություններ և դրանց համապատասխան իրավական համակարգ, ձևավորել ժողովրդավարական հասարակարգ: Երկու ճանապարհ կար սոցիալիստական համակարգից նորին անցնելու համար՝ կառավարելի, ասել է թե՝ ըստ մշակված ծրագրի, կամ անկառավարելի, այսինքն՝ ինքնահոսի թողնված: Առաջին ճանապարհը դժվար էր, քանի որ պահանջում էր գիտելիքներ, կամք, փորձ ունեցող կառավարիչներ: Մինչդեռ նոր իշխանությունների կազմում գրեթե բացակայում էին պետական կառավարման փորձ ունեցող, մասնագիտական բարձր գիտելիքներով, էլ

չենք ասում, ռազմավարական մտածողությամբ օժտված մարդիկ: Բնականաբար, նրանք ընտրեցին հեշտ ճանապարհը և թողեցին գործընթացը ինքնահոսի. ավելի հեշտ ու ձեռնտու էր քանդել, քան ստեղծել: Սրընթաց կերպով ապամոնտաժվեց արդյունաբերությունը, թալանվեց պետական սեփականությունը, հասարակության կյանքը կարգավորող ինստիտուտները դադարեցին գործառնելուց, անգործության մատնված և անպետք դարձած բազմահազար որակյալ մասնագետներ, գիտնականներ ստիպված լքեցին երկիրը: Մինչ Արցախում ընթանում էր ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանում հաստատվում էր տնտեսական ու ֆինանսական ներուժից զուրկ, աղքատացող բնակչությամբ, սաղմնավորվող օլիգարխիկ տնտեսությամբ մի պետություն:

Նշված գործընթացների հետևանքով փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը. մարդկանց բաժանում էին ոչ թե ըստ սոցիալական դիրքի, այլ ըստ պարզունակ բնութագրերի: Մարդկանց պահանջներն ու նպատակները որակական անկում ապրեցին՝ իջնելով մինչև կենսաբանական բնազդների բավարարման մակարդակի:

Արտաքին քաղաքականության բնագավառում նրանք միացան Հելսինկյան եզրափակիչ ակտին, միջազգային այլ կարևոր պայմանագրերի, սակայն չկարողացան դրանց շրջանակներում ձևակերպել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական շահերը, տեղն ու դերը միջազգային հարաբերություններում: Ուստի և ստիպված էին վարել պատեհապաշտական քաղաքականություն՝ հաճախ հետևելով

օտար քաղաքագետների ու դիվանագետների կասկածելի խորհուրդներին ու հորդորներին:

Ներքաղաքական դաշտը կառավարելու համար, ղեկավարվելով արևմտյան հիմնադրամների հրահանգներով, հաստատեցին օրենքներ և խաղի գրված ու չգրված կանոններ: Այդպիսով քաղաքական դաշտն առնվեց մի շրջանակի մեջ, որի շառավղի երկարությունը կարգավորվում էր իշխող կուսակցության ձեռքով: Այդ շրջանակում խաղի ընդունված կանոններին համապատասխան պետք է ձևավորվեր քաղաքական այնպիսի դաշտ, որում տեղ չպետք է գտնեին կամ առնվազն պետք է ենթարկվեին մշտական ճնշման և հետապնդումների այն կուսակցություններն ու քաղաքական գործիչները, որոնք հավակնում էին ներկայացնելու պետության զարգացման այլընտրանքային ծրագրեր, ազգային գաղափարախոսություն: Փոխարենը բուսնեցին տասնյակ կառավարելի կուսակցություններ, որոնք մեկը մյուսից տարբերվում էին միայն այս կամ այն օրվա խնդրի շուրջ բարձրացված (հաճախ պատվերով) աղմուկ-աղաղակով:

Գրանցվեցին բազմաթիվ աղանդներ և աղանդատիպ հասարակական կազմակերպություններ, որոնք գրեթե աննկատ աշխատում էին զոմբիացնել հազարավոր մարդկանց, որոնք ցանկացած պահի իրենց հոգևոր հովիվների կոչով պատրաստ կլինեին ցանկացած հանձնարարություն կատարելու (ինչպես, օրինակ՝ 2008 թ. մարտի 1-ին կամ 2018 թ. գարնանը):

Տարված քանդելու և յուրացնելու մոլուցքով՝

ՀՀՇ-ականները կանգ չէին առնում ոչնչի առաջ. ահաբեկում էին քաղաքական գործիչների, մարտական հրամանատարների, գործարարների, կեղծ մեղադրանքներով կուսակցություն էին փակում, ավերում գրասենյակներ, խմբագրություններ: Իսկ հաջորդ խորհրդարանական և նախագահական ընտրություններին նրանց կամայականությունները դարձան ժողովրդավարության բացահայտ ոտնահարման օրինակ:

ՀՀՇ-ական իշխանությունները և նրանց շրջապատը, ոգևորված իրենց անպատժելիությունից, լկտիացել էին այն աստիճան, որ ցինիկաբար հայտարարեցին, թե «իրենց դեմ խաղ չկա»: Բանը հասավ նրան, որ ՀՀՇ պարագլուխը, որը իշխանության էր եկել ղարաբաղյան շարժման ալիքի վրա, հայտարարեց, թե Ադրբեջանի հետ հակամարտությանը վերջ դնելու համար պետք է վերադառնալ զրոյական վիճակին և հանուն խաղաղության հանձնել Արցախը: Այսինքն՝ կոչ էր արվում բազմաթիվ զոհերի ու կրած զրկանքների գնով ձեռք բերած հաղթանակը հավասարեցնելու զրոյի ու մատնելու մոռացության՝ հանուն իրենց իշխանությունն ու հարստությունը խաղաղ վայելելու: Այս քայլը հանգեցրեց ՀՀՇ իշխանության տապալմանը: Չմոռանանք նշել, որ անցյալը մոռացության մատնելը ՀՀՇ-ի հաստատած և նրա ժառանգորդների կողմից վերահաստատված խաղի չգրված կանոններից է:

Մանրամասնորեն չանդրադառնալով դրանից հետո անցած քսան տարիներին՝ ուշադրություն դարձնենք միայն այսօրվա քաղաքական գործընթացները պայմանավորող երկու գործոնի վրա:

Երկրորդ նախագահը չտվեց քաղաքական գնահատական իր նախորդների գործունեությանը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, և հիմնավորապես չլուծեց պետական համակարգի կադրային հարցերը:

Երրորդ նախագահը իր թիմով նախաձեռնեց նոր Սահմանադրության ընդունումը՝ նպատակ ունենալով ավելի խորացնելու ժողովրդավարությունը, ապահովելու երկրի կայուն զարգացումը: Սակայն արդյունավետորեն գործառնելու համար Սահմանադրությունը պետք է ազգային դեմք ունենա, այսինքն՝ պետք է արտացոլի թե՛ տվյալ երկրի իրական հնարավորությունները և թե՛ տվյալ ժողովրդի

որոշակի նպատակները: Այնինչ մեր դեպքում «մարդ», «քաղաքացի», «ինքնիշխանություն», «ժողովրդավարություն», «սոցիալական պետություն» հասկացությունները համադրված չեն մեկ տրամաբանության մեջ, ձևակերպված չեն որպես հասարակական կեցության գաղափարախոսություն, ուստի և զուրկ են ներքին պարտավորեցնող այն մղումից, որը փաստաթուղթը կդարձներ մեր ժողովրդի կենսագործունեության հիմնական օրենք:

Եվ վերջապես՝ Սահմանադրությունն օրենքով «երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը»: Հայաստանում ժողովրդավարության և հասարակության քաղաքական մշակույթի ներկայիս վիճակում այս օրենքը դառնում է գործիք մեկ կուսակցության ձեռքում՝ իր իշխանությունը հաստատելու և վերարտադրելու համար: Համենայնդեպս, այս հանրապետության պատմության ընթացքում իշխանության եկած կուսակցությունը միշտ մեծամասնություն է կազմել:

Հիմնական գծերով բնութագրելով ՀՀԾ-ականների գործն ու գործելակերպը՝ դժվար չէ նկատել, որ դրանք գրեթե նույնությամբ կրկնվում են այսօրվա իշխանությունների կողմից: Դա հնարավորություն է տալիս քաղաքագետներին հասկանալու իմքայլականների վարքագիծը և կանխատեսելու նրանց քայլերը:

2008 թ. մարտի 1-ի չհաջողված փորձից հետո՝ 2018 թ. մայիսին, ՀՀԾ-ն հասավ ոևանշի: Ն. Փաշինյանը և «Իմ քայլը» դաշինքը Լ. Տեր-Պետրոսյանի ու ՀՀԾ-ի նոր հիպոստազը դարձան: Նրանց առջև դրված խնդիրը, ըստ էության, նույնն է՝ վերադարձնել Արցախը Ադրբեջանին և հաստատել խաղաղություն: Դրան հասնելու միջոցները ևս նույնն են՝ քայքայել պետությունն ու բանակը, ավերել երկրի տնտեսությունը, պառակտել ազգը, հետապնդել ու ջարդել ընդդիմության ողնաշարը: Այդ միջոցներից է նաև մեր արտաքին քաղաքականությունը զրոյից սկսելը՝ մոռացության մատնելով մինչև 2018 թ. մեր պատմությունը, հետևելով Ջ. Բոլթոնի խորհուրդներին՝ հիմնովին վերանայելու մեր աշխարհաքաղաքական շահերը և միջազգային հարաբերությունները:

Նոր Սահմանադրության շնորհիվ կայուն մեծամասնությունը և սուպեր վարչապետը իրենց կառավարությունով և ժողովրդի դեր կատարող վարձկաններով ինքնավերարտադրման անխափան մեխանիզմ ստացան: Բացի դրանից՝ Փաշինյանի թիկունքում կանգնած

որոշ արևմտյան գործիչներ կօժանդակեն նրան այնքան ժամանակ, մինչև որ նրա միջոցով կիրականացնեն իրենց նպատակները տարածաշրջանում: Ուստի նեոհիշականները մտադիր չեն հրաժարվել իշխանությունից:

90-ականների փորձը հուշում է, որ վերահաստատված ՀՀԾ-ական խաղի կանոնների շրջանակում ժողովրդավարական ճանապարհով հնարավոր չէ հասնել այս կառավարության հրաժարականին: Սակայն այդ նույն փորձը հուշում է նաև, որ հրաժարականը պետք է պարտադրվի, պարտադրվի որպես պատմական անհրաժեշտություն պետության և հայրենիքի առաջ իրենց պատասխանատվությունը գիտակցող քաղաքական ուժերի և սեփական մարդկային ու ազգային արժանապատվության համար պայքարելու պատրաստ բոլոր քաղաքացիների միասնական ճակատի կողմից:

Այսօր ընդդիմության շարքերում, ի տարբերություն 1998 թվականի, առավել քան շատ են փորձառու քաղաքական գործիչները, կառավարման փորձ ունեցողները, բարձր մակարդակի տնտեսագետները, իրավաբանները, որոնք ունակ են կազմելու անցումային կառավարություն, որը դուրս կբերի պետությունը այս վիճակից ու կնախապատրաստի Ազգային ժողովի իրապես ժողովրդավարական ընտրություններ: ■

Համահայկական տեսլականի տագնապը

Վիգեն Աբրահամեան

Հայաստանի վերանկախացումէն ի վեր բազմիցս հրապարակ իջած է Հայաստան-Սփիւռք կապերու բարելաւման և համակարգման խնդիրը: Տակաւին Հայաստան պաշտօնապէս չէր անկախացած՝ 1991ի ամռան, երբ Վազգէն Մանուկեանի կառավարութեան նախաձեռնութեամբ կայացաւ հայ գործարարներու առաջին համագումարը: Սկզբնական խանդավառութիւնը, շատ վառ երազներով, պիտի յանգէր սահմանափակ տարողութեամբ մի քանի իրագործումներու: Անոնցմէ գլխաւորն ու ամենաերկարակեացը «Հայաստան» համահայկական հիմնադրամն էր: Բազմաթիւ այլ փորձեր ալ եղան ընդլայնելու համար այդ համագործակցութեան ծիրը, որոնք, սակայն, համագումարներու բաժակաճառային բնոյթէն շատ անդին չկրցան անցնիլ: Նոյնիսկ Սփիւռքի նախարարութեան մը հաստատումը չկրցաւ էական բեկում մը մտցնել այդ յարաբերութիւններուն մէջ:

Հայաստան-Սփիւռք կապերու բարձրակէտը կրնանք համարել Եղեռնի 100ամեակի աշխատանքները, որոնք իրաւամբ համահայկական իրագործումի վերածուեցան, գուցէ այն պարզ պատճառով, որ անոնք յստակօրէն սահմանագծուած էին իրենց բնոյթով ու շրջածիրով և կ'արձագանգէին իսկապէս համազգային իղձերու:

Տարիներու ընթացքին առաջարկուած են բազմաթիւ մօտեցումներ՝ Հայաստան-Սփիւռք կապերու բարելաւման համար, որոնցմէ ոմանք, ինչպէս՝ Հայաստանի պետութեան կողմէ Սփիւռքի նախարարութեան մը հաստատումը, դրուած են գործադրութեան՝ թէական արդիւնքներով: Այդ առաջարկները ընդհանրապէս կը միտին այլազան բնագաւառներէ ներս՝ արհեստագիտական, մասնագիտական, կրթական և այլն, երկխօսութեան հարթակներ հաստատելու՝ յուսալով խթանել յարաբերութիւնները և փորձի ու գիտելիքներու փոխանակումները: Ընդհանրապէս այդ առաջարկներուն մէջ կ'ընդգծուին «մասնագիտական մօտեցում» ցուցաբերելու անհրաժեշտութիւնը, հաղորդակցութեան միջոցներու արդի զարգացումէն օգտուելու կարևորութիւնը, ինչպէս նաև կը շեշտուի ՀՀ պետականութեան առանցքային կարևորութիւնը: Նոյնիսկ առաջարկ կայ Սփիւռքի ներկայացուցիչներ ունենալու ՀՀ խորհրդարանէն ներս, կ'ենթադրեմ ներշնչուած Ֆրանսայի օրինակէն, ուր արտասահման բնակող քաղաքացիները կ'ընտրեն 11 երեսփոխաններ (Ֆրանսան 1948էն ի վեր ունէր նաև «Conseil supérieur des français de l'étranger» կոչուած 55 անդամ հաշուող ատեան մը, որ վերջերս վերանուանուեցաւ «Assemblée des français de l'étranger», և անդամներուն թիւը հասաւ 90ի): Իտալիան

նոյնպէս 12 երեսփոխանական և 6 ծերակուտական աթոռներ վերապահած է իր արտասահմանաբնակ քաղաքացիներուն:

Ֆրանսական և իտալական օրինակները անշուշտ ուսանելի են, սակայն անոնք չեն կրնար սպեղանի հանդիսանալ մեր ցաւին, որ տարբեր բնոյթի է: Անոնց ազգային պատկանելիութիւնն ինքնին այլ ակունքներէն կը բխի, կազմաւորման այլ ընթացք ունեցած է, և իրենց «կազմակերպ» սփիւռքները կը բաղկանան անհատներէ, որոնց մէջ տակաւին թարմ է հայրենիքը, մէկ կամ երկու սերունդ հազիւ անցած է, մանաւանդ որ անոնց սփիւռքները բացարձակ փոքրամասնութիւն են՝ համեմատած մայր երկրի բնակչութեան:

Երեք տասնամեակէ ի վեր ականատես ենք և ականջալուր համահայկական զանազան նախաձեռնութիւններու: Ամենայաջողները, ինչպէս, օրինակ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը, յաջող են, որովհետև յստակ և սեղմ նպատակներով ճամբայ ելած են և ունին ըստ հնարաւորին յստակ կառոյցներ, ինչպէս նաև իրենց բնոյթով իսկ կը յանգին շօշափելի, հաշուառելի արդիւնքներու: Սակայն մի քանի բացառութիւնները զանց առած՝ նախաձեռնութիւններուն մեծ մասը մնաց թուղթի վրայ: Բախտաւոր պարագային անոնք յանգեցան մի քանի հրապարակային հաւաքներու, «խորհրդակցական» և խորհրդանշական բնոյթի ձեռնարկներու: Նոյնիսկ Սփիւռքի նախարարութեան մը գոյութիւնը չկրցաւ շատ բան փոխել. հարցերը մնացին հոն, ուր որ էին երեք տասնամեակ առաջ:

Անշուշտ, պիտի առարկուի, որ ահագին

աշխատանք կատարուեցաւ ու կը կատարուի: Հիմնադրամէն բացի՝ բազմաթիւ նախաձեռնութիւններ («Շէն» կազմակերպութիւնը, Երևանի ամերիկեան համալսարանը, ծառատունկով զբաղուող ATP-ն, «Birthright Armenia»-ն, «Թիւֆէնքեան» հիմնարկութիւնը և այլն) յաջողած օրինակներ են, որովհետև կը լրացնեն նպատակի յստակութեան և սեղմութեան անհրաժեշտ չափանիշները: Սակայն ասոնցմէ և ոչ մէկը, նոյնիսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամը, չունի անհրաժեշտ նախադրեալները՝ դառնալու երկարաշունչ, մի քանի սերունդներու վրայ երկարող համահայկական ատեան: Այս ցանկէն դիտմամբ դուրս պահեցի Դաշնակցութիւնն ու իր ուղեկից կառոյցները. անոնց պիտի անդրադառնամ յառաջիկային:

Հիմնադրամի տկարութիւնը կու գայ իր կազմաւորման օրէն: Անոր կառոյցին մէջ մոռցուած է ներառել ժամանակի գործօնը: Իր Հոգաբարձուներու խորհուրդի, մանաւանդ տեղական վարչութիւններու կազմաւորումը կը ներկայացնէ 1991ի մեր խճանկարի լուսանկարը: Հոն ներկայացուած են զանազան կազմակերպութիւններ, որոնցմէ մէկ քանին այսօր չունին նոյն ուժականութիւնն ու տարողութիւնը, որ ունէին օրին, մէկ քանին նոյնիսկ անուանական գոյութիւն մը իսկ ապահովելու կարողութիւն չունին այլևս: Կեանքը լուսանկար չէ, այլ շարժանկար, ուր իրավիճակը անընդհատ փոփոխութեան ենթակայ է, երբեմն արագ, երբեմն դանդաղ, բայց երբեք քարացած:

Մնացեալը սեղմ շրջանակներու կողմէ տնօրինուած կառոյցներ են՝ փակ բաժնետիրական ընկերութիւններու նման, առանց իրաւասու լայն անդամակցութեան, և կը կատարեն իրենց տնօրէններու կամքը՝ անկախ ազգային

հրամայականներէն: Այդ գծով ամենապերճախօս օրինակը Բարեգործականն է (ՀԲԸՄ), որ առանց երկար-բարակ քննելու փակեց Մելքոնեանը և այլ վարժարաններ՝ հակառակ բարձրացուած միահամուռ բողոքներուն: Բարեգործականի Կեդրոնական վարչութիւնը համարատու է միայն զինք ենթադրաբար ընտրող պատգամաւորական ժողովին, որուն պատգամաւորներու ընտրութեան կարգը համաշխարհային մեծ «գաղտնիքներէն» է, նոյնիսկ Էջմիածնի Ազգային եկեղեցական ժողովի կազմութեան խորհրդաւորութիւնը գերազանցող:

Համահայկական ուժականութեան հունաւորումը ի նպաստ ազգի հաւաքական բարգաւաճման և հզօրացման նախ և առաջ կ'ենթադրէ այդ ուժականութեան կազմակերպուածութիւնը: Աղեքսանդր Մակեդոնացին իր փոքրաթիւ ուժերով կրցաւ ծունկի բերել Աքեմենեան կայսրութիւնը, որովհետև մակեդոնական ուժերը աւելի յաջող կազմակերպուած էին, փաղանգներու բաժնուած և ռազմադաշտին վրայ շատ աւելի ճկուն էին, քան հակառակորդը: Հռոմ աշխարհին տիրեց իր համեմատաբար փոքրաթիւ լեգէոններով, որոնք ալ աւելի յաջող կազմակերպուած էին, քան մակեդոնական փաղանգները: Առանց կազմակերպուածութեան՝ հաւաքականութիւնը կը մնայ ամբոխ՝ ընդունակ միայն հաւաքներու և ցոյցերու, մինչ, ինչպէս վերջին երեք տասնամեակները ցոյց տուին, բուն աշխատանքը կը կատարէ կազմակերպ փոքրամասնութիւն մը՝ ռազմադաշտին վրայ թէ այլուր: Զանգուածային գործի համար, զանգուածին կուտակային մարդոյժը լաւագոյնս օգտագործելու և առաւելագոյն արդիւնքներու համար անհրաժեշտ է հաւաքականութիւնը կազմակերպել:

Այստեղ է Հայաստան-Սփիւռք կոչուած գորդեան հանգոյցի հիմնական խնդիրը: Որպէսզի հայութիւնը իր հայրենաբնակ և սփիւռքաբնակ զանգուածներով դառնայ այն բոունցքը, որուն մասին մեր բանաստեղծները անընդհատ կ'երգեն, պէտք է բարելաւել անոր կազմակերպուածութեան մակարդակը: Ուժը առանց կազմակերպութեան չի կրնար գոյութիւն ունենալ:

Սակայն ինչ որ անկախութենէն ի վեր տեսանք (և որ ինքնին կրկնութիւնն էր 1920ականներէն 1960ականներ ժամանակաշրջանի համայնավար ձախաւեր փորձերուն), Հայաստանի իշխանաւորներու յարաճուն ձգտումն է՝ ունենալու հլու-հնազանդ Սփիւռք մը, որ պիտի գար ամբողջացնելու հլու-հնազանդ հայաստանաբնակ զանգուածը: Այդ ձգտումը միշտ առկայ է, երբեմն շեշտուած, երբեմն տկար, սակայն Հայաստանի ոևէ իշխանաւոր միշտ ալ ինքզինք կը պատկերացնէ Ամենայն հայոց թագաւոր և Հայաստանի համայնավար վարչահրամայական սովորոյթներով կը փորձէ վերաբերիլ նաև Սփիւռքի հետ: Այս էր

դրուածքը առաջին նախագահի օրերուն, քիչ մը նուազ զգալի՝ երկրորդին ու երրորդին մօտ։

Ներկայի «առաջին» վարչապետը, ըստ երևոյթին, աւելի հակուած է առաջին նախագահին ուղիով քալելու և առանձին բաւականութեամբ կը շեշտէ, թէ «Սփիւռքի 10 տոկոսն է սփիւռքեան կազմակերպութիւնների տրամաբանութեան մեջ, իսկ 90 տոկոսը դուրս է մնացել այդ կառուցուածքային տրամաբանութիւնից» (20 ապրիլ 2020, ֆէյսպուքեան ուղիղ եթեր), ճիշտ այնպէս, ինչպէս տասնամեակներ շարունակ համայնավարները կը սիրէին շեշտել, թէ Դաշնակցութիւնը կամ Կիլիկեան աթոռը կամ առհասարակ ոևէ կառոյց, որ իրենց չէր ենթարկուեր, մահամերձ է կամ մահացած։ Նոյնիսկ մի քանի անգամ Դաշնակցութեան թաղումն ալ յայտարարեցին՝ հոգեճաշով հանդերձ։ Պատմութիւնը, իհարկէ, այլ ելք ստացաւ. համայնավարները իրե՛նք մեռան ու անցան՝ առանց նոյնիսկ թաղման ու հոգեճաշի։

Վարչապետին խօսքին մէջ կայ «կառուցուածքային» բառը, որ գուցէ անգիտակցաբար արտասանած է, քանի որ ինքը սկզբունքային խորշանք ունի կառոյցներու նկատմամբ։ Կառոյցները վտանգաւոր են, անոնք կրնան ինքնուրոյն մտածել և գործել, մինչդեռ ղեկավարման փաշինեանական ըմբռնումը չի հանդուրժեր որևէ միտք, որ գոնէ երևութապէս իրմէ չէ բխած։ Ի՛նքը պէտք է ըլլայ լուսարձակին տակ, այլապէս իրեն պիտի թուի, որ իշխանութիւնը կորսնցուցած է։ Իր այդ նոյն «ուղիղ եթեր»ի ընթացքին յստակ դարձաւ, որ զինք հետաքրքրողը խօսակցութիւնն է, ոչ թէ գործը. «Այսօր ես հիմա խօսում եմ, ու չկայ բաժանում՝ ես Սփիւռքի հետ եմ խօսում, թէ Հայաստանի»։ Իհարկէ, խօսքը երկխօսութեան մասին չէ, այլ մենախօսութեան, ուր ինք պիտի խօսի, իսկ մնացեալը պիտի լսեն։ Այդ ճամբան ընդհանրապէս շատ կարճ է։ Լսարանը պիտի ձանձրանայ և այլ մենակատարներ փնտռէ։ Այդ ճամբան նաև մասնակիցներէն՝ ունկնդիրներէն, կը պահանջէ կրաւորական պահուածք, որ պարզապէս կը սպասէ բեմի կատակերգակի յաջորդ քայլին, որ ծափահարէ կամ սուլէ՝ ըստ ներկայացման որակին։ Կրաւորական լսարանը կը մնայ կրաւորական, առաւելագոյն պարագային մուտքի տոմսին սուղ տեսակը կ'առնէ, որ ներկայացման աւարտին կարենայ մենակատարին հետ լուսանկարուիլ։

Մեր փնտռածը այլ է։ Մեր փնտռածը ներգործական հաւաքականութիւնն է, ուր հայ անհատին ներուժը՝ մտային, հոգևոր թէ ֆիզիքական, պէտք է հնարաւորութիւն ունենայ դրսևորուելու յօգուտ ընդհանրականին, հաւաքականին։

Անցեալ տարի Վատիկանի մօտ ՀՀ նախկին դեսպան Միքայէլ Մինասեան (աւելի ծանօթ որպէս նախկին նախագահ Սերժ Սարգսեանի փեսա) կ'առաջարկէր կերտել «Հայկականութեան նոր ճարտարապետութիւն» մը։

Յօդուածը («Հորիզոն», 7 Մայիս 2019) ինքնին շահեկան էր որպէս ամփոփում անցնող տասնամեակներուն, ինչպէս նաև որպէս ուրուագծում յառաջիկայ հնարաւորութիւններուն մասին որոշ շրջանակներու մը պատկերացումներուն։

Պիտի չմտնեմ այդ մանրամասնութիւններուն մէջ։ Անոնց մէկ կարևոր մասը բաժակաճառային է, առանց լուրջ հիմնաւորումի։ Ընթերցողիս սուղ ժամանակը պիտի խնայեմ և չանդրադառնամ անոնց։ Պարզապէս կ'ուզեմ ընդգծել հետևեալը։ Հեղինակը կ'ըսէ. «Միշտ չէ, որ մենք Հայաստանում համակարգուած գիտենք, թէ որոշակիօրէն ինչ ենք ակնկալում Սփիւռքից, բայց և յաճախ մեղադրում ենք ողջ Սփիւռքին կամ, առանձին վերցրած, նրա այս կամ այն յայտնի ներկայացուցչին՝ ինչ-որ մի իրավիճակում ինչ-որ մի բան չանելու, մեր յոյսերը չարդարացնելու համար։ Նոյն կերպ Սփիւռքը համակարգուած չգիտի, թէ առաջնահերթութիւնների ինչ աղիւսակ ու ինչ ակնկալիքներ ունի մեր պետականութիւնը, և ինչ բանաձևի շուրջ ու ինչպէս է հնարաւոր համադրել ջանքերը»։

Անշուշտ, հաղորդակցութեանց արհեստագիտութեան զարգացման ներկայ հանգրուանին տեղեկութեան պակաս չկայ հրապարակին վրայ, նոյնիսկ կարելի է ըսել՝ տեղեկութեան խճողում կայ հրապարակին վրայ (ինչպէս նաև ապատեղեկատուական ջրհեղեղ), սակայն այդ չի խանգարեր անհատ հայուն, որ իր անմիջական միջավայրէն դուրսի շրջաններու մասին իր պատկերացումները ըլլան սահմանափակ ու պակասաւոր։ Անցեալին գուցէ ունէինք տեղեկատուութեան պակաս, դժուարութիւններ, սակայն եղած սակաւ տեղեկատուութիւնը կը շրջագայէր յստակօրէն, ինքզինք յարգող ատեաններով՝ մամուլ, տարեգիրքեր և այլն, որոնք լրջութեան տարրական մակարդակ մը կը լրացնէին։ Նոյնիսկ խորհրդային պայմաններուն տակ, յատկապէս 1965էն ետք, պաշտօնական գրաքննութիւնը շրջանցող տեղեկատուական որոշ ըմբռնումներ որդեգրուած էին, որոնցմով հնարաւոր դարձած էր առնուազն մտաւորականութեան մօտ համահայկական տեսադաշտի ձևաւորումը։ Այս տեսադաշտի առկայութիւնն էր, որ 1988ին կարելի դարձուց արցախեան ազատագրական պայքարի քիչ թէ շատ համակարգուած ծաւալումը ռազմաճակատներէն սկսեալ մինչև ամենահեռաւոր ամերիկաներ։ Եւ կարելի է ըսել նաև, որ այդ համահայկական տեսադաշտի առկայութիւնն էր, որ խոչընդոտ հանդիսացաւ արցախեան պայքարը շրջանցելու և ներհայաստանեան իշխանափոխութեամբ գոհանալու տէրպետրոսեանական նկրտումներուն։ Այդ համահայկական տեսադաշտն է, որ հնարաւորութիւն կը ստեղծէ ամենահիմնական

հարցերուն մասին որոշ միաձայնութիւն ստեղծելու, համախոհութեան մթնոլորտ գոյացնելու. Եղեռնի ճանաչում, ազգային պահանջատիրութիւն և այլն հարցեր են, որոնց մասին գոյացած է շատ յստակ համախոհութիւն, և ոևէ հայորդիի մտքին մէջ կասկած չկայ այդ մասին, մանաւանդ հիմա, երբ չկան հայ բոլշևիկները, որոնք պատրաստ էին առանց աչք թարթելու Հայաստանն ու Հայ դատը զոհելու «միջազգային յեղափոխութեան» սեղանին:

Պրն Մինասեան կ'ըսէ, թէ խնդիրը ոչ թէ իմանալուն մասին է, այլ «համակարգուած» իմանալուն: Բայց թէ իմանալուն համակարգուածն ու չհամակարգուածը ի՞նչ տարբերութիւն ունին, քիչ մը բնազանցական հարց է:

Եթէ համակարգուած իմացութիւն ըսելով նկատի ունինք ամբողջական, համապատկեր իմացութիւնը, իզուր չշարունակենք. նման իրավիճակ չի կրնար ըլլալ:

Մարդ արարածը սահմանափակ է միջոցին և ժամանակին մէջ, և անհնար է, որ ոևէ մէկը յաւակնի գիտնալու ամէն ինչ, ամբողջովին ընկալէ բոլոր տուեալները, նոյնիսկ հաղորդակցութեան ամենաարդիական միջոցներուն տիրապետելով: Թէկուզ իր տրամադրութեան տակ դրուին բոլոր տուեալները, մարդկայնօրէն անկարելի է, որ ոևէ մէկը կրնայ այդ բոլոր տեղեկութիւնները միաժամանակ վերլուծել և համապատասխան եզրակացութիւններու յանգիլ: Ան միշտ պիտի փորձէ յենիլ ոչ թէ առաջնային, առարկայական, չմեկնաբանուած տեղեկութիւններու, այլ ամփոփումներու, մեկնաբանեալ եզրակացութիւններու վրայ, որպէսզի կարենայ մարդկային ուղեղի տարողութեան մէջ բաւեցնել խնդիրն ու իր տուեալները և յաջողի քիչ թէ շատ տրամաբանական եզրակացութիւն մը տալ: Եւ հետևաբար իր եզրայանգումներն ու համապատասխան որոշումները հիմնուած պիտի ըլլան ոչ թէ առարկայական, գիտականօրէն անառարկելի տրամաբանութեան, այլ ուրիշներու կողմէ վերլուծուած ու խտացուած տուեալներու վրայ, որոնցմէ իւրաքանչիւրը կը կրէ զայն վերլուծողին ու խտացնողին դրոշմը և խիստ ենթակայական է:

Չմոռնանք, որ գործ ունինք հասարակական կեանքի, մարդկային յարաբերութիւններու և ընդհանրապէս կեանքի հետ, որոնք այնքան բարդ են ու բազմաշերտ, որ հասարակական գիտութիւններ կոչուած մարզերը (ընկերաբանութիւն, քաղաքագիտութիւն և մասամբ նորին) շատ աւելի մօտ են արուեստներուն, քան գիտութեանց: Իզուր չէ, որ անոնց համալսարանական աստիճանները կը կոչուին «արուեստից» և ոչ թէ «գիտութեանց», ինչպէս՝ Պսակաւոր արուեստից, Մագիստրոս արուեստից և այլն: Հետևաբար փորձել «համակարգուած» աշխարհայեացքի մը ծիրին մէջ դնել մեր ազգային հեռանկարներն ու տեսլականը ընդհանրապէս՝ քիչ մը դժուար պատկերացում է. եթէ

7 հոգի հաւաքենք մէկտեղ և իրենց յանձնարարենք գլուխ գլխի տալ և ծնիլ նման տեսլական մը, մեր մարզանքը պիտի հաւանաբար աւարտի 8 տարբեր տեսլականներով: Ուսողական խնդիր չէ լուծուածը, որ յստակ ու միակ լուծում մը ունենայ, այլ անհամար անյայտներով անհամար հաւասարումներու կոյտ մը: Ուստի փորձենք հարցին մօտենալ քիչ մը տարբեր տեսանկիւնէ:

Առաջին հերթին սկսինք խնդրի բանաձևումէն: 1920ականներէն ի վեր սովորութիւն եղած է հայկական շէնքը դիտել Հայաստան-Սփիւռք (խորհրդային տարիներուն երբեմն Հայաստան-ներքին Սփիւռք-արտաքին Սփիւռք) կտրուածքով, մօտեցում մը, որ տակաւին կը յամենայ Հայաստանի վերանկախացումէն երեք տասնամեակ ետք: Մինչև օրս կատարուած բոլոր փորձերը, ինչպէս վերը նշեցի, այդ տեսանկիւնէն ճամբայ ելած են և կէս ճամբան տեղ մը մոլորած, ճապաղած ու ծանծաղած: Կը կարծեմ, որ ատենն է այդ մօտեցումը մէկդի դնելու և այլ տեսանկիւններ որոնելու:

Ներկայ մօտեցումը իր դարը ապրած է. ան կը փորձէ հարցերը դիտել նախորդ և նոյնիսկ նախանցեալ սերունդի ակնոցով, կը փորձէ լուծումներ բանաձևել անցեալի մօտեցումներով: Ռազմագիտութեան մէջ կ'ըսեն, թէ ոմանք կը պատրաստուին նախորդ պատերազմին և, որպէս կանոն, կը կորսնցնեն իրենց պատերազմը, որովհետև պէտք է պատրաստուիլ յաջորդ պատերազմին: Այսօր աւելի, քան երբէք, Հայաստանի և Սփիւռքի սահմանազատումը աղօտ է, և անկարելի է այդ հին սահմանումներուն վրայ յենուելով որևէ տրամաբանական ու գործնական խնդիր քննել ու լուծել: Ուր կը վերջանայ Հայաստանը, և ուրկէ կը սկսի Սփիւռքը՝ անհնարին է բանաձևել:

Անցեալ տարի պատահմամբ սեղանակիցն էի երիտասարդ զոյգի մը, որ 2-3 տարիէ ի վեր հաստատուած էր Գանատա: Զաւակներէն մին ծնած է Հայաստան, միւսը՝ Գանատա: Հեռանկարային առումով իրենք առնուազն

յաջորդ երկու տասնամեակներուն հոս մնացող էին՝ թէ՛ ասպարէզի, թէ՛ զաւակներու ուսման և այլ խնդիրներու բերմամբ: Խօսքը խօսք բերաւ, և ամուսինները սփիւռքահայերու մասին որոշ դատողութիւններ ըրին՝ դրականն ու բացասականը իրարու խառնած: Բայց երբ նկատել տուի, թէ այդ դատողութիւնները իրենց ալ կը վերաբերին, թէ, ըստ ամենայնի, իրենք ալ սփիւռքահայ են, քանի որ Հայաստանէն դուրս կ'ապրին և կանխատեսելի ապագային վերադարձի հեռանկարներ չունին, պահ մը շուարեցան. «Ախր, ո՛չ, մենք սփիւռքահայ չենք, հայաստանցի ենք»: Իրենց մտքին մէջ տակաւին խորհրդային պատկերացումն է՝ երկաթէ վարագոյրով հանդերձ... Սփիւռքահայը այդ վարագոյրին «միւս» կողմն է, Միջին Արևելք ու աւելի արևմուտք: Արևմտահայն ալ այդ կերպարը չի լրացներ, որովհետև Հայաստանի այսօրուան բնակչութեան մէկ կարևոր մասը (եթէ չեմ սխալիր, 40 տոկոսը) իր արմատներով Արաքսի միւս ափէն է և արևմտահայի ժառանգ: Իրենց տրամաբանութեամբ Սփիւռքն ու սփիւռքահայը բնաւ կապ չունին աշխարհագրութեան հետ. սփիւռքահայը «միւս»ն է, ան, որ օտար չէ, հայ է, բայց այլ մշակոյթի կրող է:

Այսօրուան Սփիւռք կոչուածն ինքը չունի յստակ սահմաններ և մանաւանդ յարաշարժ երևոյթ է. մարդիկ շատ աւելի շարժունակ են իրենց կեանքին ընթացքին, քան նախորդ սերունդներն էին, որոնք հազիւ թէ մէկ անգամ շարժէին իրենց կեանքի ընթացքին: Հայաստանէն Սփիւռք և Սփիւռքէն Հայաստան, ինչպէս նաև Սփիւռքի մէկ անկիւնէն միւսը տեղափոխութիւնները այսօր բազմապատկուած են, և կ'ենթադրեմ՝ պիտի շարունակուին նոյն թափով, եթէ ոչ աւելի: Հետևաբար փորձել համահայկական աշխատանքները բանաձևել Հայաստան-Սփիւռք հին կաղապարին մէջ բախտաւոր պարագային հազիւ թէ մասնակի յաջողութիւն գտնէ:

Անհատական յարաշարժութիւնը պիտի դժուարացնէ մշակութային առանձնայատկութիւններու մակարդումը, և հայութեան տարբեր հատուածներու սահմանազատումները պիտի աւելի ու աւելի աղօտնան:

Այսօր արդէն չկան մէկ-երկու սերունդ առաջուան սահմանազատումները, երբ խորհրդային պայմաններուն մէջ հասակ առած հայը նոյն մշակութային շերտերը չէր կրեր, ինչ միջինարևելեան՝ արաբական երկիրներու իր տարեկիցը, որ էապէս տարբեր էր պարսկահայէն, որ իր հերթին նման չէր ֆրանսահային, որ բնաւ նման չէր ամերիկահային, և այսպէս շարունակ: Եւ երբ այս «տարբեր հայերը» իրարու քով գային, մեծ դժուարութիւն էր զանոնք հասարակ յայտարարի բերելը: Օրինակ, երբ 1970ականներէն սկսեալ Հայաստանէն արտագաղթ ծայր տուաւ յատկապէս

դեպի Գալիֆորնիա, երկուստեք մշակութային տարբերակումը այնքան շեշտուած էր, որ մինչև օրս ալ՝ յիսուն տարի անց, համայնքը տակաւին լիովին համասեռ չենք կրնար համարել: Այսօր քիչ մը մարդոց շարժունակութեան պատճառով, քիչ մըն ալ հաղորդակցութեան արդիական միջոցներուն շնորհիւ նոր սերունդի անդամներուն մօտ այդ սահմանազատումները շատ աւելի աղօտ են:

Համահայկական տեսլականի մը գոյացման համար Հայաստան-Սփիւռք պրիսմակի պարտադրանքը մեզ հասցուցած է այսօրուան անելին. համագումարներ, գեղեցիկ ճառեր, ծրագիրներ, որոնք սկզբնական խանդավառութենէն շատ անդին չեն երթար, և մասամբ նորին: Բացառութիւն էին, ինչպէս ըսինք, Եղեռնի 100ամեակի աշխատանքները, որոնք յստակօրէն սահմանագծուած էին իրենց բնոյթով ու շրջածիրով և կ'արձագանգէին իսկապէս համազգային իղձերու: Հետևաբար համահայկականին կարիքը կայ, գուցէ ոչ ամէն հարցի մէջ, ոչ ամէն մանրուքի մէջ: Սակայն ցարդ որդեգրուած գործելակերպի՝ Հայաստան-Սփիւռք թէական համագործակցութեան որոնման երեսունէն աւելի տարիները կը փաստեն, որ այդ գնացքը ա՛լ երթալիք տեղ չունի:

Ատենն է նոր պրիսմակներ գտնելու, հարցին նոր դիտանկիւնէ մօտենալու:

Ատենն է գտնելու այն կազմակերպական բանաձևը, որ հայութիւնը իր Սփիւռքով ու Հայաստանով վերածէ մէկ ամրակուռ բանակի՝ ի հեճուկս զայն ամբոխի վերածելու մեծ և յաճախ անթաքոյց ցանկութիւններուն:

Ատենն է հայութիւնը դիտելու ո՛չ հայաստանեան դիտանկիւնէն, ո՛չ ալ սփիւռքեան, այլ համահայկական դիտանկիւնէն:

Պիտի շարունակենք մեր քննարկումը՝ փորձելով յաջորդիւ ծանրանալ Սփիւռքի համայնքներու կազմակերպուածութեան հարցին վրայ: ■

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (7)

Դաշնակցութիւնը ՀՀ կառավարութեան մասնակից
Մկրտիչ Մկրտիչեան

ՀՀէն ներս Դաշնակցութեան աշխատանքները սկսան, անշուշտ, անկախութեան հանրաքուէէն առաջ: Սակայն, փաստօրէն, երկրէն ներս անոր լիակատար քաղաքական գործունէութիւնը կը սկսի նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի հրաժարականով: Այս ժամանակաշրջանին Դաշնակցութեան որդեգրած վարքագիծը կ'երևի երկրի քաղաքական բեմին վրայ անոր որդեգրած դիրքորոշումներէն, իրողական ճիգէն և ձեռք բերուած արդիւնքներէն: Ան կանուխէն հասկցաւ, որ ինք ՀՀէն ներս ժողովրդականութիւն չունի: Անոր պատճառները կարևոր չափով թաղուած էին խորհրդային անցեալին մէջ, բայց կային նաև այլ ազդակներ՝ հայրենաբնակ հասարակութեան անբաւարար ծանօթութիւնը, երկրէն ներս արդիւնաւէտ աշխատանքի տեսակի անփորձութիւնը, կազմակերպական աշխատանքներու բնական դանդաղութիւնը՝ նկատի ունենալով մանաւանդ կուսակցական շարքերու հաւաքման առանձնայատկութիւնները, բայց նաև հասարակութեան՝ Դաշնակցութեան նկատմամբ ունեցած չափազանցեալ ակնկալութիւնները:

Երկրի արդիականացումը բոլորին, նաև Դաշնակցութեան համար առաջնահերթութիւն էր: Այդ նպատակն իրագործելու համար առանցքայինը հասարակութեան արագ յարմարեցումն էր ստեղծուած նոր կացութեան, այսինքն՝ տնտեսական պետական կառավարման վրայ հիմնուած համակարգէն դէպի համաշխարհայնացման պահանջած ազատ շուկայի համակարգը: Առաջին փորձը ՀՀ առաջին նախագահի օրով աւարտած էր կատարեալ ձախողութեամբ: Սեփականաշնորհիմամբ յատկանշուած այդ ժամանակը առաջնորդած էր ազգային հարստութեան մեծածաւալ թալանով: Այս մասին շատ խօսուած ու գրուած է իր ժամանակին: Կը մնար գլխաւորաբար իսկապէս ժողովրդավար, օրէնքի և իրաւունքի վրայ հիմնուած հասարակութեան մը դանդաղ, բայց հաստատաքայլ կազմաւորումը: Այդ նպատակը ունեցած են իրերայաջորդ սահմանադրական փոփոխութիւնները, սակայն անոնք փոխած են միայն տառը, մինչդեռ ուղեղներու մէջ անոնց տեղաւորումը շատ աւելի երկար ժամանակի կը կարօտի:

Դիւրին չէ այդպիսի փոփոխութիւններ յառաջացնելը ամբողջ եօթ տասնամեակ խորհրդային բռնատիրութեան բաւիղներուն մէջ կազմաւորուած հասարակութեան մը մէջ: Այդ ժամանակաշրջանէն մնացած ընկերային յոռի հիմնական հարցերէն մէկը տնտեսական փտածութիւնն (կոռուպցիա) էր, որ ազատ հասարակութեան մէջ կը սպառնար ժամանակի ընթացքին առաջնորդել ինքնակործանման: Դաշնակցութիւնը երկար զբաղեցաւ այս խնդիրով, ստանձնեց համապատասխան յանձնախումբի ղեկավարութիւնը խորհրդարանէն ներս, սակայն վերջիվերջոյ հիմնական տարակարծութեան մը պատճառով ամբողջութեամբ հրաժարեցաւ այդ գործէն: Արդարև, Դաշնակցութիւնը կ'ուզէր փտածութեան քննիչ խումբին հակակշիռը յանձնել խորհրդարանական ընդդիմութեան՝ դիւրաւ ըմբռնելի պարզ տրամաբանութեամբ. իշխանութիւնը մեծամասնութեան ձեռքն է, իսկ փտածութեան արարք գործելու կարելիութիւն ունեցողը իշխանաւորը կ'ըլլայ, հետևաբար հակակշռողը ընդդիմութիւնը պէտք է ըլլայ: Մեծամասնութիւնը մերժեց Դաշնակցութեան առաջարկը:

Նոյնքան դժուար հարց էր երկրէն ներս ժողովրդավարութեան ամրապնդումը: Այս մարզէն ներս ալ Դաշնակցութիւնը հետևողական քարոզչական աշխատանք տարած է, մանաւանդ նախագահական ու պատգամաւորական ընտրութիւններու նախօրեակին՝ ընտրական յոռի երևոյթներուն դէմ՝ միշտ գիտակցելով, որ հասարակական ախտերը համբերութեան և երկար ժամանակի կը կարօտին բուժուելու համար:

Ժողովրդավարութեան և նոր ազատական շուկայական տնտեսութեան յանկարծակի կիրարկումը սովորաբար կը ստեղծեն քաոսային վիճակ. այդպէս պատահեցաւ խորհրդային փլուզման արդիւնք և Արևելեան Եւրոպայի բոլոր

երկիրներէն ներս: Ժողովրդավարութեան թիւր ըմբռնումը ժողովրդավարութիւնը վնասակար կրնայ դարձնել, մանաւանդ հայութեան նման անկախ պետականութենէ երկար ատեն զրկուած ժողովուրդներու պարագային: Աշխարհաքաղաքական նոր կարգերու հեղինակներուն համար կարևոր էին բաց սահմանները՝ տնտեսական փոխանակումներու բացարձակ ազատութիւնը ապահովելու համար, և ժողովրդավարական կարգերու հաստատումը՝ իւրաքանչիւր պետական միաւորէ ներս ազատօրէն գործել կարենալու համար: Այս հանգրուանին ժողովրդավարութեան գաղափարը Պաղ պատերազմի յաղթական՝ արևմտեան գերտէրութիւններու կողմէ գործածուեցաւ իբրև տիրապետութեան միջոց՝ ժողովրդավար վարչակարգեր յառաջացնելու պատրուակով, ըլլայ բիրտ միջոցներով, ըլլայ հոն, ուր կարելի էր կամ միակ կարելի միջոցն էր, համեմատաբար աւելի մեղմ միջոցներով, օրինակ՝ «գունաւոր» կոչուած յեղափոխութիւններով, հակակշռի տակ առնելու միջազգային շուկային համար ազատագրուած տարածքները: Առաջին խումբին մէջ ինկան, օրինակ, արաբական որոշ երկիրներ՝ իրենց «գարնանային» յեղափոխութիւններով: Երկրորդ խումբին կը պատկանին առաւելաբար նախապէս խորհրդային պլոքի երկիրները՝ Վրաստան, Ուքրաինա, Հայաստան, ինչպէս նաև Հարաւամերիկեան Վենեզուէլան, որ կը շարունակէ դիմադրել նպատակադրուած փոփոխութեան:

Պէտք է ըսել, որ միջազգային այս ալիքը Հայաստանի մէջ յաջողեցաւ բաւական ուշացումով, երբ այլուր գերազատական շուկայական համակարգը արդէն հասած էր փլուզման եզրին, երբ ան մերժուած էր արդէն նոյնիսկ անոր հիմնական կերտիչ Միացեալ Նահանգներու կողմէն:

Ատենին ուրիշներու կարգին Դաշնակցութիւնը նոյնպէս անդրադարձած էր հետզհետէ իր ներկայութիւնը զգալի դարձնող այս վտանգի գոյութեան և զարգացումին: Օտար ֆինանսաւորումով գործող քաղաքացիական խմբաւորումներու բազմացումը, անոնց անարգել ու անհակակշիռ գործունէութեան այլազանութիւնն ու արտաքին գրաւչութիւնը, բարդուելով հետզհետէ աճող ժողովրդային դժգոհութեան վրայ, պարարտ գետին ստեղծեցին գունաւոր (Հայաստանի պարագային նախընտրուեցաւ նոյն իմաստը արտահայտող «թաւշեայ» եզրը) յեղաշրջումի մը յաջողութեան համար: Մէկէ աւելի ձախող փորձերէ ետք վերջինը պսակուեցաւ յաջողութեամբ շուրջ երկու տարի առաջ՝ օգտագործելով ստուար զանգուածներու՝ իշխանութիւններէն համատարած դժգոհութիւնը:

Դաշնակցութեան աշխարհաքաղաքական դիրքորոշումը յստակ էր շատ հինէն: Ան միշտ բխած է հայութեան ֆիզիքական գոյութիւնը ապահովելու հիմնական առաջադրանքէն, որ, հասկնալի

պատճառներով, առաջնահերթութիւններու դասակարգումին մէջ կը գրաւէ առաջին տեղը: Անոր նորագոյն տարազը կ'ամփոփուի «Հիւսիսէն հարաւ» աշխարհաքաղաքական գիծի ամուր պահպանման գաղափարին մէջ: Այս պարագան կը սահմանէ նաև անոր քաղաքական բարեկամներն ու կարողական գործակիցները:

Ինչպէս արդէն տեսանք, վերջին քառորդ դարու ընթացքին Դաշնակցութիւնը յաճախ երկրի քաղաքական օրուան մեծամասնութեան փնտռուած գործակիցը եղած է: Անոր տրուած այս կարևորութիւնը յաճախ կը վերագրուի կուսակցութեան սփիւռքեան կարողականութեան: Ասիկա ճիշդ է, բայց և այնպես պէտք չէ մոռնալ անոր մնացեալ գլխաւոր յատկանիշները՝ կազմակերպուածութիւնն ու պատմական փորձառութիւնը: Վստահաբար կը գնահատուի նաև այն, որ Դաշնակցութեան արտասահմանեան կառոյցները միշտ գործած են ՀՀ արտաքին քաղաքականութեան յաջողութեան ի նպաստ՝ անկախ ՀՀ իշխանութիւններու՝ կուսակցութեան հանդէպ վերաբերումէն:

Աւարտելու համար այստեղ կ'արժէ անդրադառնալ Հայաստանի մէջ Դաշնակցութեան ունեցած դերակատարութեան, անոր քաղաքականութեան և որոշումներուն դէմ կատարուած ու ցայսօր կատարուող քննադատութիւններուն: Հարկ չկայ խօսելու որոշ շրջանակներէ եկող քննադատութիւններուն մասին, որովհետև անոնք կը կատարուին յարգելու համար աւանդութիւնները: Անոնք այս կուսակցութիւնը միշտ պիտի քննադատեն՝ անկախ անոր տարած աշխատանքի որակէն, անոր յաջողութենէն կամ ձախողութենէն: Անոնց պարտականութիւնը Դաշնակցութեան տևական քննադատութիւնն է. ոմանց համար այդ գործելակերպը գոյութենական անհրաժեշտութիւն է: Խնդիրը Դաշնակցութեան անմիջական շրջանակներէն հնչող քննադատութիւններն են: Դաշնակցութիւնը իր գործունէութեան համար առաւելաբար այդ շրջանակներուն հաշուետու եղած է առհասարակ, քան իր գաղափարներուն, քաղաքականութեան կամ ընդհանրապէս էութեան դասականօրէն հակադրուած ուժերուն

կամ Դաշնակցութեան բոլորովին անծանօթ կամ տասնամեակներ շարունակ միայն անոր խեղաթիւրուած պատկերը դիտած՝ առաւելաբար հայրենաբնակ զանգուածներուն:

Դաշնակցութեան դէմ ամէնէն ուժեղ հնչող քննադատութիւնը ՀՀ մէկէ աւելի կառավարութիւններու՝ իբրև «կրտսեր» անդամ մասնակցութիւնն է, որուն պատճառով ժամանակի ընթացքին, ըստ քննադատներուն, պղտորած է կուսակցութեան պայծառ դէմքը, քանի որ այդ կառավարութիւններու ղեկավարութիւնը իր ատենին արդէն ամբաստանուած եղած է փտածութեամբ, նաև անոր համար, որ այդպիսի կառավարութիւններու իր մասնակցութեամբ Դաշնակցութիւնը հեռու մնացած է իր դաւանած ժողովրդավարութեան կիրարկման, ինչպէս նաև ընկերային արդարութեան ի նպաստ իր գաղափարական յանձնառութենէն:

Դաշնակցութեան վերջին դարու գործունէութեան վրայ թէկուզ հպանցիկ ակնարկ մը ցոյց կու տայ, թէ անոր առաջնահերթութիւններու ցանկին գլուխը տեղ գրաւած է երկրի անվտանգութիւնը, որ կարևոր չափով կրնայ ապահովուիլ Արցախի խնդրի դիւանագիտական դրական ելքով մը, որուն համար պէտք է մինչև վերջնական կարգաւորումը մարտնչիլ: Զարմանալի չէ ուրեմն Դաշնակցութեան՝ թէ՛ Ռ. Քոչարեանի, թէ՛ Ս. Սարգսեանի հետ գործակցելու պատրաստակամութիւնը՝ նկատի ունենալով Արցախեան ազատամարտի մէջ անոնց դերակատարութիւնը, թէև որոշ չափով իրարու մրցակից, բայց հասարակաց պայքարի անցեալը: Այս տեսակի կապ իրարու հանդէպ հաստատուն վստահութեան ազդակ է: Նոյնը կարելի չէր ըսել, փաստ է, ՀՀ առաջին նախագահի ժամանակաշրջանի պարագային: Նոյնը, դժբախտաբար, կարելի չէ ըսել ներկայիս, քանի Արցախի շուրջ բանակցութիւններու մասին յաճախ կը տիրապետեն իրարու հակասող յայտարարութիւնները:

Մեկնելով անվտանգութեան (ՀՀի և ԱՀի) ապահովման խնդիրէն՝ կարելի է հասկնալ Դաշնակցութեան քաղաքական ընդհանուր վարքագծին մէջ ներքին կայունութեան կարևորութիւնը, որմէ կը բխին քաղաքական մնացեալ բոլոր պահանջները բաւարարելու կարելիութիւնը, տնտեսութեան, ընկերային արդարութեան, անաչառ արդարադատութեան, համերաշխ ու զօրավիգ հասարակութեան կազմաւորման, կրթութեան, առողջապահութեան և այլ ոլորտներու նպատակային կազմակերպումը:

Համերաշխ հասարակութիւնը հիմքն է ուժեղ պետութեան կայացման: Իսկ համերաշխութիւնը հիմնուած կ՚ըլլայ հասարակաց տեսլականի մը իրականացման ցոյց տուած ուղիին վրայ: Վերջին երկու դարերուն այդ տեսլականը հիմնուած է ազգային գաղափարախօսութեան վրայ: Ատկէ որևէ հիմնական շեղում կ՚առաջնորդէ հաւաքական արկածախնդրութեան՝ աղիտալի հետևանքներով:

Հայաստան և Սփիւռք միասնաբար պարտաւոր են ճիգ չխնայել խուսափելու համար այդպիսի աղէտէ մը:

Վ. Պողոսմոգով

Դաշնակցութեան ուժին գաղտնիքը

Մ. Իշխան

2020 թվականը հոբելյանական տարի է Դաշնակցության համար: Այս տարի ամբողջանում է ՀՅԴ 130ամյա կենսագրությունը, ինչպես և բոլորում է հայրենի հողի վրա կուսակցության վերածնության 30տարին: Առիթն օգտագործելով Դրօշակն առաջիկայում պարբերաբար կանդրադառնա այս կարևոր տարեդարձերին՝ խոսելու համար Դաշնակցության անցած ճանապարհի ու անցնելիքի մասին: Նախ և առաջ կարևորելով անշուշտ կուսակցության էության խնդիրը: Խորհրդածության մեր այս լաբանի դուռը բացելու պատիվը տրված է բոլորիս ծանոթ Մուշեղ Իշխանին

Շատերու համար գաղտնիք մըն է դարձած Դաշնակցութեան ուժը: Յաճախ այս ուղղութեամբ մեկուսի խոստովանութիւններու ևս ականջալուր եղած ենք: Ինչ է գաղտնիքը, որ, հակառակ անլուր հալածանքներու և անխոստովանելի միջոցներու, Դաշնակցութիւնը կէս դարէ աւելի ժամանակաշրջանի մը ընթացքին մնացած է ուժեղ և անսասան:

Նոյնիսկ յենարաններ ունեցող կուսակցութիւններ, որոնք ծնունդ էին առած Դաշնակցութեան հետ, և որոնց չէր պակսեր նիւթական ոչ մէկ միջոց, այսօր պատմութեան յանձնուած են՝ իրենց տեղը զիջելով նոր և այլազան կուսակցութիւններու:

Բազմաթիւ պատճառներ կան, անշուշտ, Դաշնակցութեան ուժի այս «հանելուկը» բացատրող: Սովորական մահկանացու մը հարց պիտի տար, որ եթէ Ծրագիրն է հիմը այդ ուժին, միշտ ալ կարելի է իտէալ ծրագիրներ կազմել՝ անոնց մէջ տեղաւորելով ամէնէն յառաջադէմ գաղափարներն ու լաւագոյն խոստումները: Եթէ կանոնագիրն է, որ անսասան կը պահէ այդ կուսակցութիւնը, նոյնպէս դժուար չէ կանոնագիր կազմել ու անոր մէջ խտացնել ամէնէն ազդու կանոնները: Վերջին մէկ դարը հարուստ է եղած կուսակցութիւններու ծնունդով ու մահուամբ: Կարելի է օգտուիլ տարիներու փորձերէն ու կազմել այնպիսի խիստ, արդիական ու գիտական հիմերով կանոնագիր մը, որ աքանչացում և պատկառանք ազդէ ընթերցողին վրայ: Ու վերջապէս՝ անկարելի չէ նիւթական լայն միջոցներ ստեղծել, ակումբներ բանալ, ընդարձակ սրահներ վարձել, գործիչներ ունենալ, լծուիլ լայն փրոփականտի, թերթեր հրատարակել և ապահովել այն անհրաժեշտ միջոցները, որոնք կեղևը կը կազմեն Դաշնակցութեան ուժին:

Սակայն միջուկը, կորիզը, հիմը, որուն վրայ կառուցուած է Դաշնակցութիւնը, կարելի՞ է ունենալ: Այս է բուն խնդիրը, որ կը գրաւէ մեր հակառակորդներու, նոյնիսկ միջազգային դէմքերու և յաճախ օտար ոստիկանութիւններու ուշադրութիւնը:

Այս ուղղութեամբ բռնակալութիւններու արխիւները ևս իրենց փաստաթուղթերը ունին: Ռուսական յեղափոխութենէն ետք՝ Կերենսքիի կառավարութեան օրով, ցարական ոստիկանութեան արխիւներուն մէջ գտնուեցաւ արձանագրութիւն մը, որ կը վկայէր, թէ գաղտնի ոստիկանութիւնը յաջողած է լայնածաւալ Ռուսաստանի բոլոր կուսակցութիւններէն ներս ունենալ իր գործակալները, յաճախ խաթարել անոնց դիմագիծը,

ծառայեցնել զանոնք բռնակալութեան նպատակներուն: Սակայն բոլոր այս կուսակցութիւններուն մէջ, ըստ փաստաթուղթերուն, միայն ՀՅ Դաշնակցութիւնը կազմած է բացառութիւն: Դաշնակցութենէն ներս կարելի չէ եղած թափանցել, և կարելի չէ եղած զայն շեղել իր նպատակներէն:

Նոյնը վկայեցին նաև Օսմանեան սահմանադրութենէն ետք երևան հանուած համիտեան շրջանի արխիւները: Կարմիր սուլթանը ոչ միայն ահաւոր և արիւնոտ պայքար էր տարած Դաշնակցութեան դէմ, այլ նաև ամէն ճիգ սպառած էր Դաշնակցութիւնը ներսէն քայքայելու համար: Նոյնիսկ պաշտօնական բանակցութիւններու փորձեր կատարուած էին, ու Տատեան Արթին փաշան քանիցս Պոլիսէն Ժընև երթևեկած էր՝ զանազան խոստումներով բեռնաւոր: Անոր գլխաւոր նպատակը կազմած էր առնուազն թիւրիմացութիւններու դուռ բանալ Դաշնակցութեան շուրջ:

Նոյն միջոցները գործածուեցան ու տակաւին կը շարունակուին պոլշևիկներու կողմէ Առաջին ընդհանուր պատերազմէն ետք՝ մինչև այսօր: Անգամ մեծածախս համագումարներ հրաւիրուեցան Հայաստանի մէջ՝ դաշնակցականներու ձեռքով կուսակցութիւնը «լիքվիտասիոն»ի ենթարկելու համար: Արտասահմանի մէջ միլիոններ ծախսուեցան, կուսակցութիւններ ծախու առնուեցան, պնակալէզներու ամբողջ բանակ մը պահուեցաւ ու կը պահուի՝ միշտ նպատակ ունենալով

կազմալուծել, քայքայել ու ոչնչացնել Դաշնակցութիւնը:

Եւ սակայն, ինչպէս անցեալին, ինչպէս միշտ, Դաշնակցութիւնը կը մնայ աւելի քան ուժեղ, կազմակերպուած ու անսասան:

Ա՛րդ, ինչ է գաղտնիքը այս անընկճելի ուժին:

Առաջինը և հիմնականը Դաշնակցութեան հայեցիութիւնն է, շատ պարզ և սովորական բացատրութիւն մը՝ առաջին ակնարկով, և սակայն ամէնէն կարևոր գաղտնիքը անոր ուժին: Մարդիկ կարող են մտածել, թէ սովորական պայման մըն է այս ու դիւրին իրագործելի: Ո՛չ, մեզի պէս փոքր և տկար ազգի մը կուսակցութեան համար չափազանց դժուար է առաջնորդուիլ զուտ հայկական շահերով: Փաստը մեր շուրջն է և դիւրաւ ըմբռնելի: Ներկայիս աշխարհը այնքան է ապականած, ժողովուրդներու շահերը՝ այնպիսի թնճուկի մը վերածուած, որ մեծ առաքինութեան ու մանաւանդ աւանդութիւններու կարիքը կայ՝ դուրս չգալու համար ազգային շահերու շրջանակէն:

Դաշնակցութիւնը հայ ժողովուրդի հարազատ ծնունդն է, ոսկորը ոսկորէն, արիւնը արիւնէն, ինչպէս պիտի ըսէր հին ընկեր մը: Այս պարագան թոյլ չէ տուած ու չի տար մեր կուսակցութեան դաւաճանել հայ ժողովուրդի շահերուն: Որևէ օտար ուժ անկարելի գտած է մեզ իրեն ենթարկելու փորձը: Այդ պատճառաւ Դաշնակցութիւնը պայքարի մէջ է եղած թէ՛ սուլթանին դէմ, թէ՛ ցարին: Նոյն է պատկերը նաև այսօր. պոլշևիկեան իշխանութիւնը չի հանդուրժեր մեզ, իմպերիալիստական և այլ վարչակարգերու կառավարութիւններն ալ դժուար կը հաշտուին մեր գոյութեան հետ: Որովհետև բոլորն ալ գիտեն, որ որևէ ժամանակ Դաշնակցութիւնը չի վարանիր ձաղկելու, հարուածելու օտար մեքենայութիւնները և նոյնիսկ կուելու օտար այն բոլոր քայլերուն դէմ, որոնք կրնան վնասել հայութեան իրաւունքներուն:

Ահա թէ ինչու Դաշնակցութիւնը միշտ առանձին եղած է, ու այս առանձնութենէն բխող հայեցիութիւնը կազմած է անոր ուժին մեծագոյն գաղտնիքը:

Կարևոր պարագայ մըն է նաև մեր կուսակցութեան բարոյականի հասկացողութիւնը: Ամէն օր հնարաւոր է հիմնել նոր կուսակցութիւն մը՝ անոր տալով մեր այս յօդուածին սկիզբը յիշուած տուեալները՝ ծրագիր, կանոնագիր, նիւթական միջոցներ և այլն: Սակայն դժուար է, եթե ոչ անկարելի, տալ անոր բարոյական դիմագիծ, ինչ որ անհրաժեշտ է կուսակցութիւն մը ապրեցնելու համար ուժեղ ու մանաւանդ առողջ:

Այս կարևոր առաքինութիւնը պէտք ունի աւանդութեան: Իւրաքանչիւր դաշնակցական նախքան շարքերը մտնելը ու անկէ ետք ծրագրէն ու կանոնագրէն առաջ կ՚ուսումնասիրէ Դաշնակցութեան հիմնադիրներուն և հերոսներուն կեանքը: Անոնց պատմութիւնը Դաշնակցական մարդուն կը սորվեցնէ նախ և առաջ ունենալ նկարագիրներու բարոյական հասկացողութիւն, որ պայման է ոչ միայն լաւ Դաշնակցական ըլլալու, այլ նաև մարդ: Երբ այս հիմնական պայմանով օժտուած է Դաշնակցականը, միւս առաքինութիւնները արդէն իրագործուած կ՚ըլլայ, որովհետև մեր հասկցած բարոյականութիւնը կը պարունակէ եւ քաջութիւն, եւ անձնազոհութիւն, և ընկերասիրութիւն ու վերջապէս՝ անխարդախ ու անշահախնդիր հայրենասիրութիւն:

Ահաւասիկ այն զոյգ «գաղտնիքները», որոնց շնորհիւ Դաշնակցութիւնը կը շարունակէ մնալ ուժեղ և երբեք չազդուիլ իր դէմ սարքուած արտաքին ու ներքին միացեալ դաւերէն:

Այս զոյգ արժանիքները նախ և առաջ կը պատկանին հայ ժողովուրդին: Անիկա, իր պատմութեան անյիշատակ ժամանակներէն սկսեալ, եղած է հայրենասէր ու ապա օժտուած բարոյական խորունկ հասկացողութիւններով: Հայ ժողովուրդի այս առաքինութիւնները դարերու բերած դժբախտութիւններու մէջէն կրցած են ազատել Հայկ Նահապետները՝ հասցնելով զանոնք մինչև Մամիկոնեանները, փոխանցելով զանոնք Սասունցի Դաւիթներուն ու վերջապէս իբրև աւանդ յանձնելով Դաշնակցութեան:

Դաշնակցութիւնը շարունակողն է միայն դարերու բերած ու դարերուն երթալիք մեծ գործին:

Այս ծանր ու սրբազան առաքելութիւնը իր ուսերուն վրայ կրող կուսակցութիւն մը երբեք չի յուսալքուիր ու անվարան կը շարունակէ իր ճամբան՝ վերջնական յաղթանակի խորունկ և անվերապահ գիտակցութեամբ:

«Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն, ուրբաթ, 21 նոյեմբեր 1975, էջ 1

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

HAIRENIK

THE OLDEST ARMENIAN DAILY IN USA—ISSUED DAILY EXCEPT MONDAY, THE DAY FOLLOWING HOLIDAY & 2 WEEKS IN JULY

"SECOND-CLASS POSTAGE PAID AT BOSTON, MASSACHUSETTS"

PUBLISHED BY HAIRENIK ASSN. INC.

212 STUART STREET, BOSTON, MASS. 02116

Telephone (617) 542-3850

77-ԴՊ ՏԱՐԻ No. 19132

Vol. LXXVII No. 19132

Friday, November 21, 1975

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻՇԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ՆՈՐ ԱԳԱՄ ՄԸ, ԵՒ ՆՈՐ ԵՒԼ ՄԸ ԿՈՒՆՈՒՄ

ԿԱՐՈ ԳԵՌՈՊԵԱՆ ՄԵՌԱՒՆ, ՊԷՏՈՒՆԻՏ ՄԸՔ

ՎԵՐՆՆ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԽԱՐԵՆՈՒԹԵՒՆ

ԱԲՐԱՍԱՄԻ ԳԵՐ. Ղ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԱՆԵՆ

ԽԱՐԱԿՈՒՏՈՒՆՈՎ ԱՅՑԵԼԵՑ ԵՊԵՔՕԳԻՍՏ ԱՌԱՔՈՍ

Կուսակցական դպրոցի կարեւորութիւնը

Աւօ Գաթրճեան

Դաշնակցութիւնը հայութեան անշօշափելի ուժերուն զարգացման, առողջութեան նուիրուած կուսակցութիւն մըն է գերազանցօրէն: Այս պատճառով ալ ան ոչ միայն ռումբ նետեր է, այլև գիրք գրեր է, կարդացեր է: Կառուցեր է զինարաններ, բայց չէ մոռցեր դպրոցը. զէնք է փոխադրեր, բայց գիրքը միասին է տարեր, մարտիկներ է կազմեր, բայց նաև մտաւորականներ, հերոսներ է տուեր և անոնց շարքին հերարձակ, գաղափարապաշտ հսկաներ մտքի ու մշակոյթի դաշտերէն ներս:

Գուրգէն Մխիթարեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան լուսաւոր և պողպատեայ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՄՊԻՈՆԷն, ՀՅԴ հիմնադրութեան 130ամեակին առիթով ինքնասրբագրումի, ինքնաքննադատութեան և հաշուետուութեան շրջածիրէն մեկնելով, կը կատարենք կարգ մը խորհրդածութիւններ:

2020 թուականին համաշխարհային փոփոխութիւններու լոյսին տակ, մանաւանդ ապագաղափարայնութեան այս դարուն, անհրաժեշտ է կուսակցութեան մարտավարութեան և ռազմավարութեան վերանայում: Հաւաքական կամքով պայքարը շարունակելու վճռականութեամբ կը շեշտուի կուսակցական դպրոցի կարևորութիւնը:

Կուսակցական դպրոցի կարիքը կամ պահանջը կը զգացուի հիմնական երկու պարագային՝

ա) գաղափարական անկումի մը հետևանքով,

բ) առողջ սերնդափոխութեան և մարդուժի պատրաստութեան նպատակով:

«Կուսակցական դպրոց» հասկացութիւնը բացարձակապէս օտար չէ ՀՅԴին համար: Յաճախ այս միտքը առաջ մղուած և իրագործուած է: Այդ պատճառով էր, որ անկրկնելի ընկեր Սերժ Թովմասեանը «Պարսկաստանի խորքից» 1969 թուականին կը մեկնի Պէյրութ՝ ՀՅԴ կուսակցական դպրոցի դասընթացքներուն հետևելու համար:

«Դպրոց» բառը հին յունարէնի մէջ (σχολή, σχολά) «ժամանց, ուսումնական պարապմունք, դպրոց» բացատրութիւնը ունի, որ կրթական հաստատութիւն մըն է ընդհանուր կրթութիւն ստանալու համար: Լայն իմաստով՝ բառը կրնայ օգտագործուիլ որևէ կրթական հաստատութեան անուանումին հետ, ինչպէս՝ երաժշտական դպրոց, գեղարուեստական դպրոց, մարզական դպրոց, զինուորական դպրոց, մարտարուեստի դպրոց և այլն:

Կուսակցական դպրոցը կուսակցական անձնակազմ (քատր) պատրաստելու նպատակով ծնունդ կ'առնէ:

Կուսակցական դպրոցը կուսակցական ղեկավար մարմիններու և փորձառու կազմեր պատրաստելու բարձրագոյն ուսումնական հաստատութիւն պէտք է հասկնալ: Կուսակցական դպրոցը, ըստ կարիքի, պէտք է ունենայ քանի մը բաժին, օրինակ՝ 2 բաժանմունք՝ բարձրագոյն կրթութիւն ունեցողներու և միջնակարգ կրթութիւն ունեցողներու:

Շատեր անմիջապէս կրնան հարց տալ, թէ ինչ կը նշանակէ այս, ինչ նպատակի կը ծառայէ, ինչ խնդիր կը լուծէ, երբ մենք ունինք մեր պատանեկան միութիւնները՝ իբրև «նախակրթարաններ», երիտասարդականները՝ իբրև «երկրորդականներ», իսկ ուսանողական միութիւնները՝ բնականաբար իբրև «համալսարաններ»:

Կուսակցական դպրոցը կուսակցութեան

կայացման և առողջ սերնդափոխութեան գրաւականն է:

Մեկնելով ՀՅԴ կուսակցութեան նպատակներէն, տեսլականի ամբողջական ներուժէն ու միջազգային կարողականութենէն՝ դպրոցի գաղափարը և համակարգը կը ծառայեն պատրաստելու 21րդ դարու գիտելիքներով, արհեստագիտութեամբ ու նորարարութիւններով օժտուած վերարտակաւորուած կուսակցականը, կուսակցական վեհ գաղափարի կրթութեամբ, ազգային ու կուսակցական արժէքներու խոր իմացութեամբ և առողջ մտածելու ու գործելու հմուտ շարքայինը:

Ան կու գայ այնպիսի ժամանակաշրջանին, երբ օրըստօրէ աւելի սուր կերպով կը շեշտուի գաղափարայնութեան բացակայութիւնը հասարակութեան մէջ, ընկերութեան մէջ նիւթապաշտական հակումները մեծ չափերու կը սկսին հասնիլ, անձնազոհութեան, հերոսութեան և հայրենասիրութեան սկզբունքները երկրորդ, երրորդ գիծ կը նետուին մարդոց արժեհամակարգին մէջ:

Դպրոցի ծրագրին մէջ անհրաժեշտ է, որ ընդգրկուին ու դասաւանդուին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան պատմութիւնը ամբողջութեամբ՝ կանոնագիրը, ծրագիրը իր էութեամբ ու խորքով, ՀՅԴ գաղափարաբանութեան հիմունքները, կազմակերպական և ժողովական կանոնները, կուսակցական կառոյցը, ազգային-ազատագրական շարժումը, կուսակցութեան ռազմավարութիւնը և ընթացիկ քաղաքականութիւնը, քաղաքական նիւթեր, Հայ դատը և այլ նիւթեր:

Հաւատաւոր պատասխանատուներու շունչին տակ անհրաժեշտ է պատրաստել բարձրորակ ու գիտակից կուսակցական շարքայինը, որ ստացած ըլլայ գաղափարական-կուսակցական ընդհանուր դաստիարակութիւն:

Հոն կիրարկուին դաստիարակչական բծախնդիր ու սերտուած ծրագիրներ՝ ՀՅ Դաշնակցութեան պատմութեանն ու գաղափարական արժէքներուն ոչ թէ ծանօթանալու, այլ իւրացնելու համար:

Ամէն ջանք գործի լծել՝ անոնց միտքն ու հոգին դարբնելու այն ոգիով ու սկզբունքներով, որոնք կ'ամրապնդեն դաշնակցական գաղափարապաշտութիւնը, կը պատրաստեն այն գաղափարապաշտը, որ կը ձգտի հասնելու աւելի բարձրագոյն իտէալներու կամ շօշափելի տուեալներու, որ կը սիրէ մտքով և հոգիով յաձիլ այնպիսի բնագաւառներու մէջ, որոնք հեռու են նիւթեղէն իրականութենէ:

Օգտագործել արդիական ամէն տեսակի մեթոտները, որոնց ազդեցութեան տակ կուսակցական շարքայինները դառնան գաղափարի նուիրեալներ և Հայ դատի զինուորեալներ՝ հեռու անհատապաշտութիւնէ:

Այս բոլորը մասնագիտական պատրաստուածութեամբ, նախանձախնդրութեամբ, մանաւանդ կամքով և հաւատքով իրենց շինիչ արդիւնքը պիտի տան անկասկած: Այդտեղ լուրջ հետևողականութեամբ, բարձրագոյն աստիճանի նուիրուածութեամբ ու լուրջ մօտեցումով կարելի պիտի ըլլայ խորանալ հոն տեղ գտած գաղափարներուն մէջ, և անոնցմով ոգեզինուած՝դաշնակցականները պիտի դառնան մէկական երաշխիք ՀՅ Դաշնակցութեան ուժին ամրապնդման և հայ ժողովուրդի ամբողջական նպատակներու իրականացման: ■

Զինյալ պայքարը Սփյուռքում. «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» և «Հայ յեղափոխական բանակ»

Անի Մելքոնյան

Հուլիսի 27-ին ոգեկոչում ենք հիշատակը «Հայ յեղափոխական բանակ»-ի մարտիկների, «Լիզբոն 5» տղաների, ովքեր իրենց ակտով ստիպեցին աշխարհին խոսել Հայոց ցեղասպանության մասին: Հայոց «Նեմեսիս»-ի ավարտից հետո աշխարհում կարծես մոռացվել էր 20-րդ դարի մեծագույն ողբերգությունը:

Հայկական հարցի մասին կրկին սկսեցին խոսել հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ սփյուռքահայությունը հանդես եկավ Արևմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջով: Երկարատև քննարկումներից հետո, սակայն, 1953 թ. մայիսի 30-ին, խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ Թուրքիայից տարածքային պահանջներ չունի, և մինչև ԽՍՀՄ փլուզումը խորհրդային իշխանությունը չհրաժարվեց այդ քաղաքական դիրքորոշումից: Այս պայմաններում Հայկական հարցի հետապնդումը կամ, որ նույնն է, Հայ դատի պահանջատիրությունը իր ուսերին վերցրեց Հայկական սփյուռքը, և չնայած Հայոց ցեղասպանության հարցը միջազգային օրակարգ մտցնելու ուղղությամբ Սփյուռքում գործող ազգային կուսակցությունների, Հայ դատի հանձնախմբերի ու եկեղեցու գործադրած ջանքերին՝ չհաջողվեց ճեղքել Հայոց ցեղասպանության հարցի շուրջ կառուցված մոռացության պատը: Ցեղասպանության 50-րդ տարելիցին ամփոփելով տարիների պայքարը՝ սփյուռքահայությունը հասկացավ, որ ձեռք բերված արդյունքները բավարար չեն. աշխարհը շարունակում էր ժխտողական մոտեցումը Հայոց ցեղասպանության հարցում: Անհրաժեշտ էր մշակել նոր, ավելի արդյունավետ մարտավարություն: Քանի որ քաղաքական պայքարը ցանկալի արդյունք չէր տվել, հայությունը ստիպված էր գնալ մեկ այլ ճանապարհով. «Հայկական հարցի համար մղվող պայքարի երկրորդ ուղղությունը ահաբեկչությունն էր»[1]:

Այսինքն՝ իր ձայնը լսելի դարձնելու համար հայությունը վերադառնում է XIX դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարի որդեգրած մարտավարությանը, մասնավորապես «.առաջ է քաշվում աշխարհի տարբեր երկրներում Թուրքիայի դիվանագիտական աշխատողների ահաբեկչությունը: Նոր պայմաններում պահանջատիրական զինյալ պայքարի տարբերակը դառնում է ազգային-ազատագրական պայքարի այն ձևը, որը պետք է Հայկական հարցը դուրս բերեր փակուղուց և կրկին դարձներ միջազգային հարաբերությունների օրակարգի հարց»[2]:

1975թ. հոկտեմբերին ասպարեզ է իջնում «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՑԱՄ) կազմակերպությունը, որը

Ձախից աջ՝ Վաչե Տաղլյան, Մեղրակ Ամեմյան, Սիմոն Յահնիյան: Կքանստած ձախից աջ՝ Արա Քրճլյան և Սարգիս Աբրահամյան

1975 թ. հոկտեմբերի 22-ին Վիեննայում. Թուրքիայի դեսպանի ահաբեկումից հետո իր գոյության մասին ազդարարում է մի հայտարարությամբ, որում ասվում էր. «Մենք հայ ժողովրդի զավակներն ենք: Գործում ենք հանուն արդարության: Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչների դեմ մեր արարքը աշխարհի բոլոր մեծ ու փոքր պետություններին պիտի հիշեցնի, թե հայոց մոռացված ցեղասպանությունը անպատիժ է մնում: ...Մեր արդար դատի հետապնդման միակ միջոցը զինյալ պայքարն է»[3]:

ՀՑԱՄ-ը գործեց մինչև 1983 թվականը՝ այդ ընթացքում կազմակերպելով զինյալ գործողություններ Վիեննայում, Փարիզում, Վատիկանում, Մադրիդում, Շվեյցարիայում, Կանադայում, ԱՄՆ-ում և այլուր:

1983 թ. ՀՑԱՄ-ը իր տեղը զիջեց «Հայ յեղափոխական բանակ» (ՀՅԲ) կազմակերպությանը: Վերջինիս գործողություններից առավել հայտնի է Լիսաբոնում 5 հայ երիտասարդների կողմից իրականացված ակտը,

որը մեր պատմության մեջ հիշատակվում է «Լիզբոն 5» անունով: Գործողությունը պետք է տեղի ունենար հուլիսի 27-ին: Օրը պատահական չէր ընտրված. այդ օրը «Պորտուգալիայի մայրաքաղաք էին ժամանելու Եվրոպայում գործող թուրքական դեսպանատների պատասխանատու մարմիններն ու կցորդները, ինչ-որ ընդհանուր խորհրդակցության»[4]: Աշխարհի ուշադրությունը Հայ դատի վրա սևեռելու նպատակով 1983 թ. հուլիսի 27-ին ՀՅԲ 5 անդամներ՝ Վաչե Տաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահնիյանը, Սարգիս Աբրահամյանը և Արա Քըրճլյանը, գրոհեցին Լիսաբոնի թուրքական դեսպանատան վրա: Դեսպանատուն ներխուժելու ժամանակ ոստիկանների հետ սկսված փոխհրաձգության հետևանքով զոհվում է Սիմոն Յահնիյանը՝ չկարողանալով մտնել դեսպանատուն: Տղաները գրավում են դրան կից թուրքիայի փոխդեսպանի բնակարանը:

Շուրջ 170 հոգուց բաղկացած ոստիկանական ուժերը շրջափակում են շենքը: Պորտուգալիայի կառավարությունը վարչապետ Մարիո Սուարեսի գլխավորությամբ գումարում է արտակարգ նիստ, որի ընթացքում որոշվում է առաջին անգամ օգտագործել հատուկ ջոկատայիններ: Նախքան հատուկ ջոկատայինների գրոհը սկսելը շենքում հրդեհ է բռնկվում, ապա լսվում են պայթյունի ձայներ: Հայ վրիժառուները գերիներին (փոխդեսպանի կնոջն ու երեխային) բաց թողնելուց հետո պայթեցնում են շենքը և մնում դրա փլատակների տակ:

Մինչ որոշիչ պայթյունը կորոտար, ՀՅԲ մարտիկները աշխարհին ու նաև աշխարհասփյուռ հայությանը հղում են իրենց կոչը. «Բոլոր կառավարություններին, համաշխարհային հանրային կարծիքին և մամուլին: Սա անձնասպանություն չէ, ոչ էլ խելագարություն, այլ գերագույն զոհաբերում ազատության բագինին: Մեր ժողովրդի ինքնորոշման ձեռքբերման միակ միջոցը զինյալ պայքարն է: Բռնի ուժին դիմելու մեր որոշումը հետևանքն է թուրք պետության և նրա պաշտպան պետությունների մերժումի՝ գոհացում տալու Հայ ժողովրդի արդար ու խաղաղասեր իրավունքներին: Հայերի իրավունքն է ապրել ու բարգավաճել իրենց նախահայրերի հայրենիքում՝ ազատ ու անկախ...»[5]: Իրենց կյանքը Հայ դատի պայքարին նվիրաբերած երիտասարդների աճյուններն ամփոփվեցին Բեյրութի հայկական գերեզմանատանը, որն ուխտավայր դարձավ լիբանանահայության և առհասարակ աշխարհի տարբեր երկրներից Լիբանան ժամանող հայերի համար:

Լիսաբոնի անձնազոհ տղաների գործողությունը ցնցեց աշխարհը և փոթորկեց շատ ու շատ հայ երիտասարդների հոգիները, որոնք խանդավառվեցին ազգային պահանջատիրության պայքարով: Նրանց ռումբերը իրենց որոտով պայթեցրին լռության ու սառը մերժման այն պատը, որ տասնամյակներ շարունակ աշխարհը կառուցել էր Հայոց ցեղասպանության հարցի դիմաց՝ մշտապես խուլ ու համր ձևանալով հայրենազրկված հայության արդար պահանջատիրության նկատմամբ:

Ահաբեկչությունն էին արդյոք «Լիզբոն 5»-ի կամ ՀՅԱՄ-ի գործողությունները: Աշխարհը գուցե ասի՝ այո՛, բայց չէ՞ որ նույն այդ քաղաքակիրթ աշխարհն էր ուրացման և մոռացության քաղաքականությամբ ստիպել նոր կյանք մտնող երիտասարդներին դիմել ահաբեկչության ծայրահեղ միջոցին՝ սեփական ձայնը լսելի դարձնելու և խլված իրավունքները վերականգնելու համար: Քանի դեռ քաղաքակիրթ ու քաղաքական էր հայության պայքարը, աշխարհն ականջալուր չէր դրան: Հայոց ցեղասպանության մասին մեծ ու փոքր երկրները և միջազգային կառույցները սկսեցին խոսել միայն այն բանից հետո, երբ հայ երիտասարդը սկսեց իր ժողովրդի զինյալ պայքարի նորագույն փուլը:

Խոսելով «Լիզբոն 5»-ի գործողության մասին՝ պետք է արձանագրել, որ «1983 թվականի այս գործողությունից հետո բազմաթիվ երկրներ ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Այդ գործողությունը ինքնաբուխ խենթություն կամ պարզապես հինգ երիտասարդների ծրագիր չէր:

Հայ հեղափոխական բանակի գործողությունը մաս էր կազմում Հայ դատի պահանջատիրական պայքարին: Զինյալ պայքարին վերադառնալու որոշում կայացվեց, երբ բոլոր դիվանագիտական տարբերակներն արդեն սպառվել էին, սակայն այդպես էլ ոչ մի առաջընթաց չէր գրանցվել հայ ժողովրդի ձայնը լսելի դարձնելու գործում»[6]:

Այսօր երկու տասնյակից ավելի պետություններ ու մի շարք միջազգային կազմակերպություններ ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, իսկ հայությունը նախ և առաջ Հայ դատի պայքարին իրենց կյանքն ու ազատությունը գրավ դրած հայորդիների անձնազոհության շնորհիվ հասել է ցեղասպանության ճանաչումից պահանջատիրական պայքարի փուլ թևակոխելու հանգրվանին, այդ թվում՝ նահատակության ճանապարհով Լիսաբոնում մարտիրոսված 5 երիտասարդների, որոնց հիշատակը հայ ժողովուրդը ոգեկոչում է ամեն տարի՝ հուլիսի 27-ին:

Գաղափարական ազդեցությունը

ՀՅԱՄ և ՀՅԲ մարտիկների զինյալ պայքարը քաղաքական և քարոզչական մեծ ազդեցություն գործեց համաշխարհային հանրության վրա և գաղափարական հեղաշրջիչ ներգործություն ունեցավ ժամանակի հայ երիտասարդության վրա, որը, մինչ այդ բախվելով Հայոց ցեղասպանության ժխտման փաստին, հուսահատության և անտարբերության թմբիրի մեջ էր: Ի դեպ, պետք է փաստել, որ այդ արթնացման գործում որոշակի դերակատարություն ունեցան նաև Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին Երևանում ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը, բազմահազար հայության այցելությունը հայ նահատակների հիշատակին նվիրված նոր սրբատեղի և սրանց զուգորդած ժողովրդական

հուզումները: Հայաստանյան հասարակության ազգային զարթոնքը հավելյալ ազդակ հանդիսացավ սփյուռքահայության համար՝ շարունակելու կամ, ավելի շուտ, վերսկսելու պայքարը, փնտրելու անարդյունավետ քաղաքական պայքարից անդին նոր ուղիներ՝ հայոց պահանջատիրությունը միջազգային օրակարգեր ներառելու համար: Արժե նշել նաև, որ ասպարեզ իջած զինյալ կազմակերպությունների մարտիկների գործողություններն իրենց հերթին զարթոնքի յուրահատուկ ազդակ դարձան հաջորդող սերունդների համար, որոնք անհրաժեշտ ժամին պետք է նետվեին արդեն Արցախի ազատագրման պայքարի հորձանուտը:

Զինյալ պայքարի մարտիկներից շատերն այդպես էլ անվանապես անհայտ մնացին. հայտնի են միայն նահատակված կամ ձերբակալված մարտիկների անունները: Այս մարտիկների պայքարը ձևով գուցե ահաբեկչություն էր, բայց բովանդակությամբ. այն պայքար էր խախտված իրավունքի վերականգնման համար և խարսխված էր հայ ժողովրդի արդար պահանջատիրության նպատակի վրա: Նրանցից յուրաքանչյուրը թերևս կարող էր կրկնել իր մեծ նախորդներից մեկի՝ Սողոմոն Թեհլիրյանի խոսքերը. «Ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ»:

Սփյուռքահայ երիտասարդությունը, որը ծնվել էր օտար երկրներում, երբևէ պապերի հայրենիքում չէր եղել և ենթակա էր մեծ աշխարհի ձուլիչ միջավայրին ու բարքերին, իրեն զգաց նախնիների կորուսյալ հայրենիքի ու արդար դատի ժառանգորդ: Այդ ժառանգված իրավունքները վերագտնելու համար հայրենիքից հեռու մեծացած երիտասարդի զգացողություններն են արտահայտվել Լիսաբոնի գործողության հերոս Սիմոն Յահնիյանի խոսքերում. «.եթե պիտի հեռանամ Լիբանանից, ապա կնստեմ այն օդանավը, որը պիտի վայրէջք կատարե «Զվարթնոց» օդանավակայանում»[7]: Սիմոնը և իր ընկերները, ցավոք, Հայաստան չվերադարձան, բայց նրանց անունն ու սխրանքը ճեղքեցին անգամ խորհրդային «երկաթյա վարագույրը» և հասան Հայաստան: Մեծ բանաստեղծ Հ. Շիրազը Լիսաբոնի տղաների հիշատակին նվիրեց «Հիշե՛ք, հայեր» բանաստեղծությունը:

Այս տղաներից յուրաքանչյուրն իր սխրանքով ոգեշնչեց նաև Հայ դատի պայքարին լծված գործիչներին՝ դիվանագիտական պայքարը վճռականորեն շարունակելու համար: Կարելի է հաստատել, որ զինյալ պայքարը որոշ առումով նաև դիվանագիտական պայքարի համար էր բարենպաստ հիմք, քանի որ հենց այդ գործողությունները նպաստեցին, որ դիվանագիտական պայքար մղող գործիչների ձայնը լսելի դառնա միջազգային ատյաններում: Այդ պայքարի շնորհիվ էր, որ համաշխարհային մամուլում 1920-ականներից հետո առաջին անգամ հայտնվեցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութեր:

Անհրաժեշտ է հստակորեն արձանագրել նաև, որ սփյուռքահայ երիտասարդության զինյալ պայքարն ահաբեկչություն չէր, քանի որ այն ահաբեկչական գործունեությանը բնորոշ նպատակներ չէր հետապնդում. նրա հետապնդած շահը նյութական հարստությունն ու արժեքները չէին, այլ ազգային իրավունքները: Պատահական չէ, որ երբ Հայ դատի քաղաքական պայքարը սկսեց լուրջ հաջողություններ գրանցել, հայկական զինյալ գործողություններն ավարտվեցին, իսկ նրա մարտիկներից ոմանք 1990-ականներին իրենց գործը շարունակեցին Արցախում՝ մասնակցելով հայրենիքի այս հատվածի ազատագրման համար մղվող պատերազմին:

ՀՅԱՄ և ՀՅԲ մարտիկների գործողությունների գաղափարական ազդեցությունը մինչ օրս էլ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում կրում է հայ երիտասարդության մի ստվար զանգված, որը, այս երիտասարդների օրինակով ոգեշնչված, կանգնած է Հայ դատի արդարացի լուծման համար մղվող պայքարի դիրքերում: Այժմ, երբ Հայ դատի հանձնախմբերի հետևողական պայքարի շնորհիվ որևէ երկիր ճանաչում և դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, դա նաև հարգանքի տուրք է այն բոլոր մարտիկների հիշատակին, ովքեր, իրենց երիտասարդական երազանքներն ու ապագայի ծրագրերը անտեսելով, նվիրվեցին արդարության համար մղվող պայքարին: Այս մարտիկների զոհաբերությանն արժանի տուրք մատուցելու լավագույն ձևը կլինի հայոց պահանջատիրական պայքարը շարունակաբար առաջ մղելն ու ի վերջո հատուցման հասնելը, այն է՝ միջազգային հանրության կողմից Սևրի պայմանագրով և վիլսոնյան իրավարար վճռով Հայաստանի Հանրապետության մաս ճանաչված, բայց Թուրքիայի կողմից օկուպացված տարածքների վերադարձը Հայաստանի Հանրապետությանը:

Ամփոփելով ցանկանում ենք շեշտել՝ նորօրյա զինյալ պայքարի մեկ դասն էլ հույսը սեփական ուժերի վրա դնելն է ու հարկ եղած դեպքում ազգային իրավունքների ճանաչումն ու արդարության վերականգնումը պարտադրելը, ինչը, դժբախտաբար, դեռ երկար ժամանակ արդիական է լինելու: ■

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. ծագումը, բովանդակությունը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995:
2. Նախշքարյան Ա., Սրբազան խաչելություն, Եր., 2019:

Համացանցային նյութեր

1. http://www.lisbon5.com/02.html
2. https://www.yerkir.am/news/view/180967.html

Ծանոթագրություններ

1) Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. ծագումը, բովանդակությունը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995, էջ 59:
2) Նույն տեղում, էջ 60:
3) Նույն տեղում, էջ 62:
4) Նախշքարյան Ա., Սրբազան խաչելություն, Եր., 2019, էջ 19:
5) http://www.lisbon5.com/02.html
6) https://www.yerkir.am/news/view/180967.html
7) Նախշքարյան Ա., նշվ. Աշխ., էջ 28:

ՀՅԴ կառույցների վերականգնումը Վան-Վասպուրականում 1904-1905 թթ.

† Համլետ Գևորգյան, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Որքան էլ կյանքը փորձում է վարժեցնել իր դաժան բնույթին, ամեն անգամ մենք անակնկալի ենք գալիս անսպասելի հարվածներից: Այս անգամ թիրախը Համլետ Գևորգյանն էր: Անցած մի քանի շաբաթներին ավելի հաճախակի էինք հեռաձայնում իրար. առիթն իր հոդվածն էր, որ պատրաստվում էր հրապարակման «Դրօշակ»-ի առաջիկա համարում: Վերջին խոսակցության ժամանակ ծանր շնչելով ասաց.«Էդ անտեր հիվանդությամբ եմ վարակված, հիվանդանոցում եմ»: Ես ցանկացա կարճ կապել, որ չհոգնի, բայց ինքը տրամադրված էր խոսակցության: Հիվանդության թեման արագ շրջանցեցինք, ասաց.«Լսի՛ր, Վանա Իշխանը խելքով ու հանդգնությամբ նմանվում է Նիկոլ Դումանին, ափսոս, որ քիչ ապրեց...»: Եթե Համլետը մեկին համեմատում էր Դումանի հետ, որեմն իսկապես գերվել էր նրանով: Այդպիսին էր Համլետ Գևորգյանը, ապրվածացնում էր իր կուռքերին, ապրում էր նրանցով, ապրում էր ազգային-ազատագրական պայքարի ժամանակի մեջ՝ հաճախ կռվելով ու հաշտվելով այդ ժամանակի ու իր հերոսների հետ: Նրա հերոսներն ամենաառաջնորդներն էին, ամենաազնիվներն ու նվիրյալները, որոնց պատմության մշուշից դուրս բերելն ու որպես չափանիշ ու հպարտության առարկա ժողովրդին ներկայացնելը դարձրել էր իր ողջ գիտակցական կյանքի գործը. Աղբյուր Մերոբ ու Նիկոլ Դուման, Դրո ու Սեբաստացի Մուրադ, Սեդրակ Ջալալյան ու Յապոն և էլի շատ ուրիշներ և կամավոր ստանձնած պարտավորություն՝ անդրադառնալու նաև անարդարորեն մոռացված քաջերին, Զանգեզուրի գոյապայքարում հերոսացած սպա լիներ, թե ուրիշ մեկը: Կանգ առավ Համլետի անդադրում միտքը, և ավարտվեց նրա ստեղծած պատմագիտական արժեք ունեցող գրքերի շարքը: Ընդհատվեց մարդկային ու գաղափարական ընկերությունը, որ ձևավորվել էր Ղարաբաղյան շարժման հաչմերոկներում ու ձգվում էր մեր ազգային երազանքների ճանապարհով: Շարադրվող այս մտքերին թերևս շատերը համամիտ կլինեն, և ես նրանց բոլորի անունից ցանկանում եմ ասել. «Ճանապարհդ առ Աստված, Համլե՛տ, հիշատակդ թող չմարի և չի մարի, քանի որ քեզանից հետո մնալու է անմեռ վաստակդ»:

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀԲԱՋՅԱՆ

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ ազգային-քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ, կարելի է ասել, 1904 թվականը սկզբնավորում է վերակառուցման ու վերելքի նոր շրջան: Ազատագրական պայքարում հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների գործունեությանը բնորոշ է տեղատվության ու նահանջի, ապա նաև վերելքի հաջորդականությունը, որը հիմնականում պայմանավորված էր պատմական նշանակություն ունեցող իրադարձությունների յուրահատկությամբ ու փոփոխությամբ և տարածաշրջաններում գործող կուսակցական գործիչների անհատականությամբ ու ծավալած գործունեությամբ: Այս օրինաչափությունը դրսևորվել է նաև ՀՅԴ Վանի «Շամի» կենտրոնական կոմիտեության գործունեության մեջ:

1896 թ. Վանի հունիսյան ողբերգական դեպքերի հետևանքով մեծ կորուստներ ունեցան ոչ միայն Արմենական և Հնչակյան կուսակցությունները, այլև ՀՅ Դաշնակցությունը: Թուրք իշխանությունների իրականացրած կոտորածներն ու մի շարք գործիչների, հատկապես ՀՅԴ Վանի «Շամի» կենտրոնական կոմիտեի ղեկավար Պետոյի նահատակությունը մեծ

Համլետ Գևորգյան

հարված էին կուսակցությանը: ՀՅԴ կառույցները քայքայվել ու թուլացել էին: Բնականաբար, նման իրավիճակում կուսակցության գործունեության մեջ անխուսափելիորեն պիտի նկատվեին տեղատվությունն ու նահանջը[1]:

Վասպուրականի նահանգը և հատկապես Վան քաղաքն առանձնահատուկ նշանակություն ունեին Դաշնակցության համար:

ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովում ընդունելով «Ուժերու կեդրոնացում կամ ապստամբութեան պատրաստութիւն» որոշումը՝ ժողովականներն առաջարկում են Բարձրավանդակի և Լեռնավայրի հետ ուժերի կենտրոնացման վայր

ընտրել նաև Շատախը և Քարաժայռը (Դերսիմ): Սակայն նկատի ունենալով, որ Դաշնակցության ունեցած միջոցները հնարավորություն չեն տալիս հավասարապես կազմակերպելու ու զինելու այդ շրջանները, որոշվում է «Շատախ-Վասպուրական հայաշատ շրջանը պաշտպանողական դրութեան մէջ դնելու համար, Վրէժստանի մօտ 300 հրացանները հավասար կերպով բաշխել Շամիրի (Վան), Շատախի և Մոկսի լեռնային մասերում կազմակերպուելիք զինամարզական-մարտական խումբերուն»[2]:

Վան-Վասպուրականը՝ որպես ՀՅ Դաշնակցության գործունեության՝ կարևորագույն նշանակություն ունեցող շրջան, նշվում է նաև 1904 թ. հունվարին կայացած ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովում: Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման՝ «Վասպուրականը՝ ներկայիս մէջ չունենալով հարկ եղած ուժը Պատասխանատու Մարմին կազմելու համար՝ որոշուեցաւ ղրկել հոն գործիչներ՝ յանձնելով առաջիկայ Դաշնակցութեան Խորհրդին յայտարարել Վասպուրականի Մարմինը Պատասխանատու Կեդր. Կոմիտէ»[3]:

Փաստորեն, Արևմտյան Հայաստանում Դաշնակցությունը Վասպուրականում պիտի հիմներ թվով երկրորդ Պատասխանատու կենտր. կոմիտեն: Կարելի է ասել, որ, Ընդհանուր ժողովների որոշմամբ, ՀՅ Դաշնակցությունը փաստում է, որ Շատախ-Վասպուրական հայաշատ շրջանը Արևմտյան Հայաստանում Բարձրավանդակից հետո այն վայրն էր, որը կարևորագույն նշանակություն ուներ կուսակցության գործունեության համար: Բնականաբար, առաջնահերթ նշանակություն տալով Վասպուրականին, ՀՅԴ-ն այնտեղ պիտի գործուղեր նոր գործիչների:

Այդ ժամանակահատվածում ՀՅԴ ուշադրությունը բևեռված էր գլխավորապես Սասունի վրա: Նրա նախաձեռնությամբ կազմակերպված մարտական ու զինատար խմբերը, ինչպես նաև հեղափոխական գործիչները, համաձայն կուսակցության որդեգրած մարտավարության և Արևմտյան Հայաստանում տիրող կացության, պիտի մեկնեին Սասուն: Այդ պատճառով դյուրին չէր Վասպուրականի կազմակերպության համար ընտրել կարող ու փորձառու գործիչների, որոնք կկարողանային վերականգնել ու հզորացնել ՀՅԴ «Շամի» կենտրոնական կոմիտեությունը:

Այդ օրերին Երկիր մեկնելու նպատակով Կարսի շրջանում էին հավաքվել բազմաթիվ կամավորներ, որոնց թվում էին Ղարաբաղից եկած հինգ երիտասարդներ՝ Սերգեյ Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան), Եգոր

կամ Գևորգ Առուստամյանը (Մենակ), Թուման Թումանյանը (Թորգոմ), Իսաջան Առաքելյանը և Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխան): Համաձայն ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտր. կոմիտեի որոշման՝ նորեկներից յուրաքանչյուրը այս կամ այն մարտական խմբի կազմում ընդգրկվելուց առաջ պիտի կազմակերպչական-քարոզչական աշխատանք կատարեր Կարս քաղաքում կամ շրջանի գյուղերում[4]:

Արցախից Կարս եկած հինգ երիտասարդները, բացառությամբ Իշխանի, ընդունում են ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտր. կոմիտեի պայմանը՝ մասնակցելու կազմակերպչական-քարոզչական աշխատանքներին: Իշխանն առավելապես զինվորական գործիչ էր. ոմանք նրան համեմատում են նույնիսկ Նիկոլ Դումանի հետ: Նա Օնիկ Նեռուզի գլխավորած «Շանթ» մարտական խմբի կազմում մասնակցել էր Բասենի կռիվներին և այն եզակի զինվորներից էր, որին հաջողվել էր հնարամտությամբ հրաշքով փրկվել և վերադառնալ Կարս:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ՝ Վասպուրականում կուսակցության լիազոր-ներկայացուցիչ է նշանակվում Վահան Փափազյանը (Կոմս), որն էլ առաջարկում է Իշխանին, որի հետ, ի դեպ, նա ծանոթ չէր, իր հետ մեկնել Վան[5]: Իշխանը սիրահոժար ընդունում է Կոմսի առաջարկությունը:

ՀՅԴ Բյուրոյի հանձնարարությամբ 1903 թ. նոյեմբերին Վան են գալիս ընտրված հինգ գործիչներից միայն երկուսը՝ Վահան Փափազյանն (Կոմս) ու Իշխանը, որոնց պիտի միանային տեղի «Շամի» կենտր. կոմիտեի անդամները:

Ինչպիսին էր ՀՅԴ Վանի «Շամի» կենտր. կոմիտեի և նրա ղեկավարությամբ գործող կուսակցական կառույցների իրական վիճակը:

Կոմսը և Իշխանը Վան հասնելու առաջին

իսկ օրերին գումարում են ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի նիստ՝ պարզելու նահանգում և քաղաքում տիրող կացությունն ու կենտր. կոմիտեի և նրա ղեկավարությամբ գործող կուսակցական կառույցների վիճակն ու հնարավորությունները: Կոմսի ու Իշխանի ընկերակցությամբ նիստին մասնակցել են նաև ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի տեղացի անդամներ Թևոսը, Ալեսն ու Արմենակը:

«Շամի» կենտր. կոմիտեի անդամների տեղեկություններից պարզվում է, որ Վարդգեսի ձերբակալությունից հետո կուսակցական կառույցները քաղաքում քայքայվել էին, և մնացել էին ընդամենը մի քանի խմբեր, որոնք ունեին սահմանափակ քանակությամբ զենք:

Կոմսի վկայությամբ՝ իրավիճակն ավելի ծանր էր գավառներում, հատկապես լեռնային շրջաններում, ուր Նիկոլ Դումանից ու Վարդանից հետո որևէ ղեկավար ընկեր կամ մարտական խումբ չէր այցելել[6]:

Ի՞նչ պիտի արվեր՝ վերականգնելու, ամրապնդելու ՀՅԴ քայքայված կառույցները և կայուն հիմքերի վրա դնելու ու ընդլայնելու նրանց գործունեության շրջանակները:

Որպեսզի համակողմանիորեն կշռադատված ու ճիշտ կառուցեին իրենց աշխատանքը, որպես իրենց ապագա գործունեության առաջին քայլ Կոմսն ու Իշխանը ուսումնասիրում են Վազգենի և Վարդգեսի արխիվը: Արխիվում պահպանվել էին Աղբյուր Սերոբի, Հրայրի, Վազգենի, Վարդգեսի, Մշո Տատրակի, Վասպուրականի և Տարոնի այլ պատասխանատու գործիչների նամակներն ու տեղեկագրերը[7]:

Համաձայն Կոմսի խոստովանության՝ «Անգնահատելի նիւթեր էին մեզի համար, որոնք հետագային մեծապէս նպաստեցին մեր ձեռնարկելիք աշխատանքներուն... Հոն էին նաև Հրայրի և Վարդգեսի կազմած «Կազմական Ներքին Կանոնագիրը» և Տարօնի ու Վասպուրականի նախընթաց փոխ յարաբերութեանց թղթակցութիւններն ու պայմանները: Մեր ծանոթութիւնը Վասպուրականի ու Տարօնի հետը լիակատար եղաւ»[8]:

Վանի Այգեստան թաղամասը

Իրենց նախորդների գործունեությունը ուսումնասիրելուց և նահանգում տիրող կացությանը ծանոթանալուց հետո ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեն մշակում է իր գործունեության ծրագիրը:

1. Նախ անհրաժեշտ էր շտկել ու կարգավորել կենտրոնական կոմիտեում տիրող անառողջ մթնոլորտն ու նրա անդամների փոխհարաբերությունները: Այդ անառողջ մթնոլորտը պայմանավորված էր «Դրսից եկած»-ների ու տեղացի գործիչների միջև առկա հակասությամբ:

«Դրսից եկած» Իշխանի ու տեղացի գործիչների հարաբերություններն ի սկզբանե այնքան էլ հարթ չեն ընթացել:

Ըստ Իշխանի՝ կենտր. կոմիտեի անդամները գաղափար չունեին նահանգում տիրող իրավիճակի և կազմակերպության էության մասին: Նրա գնահատմամբ՝ ՀՅԴ կենտր. կոմիտեի անդամները պիտի օժտված լինեին մարտական կարողությամբ, բայց իրականում «Անոնց երեսին կը նայիմ, շարժումները կը դիտեմ, կը տեսնեմ զարկան ֆետայիներ չեն՝ Սերոբի, Գէորգի կամ Շահպազի նման, որ ըսեմ՝ գլխուս վրայ»[9]:

Ընդհանրացնելով իր կուսակցական ընկերներին տված գնահատականը՝ Իշխանը նշում է. «...Ուսումին կը նայիմ՝ բէխաբար, տգէտ, խանութպանի աշակերտի նման: Զարգացում ալ չունին... Եւ ասոնք են, որ ելեր են ինքզինքն Կեդր. կոմիտէ կը ծախեին»[10]:

Ի տարբերություն Իշխանի՝ Կոմսը դրական է բնութագրում «Շամի» կենտր. կոմիտեի տեղացի անդամներին:

ՀՅԴ «Շամի» կենտրոնական կոմիտեի գործունեության ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ Իշխանն ի սկզբանե ցանկություն չի ունեցել մնալու Վանում և աշխատելու կենտր. կոմիտեի վերոհիշյալ անդամների հետ: Նրա համար գերադասելի էր առավել ազատ, ավելի դժվարին, բայց ինքնուրույն գործունեությունը, և Վանում հաստատվելու առաջին իսկ օրից նա բացահայտորեն հայտարարել էր, որ չի ցանկանում գործել քաղաքում ու դաշտային շրջաններում:

Իշխանը ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեից պահանջում է իրեն վստահել լեռնային շրջաններում գործելու իրավունքը: ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեն բավարարում է Իշխանի պահանջը: Նա այդուհետ պիտի գործեր լեռնային շրջաններում, որոնք ստանում են «Լեռնապարի շրջան» անվանումը:

Այդուհանդերձ, ինչպիսին էլ լինեին Վանից

հեռանալու ու գավառներում գործելուն նախապատվություն տալու պատճառները, պիտի փաստել, որ ժամանակն ապացուցեց նրա այդ որոշման արդարացիությունն ու արդյունավետությունը: Վասպուրականի լեռնային շրջաններում (Լեռնապար), հատկապես Շատախում, հենց Իշխանի հիմնած ՀՅ Դաշնակցության կառույցներն են 1915 թ. կազմակերպել այդ շրջանների հայության ինքնապաշտպանությունը:

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Կոմսը մնում է քաղաքում և «Շամի» կենտր. կոմիտեի ընկերների հետ գծում է իրենց գործունեության ծրագիրը:

Ինչ պիտի արվեր: Նախ և առաջ անհրաժեշտ էր վերականգնել քաղաքի և շրջանների կիսաքայքայված կուսակցական խմբերն ու կոմիտեները: Ընդսմին, պիտի գործեին անաղմուկ, գաղտնի, որպեսզի իշխանությունները չիմանային քաղաքում և շրջաններում իրենց ներկայության մասին:

Վան քաղաքում գտնվող ՀՅԴ խմբերից թերևս միակը, որը պահպանել էր իր կազմն ու մարտական ոգին, 15-18 տարեկան պատանիներից բաղկացած խումբն էր, որին Վարդգեսը տվել էր «Հատիկներ» անունը:

Ըստ արժանվույն գնահատելով «Հատիկներ»-ի ծառայությունը քաղաքում և շրջաններում ՀՅԴ խմբերի վերականգնման գործում՝ Կոմսը նշում է.

Ձախից՝ Կոմսը, կողքին Վանա Իշխանը

«….անոնք միայն երևացան հրապարակի վրայ. կապ պահեցին հաւատարիմ մնացած շարքերուն հետ. գիւղեր կերթային ցրելու վհատութիւնը և փարատելու սարսափը, յոյս կուտային, ոգևորող սուտեր կը հնարէին՝ բարձրացնելու համար ինկած ոգին»[11]:

Թեպետ ՀՅԴ խմբերը քայքայվել էին, սակայն մնացել էին Դաշնակցության առանձին անդամներ, որոնք պահպանել էին իրենց նվիրվածությունը և պատրաստ էին կուսակցության շարքերում շարունակելու իրենց գործունեությունը:

Քայքայված նախկին խմբերը վերակազմավորելու և նոր խմբեր ձևավորելու համար Կոմսի գլխավորած «Շամի» կենտր. կոմիտեն օգտագործում է հենց այդ անհատների ուժերն ու կարողությունները[12]:

Վանում և գավառներում ՀՅԴ գործունեությունն առավել արդյունավետ ծավալելու նկատառումով Կոմսը վերամշակում և կատարում է կանոնադրական փոփոխություններ: Համաձայն այդ փոփոխության՝ յուրաքանչյուր կենտր. կոմիտեի և կոմիտեության շրջանակներում իշխանությունը պիտի կենտրոնացվեր «….կեդրոնական մարմնի կամ անկէ ղրկուած ներկայացուցչի ձեռքը. հաստատեցի ամենախիստ կարգապահական կանոններ և պատիժներ»[13]:

2. Ջուտ գաղտնիության նպատակով խմբի անդամները պետք է ճանաչեին միայն իրենց խմբի անդամներին և չպետք է տեղյակ լինեին այլ խմբերի գոյության մասին: Հնարավորության դեպքում խմբի անդամները պարտավոր էին իրենց միջոցներով զենք ու զինամթերք ձեռք բերել և պետք է անառարկելիորեն ենթարկվեին «վերէն եկած հրամաններուն»:

Համաձայն կանոնադրական փոփոխության՝ կազմավորվում են իրենց նշանակությամբ և գործունեության յուրահատկությամբ երկու կարգի խմբեր՝ «Մայր» և «Օժանդակ»:

«Մայր» խմբերի պարտականություններն էին քարոզչական աշխատանքը, ժողովրդի զինումը, պետական պաշտոնյաների ու զորքի տեղաշարժերը, լրտեսներին հսկելն ու բազմաթիվ այլ հանձնարարություններ կատարելը:

«Օժանդակ» խմբերը ենթարկվում էին «Մայր» խմբերին և գործում էին նրանց հսկողությամբ, իսկ կարևոր նշանակություն ունեցող հանձնարարությունները, օրինակ՝ զենքերի ու ռումբերով լի արկղերի տեղափոխությունը և պահեստավորումը, կատարում էին վերին մարմնի գիտությամբ[14]:

3. Խմբերը կազմվում էին՝ հիմք ունենալով անդամագրվողների մտավոր կարողությունը, մասնագիտությունն ու տարիքը:

Խմբերի թիվը գնալով մեծանում էր:

Ջուգահեռաբար ավելանում էին պահանջներն ու գործունեության ծավալները: Կոմսի խոստովանությամբ՝ կենտր. կոմիտեի անդամներն իրենց փորձառությամբ ու կարողությամբ գործնականում ի զորու չէին բավարարելու նոր կազմավորվող խմբերի կուսակցական, գաղափարական զարգացման համար անհրաժեշտ պահանջները: Վանի հայության համար տեղացի գործիչները սովորական մարդիկ էին, որոնց հետ կապված էին ամենօրյա շփումներով ու բարեկամական կապերով:

«Նոր և Դուրսէ մարդ էր պէտք իրենց,- նշում է Կոմսը,- որ շատ մատչելի չլինելով հանդերձ՝ խորհրդաւոր, մշուշին մէջէն կառաւարէր և երևար երբեմն գոհացնելու համար զիրենք... Այս էր հոգեբանութիւնը բոլորի»[15]:

Պիտի նկատել, որ Վան քաղաքում և գավառներում, բացառությամբ Իշխանի, ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի գործունեությունը իրականացնում էին տեղացի գործիչները: Մինչև Արամի, ապա նաև Ռուբենի գալը Դաշնակցության Վասպուրականի կառույցը ՀՅԴ Բյուրոյի կողմից չի ստացել որևէ այլ կարգի օգնություն: Այդ նույն ժամանակահատվածում կուսակցության ուշադրությունը գլխավորապես բևեռված էր ոչ միայն Սասունի վրա:

1903 թվականից ՀՅԴ գործունեության համար բացվում է ազատագրական պայքարի երկրորդ՝ կովկասյան ուղղությունը: Ի պաշտպանություն հայ եկեղեցու հարստության ու իրավունքների՝ Դաշնակցությունը մեծ գործունեություն է ծավալում՝ կազմակերպելու ցարիզմի դեմ կովկասահայության ծավալած պայքարը: Համաժողովրդական պայքարը կազմակերպելու նպատակով Դաշնակցության նախաձեռնությամբ կազմավորվում է Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտեն, որը, Հր. Տասնապետյանի գնահատմամբ, «...Ընդհ. Ժողովի որոշմամբ, կը ստանար ուղղակիօրէն կուսակցական հանգամանք՝ վերածուելով Պատասխանատու Մարմնի... Փաստօրէն կը նուիրականանար Հ. Յ. Դաշնակցութեան համար, ազգային-ազատագրական պայքարի երկրորդ ճակատը»[16]:

1904 թ. ապրիլ-մայիս ամիսներին Թիֆլիսում տեղի է ունենում ՀՅԴ Արևելյան բյուրոյի ռայոնական ժողովը, որի օրակարգում, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում են նաև Բարձրավանդակի դրության, կովկասյան գործունեության և եկեղեցական կալվածքներին վերաբերող խնդիրները: Նույն հարցերը փոքր-ինչ այլ ուղղվածությամբ քննարկման առարկա են դառնում նաև 1904 թ. հուլիսին տեղի ունեցած ռայոնական ժողովում[17]:

Վարդան Շահբազ

Այս ամենը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում Դաշնակցությունն իր գործունեությունը ծավալում էր երկու գլխավոր ուղղություններով, ինչը, առաջադրելով նոր խնդիրներ, անշուշտ ավելի էր բարդացնում ու դժվարացնում արդյունավետ գործելու հնարավորությունները:

Վանում Կոմսի և Իշխանի հաստատումից ընդամենը երկու ամիս անց՝ 1904 թ. փետրվար-մարտ ամիսներին, տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը[18]:

Ընդհանուր ժողովը լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարտական ուժեր չի տրամադրում Վասպուրականի կառույցին: Ավելին՝ այն պարտավորեցնում է Խնուսի, Ախլաթի, ինչպես նաև Վանի ՀՅԴ կոմիտեներին կազմել տեղական պայմաններին և իրենց տրամադրության տակ գտնվող ուժերին համապատասխան թռուցիկ խմբեր՝ հարձակողական ձեռնարկների համար:

Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Սասունի դիմադրողական ուժն ավելացնելու համար Վասպուրականի ՀՅԴ կենտր. կոմիտեն իր տրամադրության տակ գտնվող սահմանափակ ուժերից պիտի «....պարտաւոր ըլլայ իր ձեռքին տակ գտնուած 121 հրացաններէն 60-ը փոխադրել Ախլաթ մինչև գարուն Սասնոյ համար»[19]: Թեպետ Ընդհանուր ժողովն այդ ժամանակ ֆինանսական միջոցներ և մարտական ուժեր չի տրամադրում ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեին, բայց նկատի ունենալով Վասպուրականի կառույցի կարևորությունը՝ որոշում է.

1. «Գործիչներ ղրկել Վանայ շրջակայքը կազմակերպելու և ժողովուրդը զինելու իր սեփական միջոցներով, այն ծրագրին համաձայն, որ գծուած է Բարձրաւանդակի ու Շամիրի ներկայացուցիչներուն կողմէ 1901 թուականին (նկատի ունի ընդհանուր ապստամբության վերաբերյալ Հրայր Դժոխքի, Աշոտ Երկաթի և Վարդգեսի համատեղ մշակած ծրագիրը - Հ. Գ.):

2. Երբ Վասպուրականը ներկայացնէ զինուորական կազմակերպութիւն մը, Դաշնակցութիւնը յանձն կառնէ կազմակերպական զինուորներու թուին համեմատ զէնք տալ. նոյնիսկ աւելի՝ երբ յարմար նկատուի կամ քաղաքական հանգամանքները պահանջեն:

Արտասահմանէն Վան ղրկուած կամ տեղին վրայ գնուած զէնքերու 3/4ը պէտք է ցրուիլ Վանայ շրջանի զանազան վայրերը, ըստ յայեցողութեան նոյն շրջանի Մարմնին»[20]:

Մինչ ՀՅԴ վերին մարմինը կհասցներ նոր գործիչներ ու զենք ուղարկել Վանի ու գավառների կառույցներին, «Շամի» կենտր. կոմիտեն կարողանում է զգալի թվով խմբեր հիմնել քաղաքում:

«Խումբերու թիւը,- նշում է Վ. Փափազյանը,- մեծ արագութեամբ կաւելանար»[21]:

1904 թ. գարնանը Վանի ՀՅ Դաշնակցության շարքերը համալրում են փորձառու և իրենց գործունեությամբ կուսակցության մեջ արդեն հայտնի գործիչներ: Մի խումբ փորձառու և լավ զինված ընկերների հետ Վան է գալիս Վարդան Շահբազը: Նա թեև 3-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր էր, բայց Սասունի դեպքերի կապակցությամբ լքել էր ժողովի աշխատանքներն ու շտապել Վան:

«Շատ կազդուրիչ էր ինձ համար,- խոստովանում է Վ. Փափազյանը,- այդ իրապէս ընտիր ուժերու ներկայութիւնը... Իշխանը նոյնպես կարիք ունէր նոր ուժերու. Իշխանի հետ համախորհուրդ բաժանեցինք մարդիկ...» [22]:

Զուգահեռաբար նույն գործողություններն իրականացվում էին նաև գավառներում: Իշխանն իր կազմած «Կազմակերպականը Լեռնապարի շրջանում» խորագիրը կրող տեղեկագրում նշում է, որ Վասպուրականում, հատկապես լեռնային գավառներում, կազմակերպական գործը շատ թույլ է եղել: Թեպետ տարիներ առաջ Լեռնապարի շրջաններում որոշակի կազմակերպական աշխատանքներ են իրականացրել Պետոյի, ապա՝ նաև Վարդանի առաջնորդած խմբերը, բայց Իշխանի գնահատմամբ՝ «....դրանց մուտքը գաւառներ կազմակերպական ոչ մի նշանակութիւն չի կարողանում ունենալ, չնայած որ մեծ տպաւորութիւն է առաջացնում, սակայն նրանք երբեք չեն կապւում ռեալ գործի հետ...» [23]:

Ձախից աջ՝ Տիգրան, երկրորդը՝ Վանա Իշխան, երրորդը Արամ Մանուկյան, չորրորդը՝ Մալիաս, հինգերորդը՝ Համբարձում Բաղեշցյան, կենտրոնում՝ Վանա Մարգիս

Իշխանի կազմած տեղեկագրերից պարզվում է, որ, հակառակ Կոմսի պնդման, մինչև Լեռնապարում իր հաստատվելը լեռնային որոշ բնակավայրերում արդյունավետ գործունեություն է ծավալել Հրայր Դժոխքը, որը կարողացել է մի քանի գյուղերում կազմավորել ՀՅԴ խմբեր և նրանց աշխատանքները համադրող կոմիտեական մի մարմին:

Իշխանի տեղեկագրի հավաստմամբ՝ այդ խմբերը կարողացել են ձեռք բերել ընդամենը 2-3 հրացան և սահմանափակ քանակությամբ փամփուշտ[24]:

Վանի նահանգի այն շրջանը, որը կնքվեց «Լեռնապար» անվամբ, ընդգրկում էր Վերին և Ներքին Հայոց ձորի, Շատախի, Գավաշի, Կառկառի, Կարճկանի, Մոկսի, Սպարկերտի, Մամրտանքի, Խիզանի գավառները և Ոզմ գյուղը[25]:

Որպեսզի գործիչները հաջողությամբ աշխատեին լեռնային շրջաններում, պիտի լինեին ֆիզիկապես ուժեղ, դիմացկուն, կարողանային հաղթահարել լեռնային պայմանների դժվարությունները և ամենակարևորը՝ իրենց գործունեությամբ հավատ ու հարգանք ներշնչեին լեռնականներին ու շահեին նրանց վստահությունը:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին և «Շամի» կենտր. կոմիտեին Իշխանի ներկայացրած զեկուցագրերը մատնանշում են, որ Լեռնապարում գործելու ժամանակ նրա ուշադրության կենտրոնում առավելապես եղել է Շատախ գավառը: Ըստ Նրա գնահատման՝ շատախցիները հարևան մյուս գավառների հայ բնակիչների համեմատ ավելի քաջ էին ու վստահելի[26]:

Այդ նույն ժամանակ քուրդ բնակչությունը

գավառներում արդեն զգալի թիվ էր կազմում: Օրինակ՝ Շատախի 110 գյուղերից միայն 50-ն էին հայկական, մնացած 60-ը՝ քրդական[27]:

Զեկուցագրերում ներկայացնելով քուրդ ավարառուների կողմից գավառների հայ բնակչության նկատմամբ իրականացվող բռնություններն ու ավարառության դեպքերը՝ Իշխանը նշում էր, որ իշխանությունների հովանավորությունը վայելող քրդերը «....վարժուել էին, որ իրենց յարձակումները հայ գիւղերի վրայ անպատիժ թողնուէին... իսկ յարձակման յենթարկուող հայ գիւղացին ոչ կարելիութիւն ունէր և ոչ էլ կամքը՝ ինքնիրեն պաշտպանելու....» [28]:

Ինչպե՞ս, ի՞նչ ուժերով կարելի էր դիմագրավել քրդերի հարձակումներին և թույլ չտալ նրանց հետագա տարածումը հայկական բնակավայրերում: Քուրդ հրոսակախմբերի սանձարձակ գործողություններին կարող էին հակահարված տալ մարտական խմբերը: Այդ նկատառումով Իշխանը նախ և առաջ մեծ ուշադրություն է դարձնում մարտական ուժերի կազմավորման խնդիրներին: Մյուս կողմից, ՀՅԴ գործիչների պարտականությունն էր առաջնորդվել կուսակցության ծրագրի հիմնադրույթներով և Ընդհանուր ժողովների ընդունած որոշումներով և «....յեղափոխական գաղափարը տարածել և խորացնել ժողովրդի լայն զանգուածներուն մէջ և գիւղացիութիւնն ու երիտասարդութիւնը մղել դէպի ինքնապաշտպանութիւնը, զինման, դաստիարակութեան և ինքնակառաւարման ճանապարհով»[29]:

Նոր կազմավորվող ՀՅԴ խմբերի, հատկապես մարտախմբերի կազմում առաջին հերթին ընդգրկվում էին Լեռնապարի տարբեր շրջաններում բնակվող՝ Նիկոլ Դումանի, Վարդանի, Փոխիկի մղած կռիվներին, Խանասորի արշավանքին ու «Վանի պստիկ կռիվներ»-ին մասնակցած ֆիդայիները:

Գավառներում հուսալիորեն տեղաշարժվելու նպատակով Իշխանը կազմում է 15-20 քաջավարժ մարտիկներից բաղկացած Թռուցիկ խումբ, որը դառնում է նրա մշտական ուղեկիցը:

«Այդ ընտիր ատաղձով,- գրում է Կոմսը,- Իշխանը կրցաւ խարիսխներ հաստատել լեռներու երկայնքին ու լայնքին... Իշխանը իր կազմակերպական և «զինուորական» կեդրոնը հաստատեց շատ լեռնոտ և առանձնացած Կառկառի Խնձորուտ պստիկ գիւղին մէջ»[30]:

Արամ Մանուկյանի բնութագրմամբ՝ խմբերը ինչպես քաղաքում, այնպես էլ գավառներում կազմավորվում էին որոշակի նշանակությամբ ու գործում էին ղեկավար մարմնի կողմից նրանց գործունեության համար սահմանված որոշումներին ու հանձնարարություններին համապատասխան[31]:

Չնայած ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի որոշմամբ՝ հեղափոխական գործիչների ներկայությունն ու գործունեությունը պիտի լինեին խիստ գաղտնի և աննկատ, այնուամենայնիվ, գավառներում կազմավորված մարտախմբերի գոյությունը շուտով հայտնի է դառնում ամենքին:

Կոմսի պնդմամբ՝ «Սկիզբը հրահանգուած էր խիստ ընտրութիւն ընել՝ շարքերը ընդունելէ առաջ, բայց հետզհետէ կազմակերպութիւնը այնպիսի հմայք ու ծաւալ ստացաւ, որ գիւղէն մէկը չէր ուզեր դուրս մնալ...

Այսպիսով մեր կազմակերպութիւնը դարձաւ համայնական...»[32]:

Լեռնապարի շրջաններում կարճ ժամանակահատվածում համարձակ մարտական գործողություններով հռչակվում է Իշխանի գլխավորած Թռուցիկ խումբը: Վ. Վալադյանի բնութագրմամբ՝ «Խումբը օգնութեան է շտապում ամէն գիւղ, ամէն անկիւն, ուր քրդական յարձակման վտանգը կար: Նրա հարուածները իրենց սաստկութեամբ շշմեցնում էին թշնամուն, սարսափ ազդում»[33]:

Թռուցիկ խմբի գոյությունը չէր կարող չարժանանալ թուրք իշխանությունների ուշադրությանը: 1904 թ. ամռանը, երբ Իշխանը Թռուցիկ խմբով գավառներում կատարած հերթական շրջագայության ժամանակ գտնվում էր Նարեկ գյուղի ծայրամասի տներից մեկում, նույն գյուղի բնակիչ Մուխսի Վարդանի մատնությամբ պաշարվում է զինվորների, ոստիկանների ու քուրդ զինյալների կողմից[34]:

Իշխանի գլխավորած՝ 15-20 ֆիդայիներից բաղկացած Թռուցիկ խմբի Նարեկի կռիվն իր ընթացքով նման է Նիկոլ Դումանի զինախմբի մղած Բողազքյասանի կռվին: Համաձայն այդ կռվի մանրամասները պատմող վավերագրի՝ ֆիդայիները հակառակորդի համար անսպասելի, արագորեն դուրս են գալիս տան երդիկից և, դիպուկ հարվածներով հրացանազարկ անելով տունը շրջապատած ոստիկաններից ու զինվորներից մի քանիսին, պատռում են պաշարման շղթան և անկորուստ հեռանում վտանգված շրջանից: Կռվի հաջորդ օրը, Իշխանի հրամանով, ֆիդայիները գնդակահարում են մատնիչ Մուխսի Վարդանին[35]:

Կռվում ֆիդայիների կատարած սխրանքը, թուրք զինվորներին ու ոստիկաններին ոչնչացնելու իրողությունը ոչ միայն նպաստում են հայկական բնակավայրերում նրանց հեղինակության բարձրացմանը, այլև որոշակիորեն փոխում հայ ֆիդայիների նկատմամբ քրդերի վերաբերմունքը:

Նարեկի կռվից հետո մի շարք քուրդ ցեղապետեր, զգաստանալով հայ ֆիդայիների ներկայությունից, ցանկացել են ծանոթանալ ու

բարեկամական կապեր հաստատել ֆիդայիների առաջնորդի հետ և «լինել նրա քիրաները»[36]:

Ինչո՞ւ էին գյուղացիներն անդամագրվում ՀՅ Դաշնակցությանը:

1. Ճիշտ է, քաղաքում դեռևս կային Արմենական ու Հնչակյան կուսակցությունների փոքրաթիվ անդամներ, բայց գավառներում հայ ազգային-քաղաքական կուսակցության ներկայացուցիչներ, հատկապես 1896 թ. հունիսյան դեպքերից հետո, գրեթե չկային: Դաշնակցությունը հայ ազգային-քաղաքական միակ կազմակերպությունն էր, որը քարոզչական աշխատանքներ էր ծավալում հայկական բնակավայրերում, և, բնականաբար, ժողովուրդը որոշակի տեղեկություն ուներ ու հիմնականում ծանոթ էր այդ կուսակցությանը:

2. Ի դեմս ՀՅԴ մարտական խմբերի՝ հայ գյուղացին տեսնում և հավատում էր այն ուժին, որն ի զորու էր հակահարված տալու թշնամու ոտնձգություններին ու պաշտպանելու իր ունեցվածքն ու անվտանգությունը: Մարտախմբերի, հատկապես Իշխանի Թոռուցիկ խմբի ներկայությունն ու ձեռնարկած գործողությունները, Նարեկի հաղթական կռիվը ոչ միայն ոգևորում ու պայքարի տրամադրություններ էին հաղորդում հայ գյուղացիությանը, այլև զգաստացնող ազդեցություն գործում քուրդ հրոսակների վրա:

3. Դաշնակցությունը քայլեր էր ձեռնարկում՝ հնարավորության սահմաններում զինելու գավառների հայ բնակչությանը, իսկ զենքի գործոնը շատ գյուղացիների համար չափազանց կարևոր նշանակություն ուներ:

4. Գյուղական բնակավայրերում կազմավորված ՀՅԴ խմբերի գործունեությունը համադրելու ու ղեկավարելու համար ընտրվում էին ենթակոմիտեներ, որոնք, ըստ Կոմսի, թերևս ավելի ազդեցիկ էին, քան պետական իշխանությունը: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ գյուղերի ունևորներն ու վաշխառուներն աշխատել են անդամագրվել Դաշնակցությանը և դառնալ ենթակոմիտեի անդամ[37]:

5. Հայկական գրեթե բոլոր բնակավայրերում ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեի հանձնարարությամբ կազմավորվել էր «Դատական մարմին», որը հաշվետու էր շրջանի ենթակոմիտեին: Ըստ «Խմբեր» տեղեկագրի՝ «Դատական մարմին»-ի պարտականությունն էր, որ «….գիւղացիներին թոյլ չտայ անարդար կառաւարութեան շէմքերը մաշելու ու վարին իրանց գիւղական վեճերն ու դատերը»[38]:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցության կառույցները, կարելի է ասել, գավառների հայկական բնակավայրերում իրականացնում էին պետական իշխանություններին հատուկ գործառույթներ:

Այդուհանդերձ, թեպետ Կոմսին ու Իշխանին հաջողվում է զգալիորեն վերականգնել կուսակցության քայքայված կառույցները և կազմավորել նոր խմբեր ու ենթակոմիտեներ, այնուամենայնիվ, նահանգի հայկական բնակավայրերը դեռևս հուսալիորեն կազմակերպված չէին: Վասպուրականն առավելագույնս ամրապնդելու համար ՀՅԴ կառույցներն անհրաժեշտաբար պիտի համալրվեին կազմակերպչական ունակություններով օժտված մտավորական կարող գործիչներով, որոնք կկարողանային արդյունավետ գործունեություն ծավալել քաղաքում և գյուղական բնակավայրերում: Այդ ժամանակ Դաշնակցության ուշադրությունը, ինչպես արդեն նշվել է, գլխավորապես բևեռված էր Սասունի, իսկ Կովկասյան ճակատի բացվելուց՝ 1905-1906 թթ. Հարավային Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներից հետո՝ նաև կովկասահայության վրա:

Բացի վերոհիշյալ իրողությունից, 1907 թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ, Դաշնակցությունը մասնակցում էր իրանական հեղափոխությանը, իսկ դաշնակցական մարտական խմբերը Ռոստոմի, Քեռու, ապա նաև Եփրեմ խանի և Նիկոլ Դումանի գլխավորությամբ մարտնչում էին Իրանի սահմանադրական բանակի կազմում՝ ընդդեմ միապետականների[39]: ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեն պիտի հաշվի առներ այդ իրողությունը և ապավիներ սեփական ուժերին ու աշխատեր առավելագույնս օգտագործել տեղի կարող ուժերը:

Արմենական կուսակցությունը, որը հայ ազգային-քաղաքական մյուս կուսակցությունների համեմատ ավելի մեծ կշիռ և հեղինակություն ուներ Վասպուրականում, 1896 թ. հունիսյան ողբերգական դեպքերից հետո մեծ ու անդառնալի կորուստներ էր կրել: Չնայած արմենականների թիվը Վանում խիստ սահմանափակ էր, այնուամենայնիվ, նրանք դեռևս պահպանում էին իրենց ազդեցությունը քաղաքի կրթական և մշակութային հաստատություններում: Ըստ Արամ Մանուկյանի՝ «….Վանի մէջ երևի և գաւառի կեդրոնական վայրերում դպրոցական գործի ամբողջ ղեկաւարութիւնը գտնուում էր արմենականների ձեռքում: 1903-1904-ի ուսումնական տարուայ սկզբում Վանում եղել է 8 հատ արական և 5 հատ իգական ազգային վարժարան, ուր սովորում էին 1150 աշակերտ և 710 աշակերտուհիներ»[40]:

Բացի դրանից՝ քաղաքի բողոքական և կաթոլիկ միսիոներներն ունեցել են 5 վարժարան, որոնցում սովորում էին «….430 մանչ և 380 աղջիկ: Ազգային որբանոցներում կային 240 երկսեռ

որբեր, իսկ օտար որբանոցներում՝ 440 երկսեռ որբեր: Ազգ. և օտար վարժարաններն ունէին ընդամենը 92 ուսուցիչ-ուսուցչուհի և 3310 երկսեռ աշակերտութիւն»[41]:

Արմենական գործիչների շարքում կային ազատագրական պայքարի բովով անցած, Վանի հայության կողմից հարգված մտավորական գործիչներ, որոնք մինչ այդ գործել էին քաղաքում և գավառում: Ռուբենի պնդմամբ՝ «Անոնցմէ էին՝ Համազասպ Բաղէշցեանը, Ղևոնդ Մելոյեանը, Արտակ Դարբինեանը, որոնք կը հանդիսանային Արմենականներու կեդրոնական անձնաւորութիւններ…. Համազասպը իր պատրաստութեամբ և կրթութեամբ ամենէն բարձրն էր Վասպուրականի մէջ…. կարծես յանձին այդ երիտասարդի՝ Աւետիսեանն էր, որ յարութիւն առած էր» [42]:

Վանում և գավառներում առավելագույնս ամրապնդվելու ու ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու նկատառումով Դաշնակցության համար շատ կարևոր էր իր շարքերում ընդգրկել նաև արմենականներին: Այդ հարցը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու նպատակով 1905 թ. հունվարի 16-ին ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեն գումարում է իր հերթական նիստը, որին մասնակցելու համար Կաոկաս գավառից Վան է գալիս նաև Իշխանը[43]:

Վասպուրականի ՀՅԴ գործիչները քայլեր են ձեռնարկում՝ իրենց շարքերն ընդգրկելու արմենականներին: Մի քանի անգամ ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի անդամների հետ հանդիպելուց և կազմակերպական բնույթի որոշ հարցեր քննարկելուց ու պարզաբանելուց հետո Վանում գտնվող՝ 15-20 անդամներից բաղկացած արմենական խումբը հոժարակամ համաձայնում է անդամագրվել Դաշնակցությանը: Կոմսի գնահատմամբ՝ «Դաշնակցութիւնը կարևոր խումբ մը վաստակեցաւ, և ես շատ ուրախ էի: Հետագային այդ խումբը, որ «Սարէն-Զորէն» անունը առաւ, ամենակարևոր վտանգաւոր գործերու լծուեցաւ և անւերապահ նուիրուածութեամբ կատարեց իր պարտականութիւնը»[44]:

Ազատագրական պայքարի, հետևաբար նաև Դաշնակցության կարևորագույն խնդիրներից մեկը խմբերի ու բնակչության զինումն էր: Առանց այդ խնդրի լուծման՝ ՀՅԴ գործունեությունը որևէ իրական արժեք ու նշանակություն ունենալ չէր կարող:

Վանում հաստատվելու հենց առաջին օրերին Կոմսը, փոքր-ինչ ծանոթանալով նահանգում և քաղաքում տիրող կացությանը, նամակ է գրում ՀՅԴ Արևելյան բյուրոյին, որում կարևորելով զինման հարցը՝ նշում է. «Երկիր մտնելուց անմիջապէս, այսպէս ասած հենց սեմի վրայ, դէպի ինձ պարզուած տեսայ հազարաւոր ձեռքեր, որոնք տենդօրէն զէնք են պահանջում, հակառակ դէպքում մի ամենաթեթև խլրտման պիտի սկսուի գաղթականութիւնը»[45]:

Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով «Շամի» կենտր. կոմիտեն պիտի լուծեր զինման խնդիրը: Վասպուրական զենք ու զինամթերք տեղափոխելու համար պիտի՞ առաջնորդվեին նախկին եղանակով ու օգտագործեին փոխադրման հանրահայտ գծերը, որոնք արդեն վտանգված էին, թե՞ որոնեին ավելի անվտանգ և արդյունավետ միջոցներ ու ուղիներ:

Հայտնի է, որ ՀՅԴ-ն զենքի տեղափոխությունն իրականացնում էր հիմնականում զինատար խմբերի միջոցով: Հայտնի է նաև, որ զինատար խմբերը զենքերը տեղափոխում էին հետևյալ երթուղիներով՝ 1. Կարս-Բասեն-Խնուս-Սասուն, 2. Երևան-Արճեշ-Ախլաթ-Տարոն, այդ գծով նաև Ախլաթից Վասպուրական, 3. Խոյ-Արճակ կամ Թիմար-Վան, 4. Սալմաստ-Բաշկալե-Հայոց Ձոր-Վան:

Կովկասից դեպի Երկիր տանող երթուղիներն անցնում էին քրդերով, մանավանդ հայդարանցի բազմաճյուղ ցեղախմբերով բնակեցված տարածքներով: Կոմսի հավաստմամբ՝ իրենք կարողացել են սիրաշահելով կամ նվեր տալով սերտ կապեր հաստատել քուրդ ցեղապետերի հետ: ՀՅԴ այն գործիչները, որոնք փորձառություն ունեին զենք ու զինամթերքի տեղափոխման գործում, օրինակ՝ Սլաքը (Արմենակ Օխիկյան), Թոխմախը (Քղեցի Պողոս), Շամիրամցի Սողոն և այլք, Կոմսի հաղորդմամբ, «իբր մեր գործակալները, աշիրէթապետներու քով կապրէին, որպէս անոնց քաղաքական խորհրդատուներ և «սպայակոյտի պետ» Ահա, այս միջոցներով էր, որ կը յաջողէինք անարգել, անոնց գիտութեամբ և աջակցութեամբ ու նուազագոյն կորուստով Երկրէն ներս «ծծել» մեծ քանակութեամբ ռազմամթերք» [46]:

Զենքերի տեղափոխության այդ նոր եղանակը ստանում է «ծծման» եղանակ անվանումը: «Ծծման» եղանակով զենք ու զինամթերքի տեղափոխությունը իրականացվել է հիմնականում քուրդ վալադների ու հայ շալակավորների միջոցով: Կոմսը նշում է, որ փոխադրությունը կատարվել է տարվա բոլոր եղանակներին, ցերեկը՝ սայլերով՝ «վառելիք, ցախ, փթիր, ցորեն և այլ սննդեղէններ փոխադրող, կամ էշերով, միշտ քօղարկուած, իսկ, գլխաւորապէս, գիշերները, գիւղէ-գիւղ» [47]:

Ռուբենի վկայությամբ՝«Երբեմն էշերու և եզներու կարաւանները օր ցերեկին ճամբայ կելլէին Սալմաստէն և փամփուշտներով բեռնուած ապահով կը հասնեին Վան. կամ քանի մը տասնեակ հայ շալակաւորներ գիշերները կը հասցնեին զէնքերը մէկ կէտէ միւսը և իրենց

գործը աւարտելէ յետոյ, կը դառնային նորէն գիւղացի»: «Ծծման» եղանակով հաջողվել է առանց ավելորդ աղմուկի Վանում կենտրոնացնել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք [48]:

Սկզբնական շրջանում (1904-1905 թթ.) Վան բերված հրացանների մեծ մասը Խանասորի արշավանքից մնացածներն էին, որոնք վերանորոգվել էին Թավրիզի «Խարիսխ» զինագործարանում: Այս զենքերը ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեի որոշմամբ հանձնվել են միայն մարտական խմբերին: Բացի դրանից,՝ ժողովրդի զինման համար 1906 թ. կազմված գնման և բաշխման հանձնախումբը՝ «Զիֆոն», զենքեր է գնում նաև քրդերից ու թուրք զինվորներից: Կոմսի խոստովանությամբ՝ գնված զենքերի 80 %-ը մեծ թերություններ ուներ: Այդ զենքերը նորոգելու ու կարգի բերելու համար 1904 թ. ամռանը հիմնվում է երկու գաղտնի արհեստանոց[49]:

Մի ուշագրավ հանգամանք ևս: Զենք ու զինամթերք տեղափոխողները չպետք է իմանային, թե որտեղ պիտի պահեստավորեին իրենց բերածը: Զենքերի պահեստները եղել են տարբեր վայրերում և խիստ գաղտնի: Շատ քչերն են իմացել զինապահեստների տեղը:

Դաշնակցության պատմության ուսումնասիրությունը անվերկբա հավաստում է, որ զենք ու զինամթերքի տեղափոխման գործում Արևմտյան Հայաստանում գործող ՀՅԴ կենտր. կոմիտեներից թերևս ամենաարդյունավետը «Շամի» կենտրոնական կոմիտեի 1904-1907 թթ. գործունեությունն է:

Եթե ընդհանրացնենք ու արժևորենք Վասպուրականում 1904-1905 թթ. ՀՅԴ Վանի «Շամ» կենտր. կոմիտեի ծավալած գործունեությունը, ապա պիտի նշենք, որ այն եղել է արգասաբեր, հատկապես Վան քաղաքում և Իշխանի գլխավորած Լեռնապարի շրջանում: Այդ ժամանակահատվածում Վասպուրական գործուղված Վահան Փափազյանն ու Իշխանը կարողանում են ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեի անդամների համագործակցությամբ վերականգնել Դաշնակցության քայքայված կառույցները և Վան քաղաքում ու նահանգի լեռնային գավառներում, որոնք կոչում են Լեռնապար, կազմավորել ՀՅԴ խմբեր ու նրանց գործունեությունը համադրող ենթակոմիտեներ: Կազմակերպության ծավալումն ու խորացումն իր հերթին ՀՅԴ «Շամի» կենտր. կոմիտեին առաջադրում էր նոր, ավելի բարդ խնդիրներ:

Կոմսի գնահատմամբ՝ «….մեծ չափով աճած էին նաև քարոզչական, յեղափոխական-դաստիարակչական և, մանաւանդ, ռազմական կրթութեան պահանջները: Կարող նոր մտաւորական և զինուորական ուժերու կարիքը զգալի էր»[50]:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ՝ 1905 թ. փետրվարին Վանում է հաստատվում Արամ Մանուկյանը, որի ներկայությունը որակական առումով, անկասկած, նոր երանգ է հաղորդում ՀՅԴ գործունեությանը Վանի նահանգում: ■

Ծանոթագրություններ

1 Տես Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Եր., 2006, էջ 87-156:
2 «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Բ, Պէյրութ, 1985, էջ 59:
3 Նույն տեղում:
4 Տես «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1958, թիւ 9, Վ. Վալադեան, «Լեռնապարի Իշխանը», էջ 2:
5 Տես Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 1, Պոսթըն, 1951, էջ 151:
6 Տես նույն տեղում, էջ 151:
7 Տես նույն տեղում:
8 Նույն տեղում:
9 ՀՅԴ ԿԱ (ՀՅ Դաշնակցության կենտրոնական արխիվ, ԱՄՆ, Բոստոն), թթ. 661, գ. 25, էջ 2:
10 Նույն տեղում, էջ 3:
11 Կոմս, Խոնարհ հերոսներ, գիրք Բ, Պէյրութ, 1950, էջ 27:
12 Տես Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 165-166:
13 Նույն տեղում, էջ 171:
14 Տես նույն տեղում, 173-174:
15 Նույն տեղում, էջ 175:
16 Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունէութիւնը, Պէյրութ, 1994, էջ 17:
17 Տես «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Բ, էջ 201:
18 Տես նույն տեղում, էջ 108:
19 Նույն տեղում, էջ 111:
20 Նույն տեղում, էջ 112:
21 Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 178:
22 Նույն տեղում:
23 ՀՅԴ ԿԱ, թթ. 663, գ. 29, էջ 1:
24 Տես նույն տեղում:
25 Տես նույն տեղում, թթ. 663, գ. 30:
26 Տես նույն տեղում:
27 Տես նույն տեղում:
28 Նույն տեղում:
29 Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան (1890–1950), կազմեց՝ Ս. Վրացեան, Բոստոն, 1950, 471էջ:
30 Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 269:
31 Տես Մատենադարան, ՆՁՀ (Նոր ձեռագրերի հավաքածու), ֆ. 148, տետր (տ.) 2, էջ 34-35:
32 Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 269:
33 «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 10, էջ 50:
34 Տես ՀՅԴ ԿԱ, թթ. 664, գ. 18, էջ 1:
35 Տես նույն տեղում:
36 Տես նույն տեղում, էջ 1-2:
37 Տես Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 188:
38 ՀՅԴ ԿԱ, թթ. 663, գ. 29, էջ 4:
39 Մանրամասն տես Գևորգյան Հ., Եփրեմ խան, «Իրան-Նամե», Երևան, 1999, թիւ 32:
40 Մատենադարան, ՆՁՀ, ֆ. 146, տ. 3, էջ 11-12:
41 Նույն տեղում, էջ 12:
42 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 2, Պեյրութ, 1979, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, էջ 166-167:
43 Տես ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 24:
44 Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 248:
45 ՀԱԱ, ֆ. 1025, ց. 1, գ. 24, էջ 1:
46 Նույն տեղում, էջ 210:
47 Նույն տեղում, էջ 213:
48 Տես նույն տեղում:
49 Տես Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 208:
50 Նույն տեղում:

Վերցուցէ՛ք ձեր ծունկը մեր պարանոցին վրայէն

Վրէժ-Արմէն

«Վերցուցէ՛ք ձեր ծունկը մեր պարանոցին վրայէն»: Այս բառերով աւարտեց իր ուժեղ պատգամը Ալ Շափիրօ՝ քաղաքացիական իրաւանց ջերմ պաշտպան ու կուռ բեմբասաց կղերականը, երիտասարդ ամերիկացի սևամորթ Ճորճ Ֆլոյտի թաղման արարողութեան՝ աւելցնելով. «Շնորհ մը չէ մեր պահանջածը, այլ պարզապէս, որ դադրիք մեր վրայ նստելէ ու ձգէք, որ ըլլանք, ինչ որ ենք»:

Ֆլոյտ զոհ գացած էր Մինէափոլիսի ոստիկաններու վայրագութեան 2020 մայիս 25ին՝ շնչահեղձ ըլլալով անոնցմէ մէկուն՝ իր վզին վրայ ծունկով բանեցուցած երկարատև ճնշումին ի հետևանք: Այդ ցասմնալի միջադէպը տեղի ունեցած պահուն իսկ պատահաբար նկարահանուած էր ու տարածուած յարար աշխարհ ընկերային ցանցերու ճամբով: Եւ համավարակի ներկայ տագնապին մէջ անգամ ան յառաջացուց ընդվզումի աննախընթաց շարժում մը ոչ միայն ափրիկեցի-ամերիկացիներուն մէջ, այլև արդարադատ բոլոր ամերիկացիներուն, յատկապէս երիտասարդներուն, ինչպէս և ոչ երիտասարդներուն, ոչ միայն նոյն քաղաքին մէջ, այլև ԱՄՆի բոլոր գլխաւոր քաղաքներուն՝ Ատլանտեանէն Խաղաղական, և ոչ միայն այդ երկրին մէջ, այլև աշխարհի վրայ քիչ մը ամեն տեղ:

Գրեթէ երկու շաբաթ անց՝ այս տողերը գրուած պահուն, շարժումը տակաւին կ'ահագնանայ, ոչ թէ կը մեղմանայ, և յստակ չէ դեռևս, մանաւանդ բանիմաց իշխանութիւններու բացակայութեան, թէ ո՛ւր պիտի յանգի:

Քենիա Էլին՝ «The Guardian»ի Ուաշինկթընի թղթակիցը, թերթի 6րդ՝ յունիսի թիւին մէջ կ'անդրադառնայ այս հարցին երկար յօդուածով մը («In life and death, George Floyd's plight reflected the burden of being black in America» – «Կեանքի թէ մահուան մէջ Ճորճ Ֆլոյտի տառապանքը կը ցոլացնէր Ամերիկայի մէջ սև ըլլալու ծանրութիւնը»): Ան իրաւամբ կը նշէ, թէ այդ երիտասարդը, որ նաև վարակուած էր պսակաձև ժահրով, այդ համավարակէն չէ, որ կորսնցուց իր կեանքը, այլ զոհ գնաց «ցեղապաշտութեան համավարակին»:

Ցեղապաշտութեան համավարակ... Վաղը, ուշ կամ կանուխ կը գտնուին ժահրը հակակշռելու ու մարմնական առողջութեան սպառնալիքը հեռացնելու միջոցները, սակայն այդ մէկը կարծես անպարտելի կը մնայ դարէ դար, գուցէ հազարամեակէ հազարամեակ: Արդեօք ծայր տուած շարժումը պիտի կարենա՞յ բան մը փոխել: Կ'ըսուէր, թէ աշխարհի պատմութիւնը կրնայ ասկէ ետք նկատի առնուիլ ոչ թէ Քրիստոսէ առաջ կամ Քրիստոսէ ետք թուականներով, այլ համավարակէն առաջ և ետք ժամանակահատուածներով: Կրնա՞յ ըլլալ՝ 2020 մայիս 25ը դառնայ այդ ծխնի թուականը, անկիւնադարձայի՛ն, որմէ ետք չհանդուրժուին այլևս այն բոլոր անարդարութիւններն ու անհաւասարութիւնները, որ անկէ առաջ

հանդուրժուած էին ու կը հանդուրժուէին գրեթէ ամէնուրեք՝ առանց նկատի առնելու անոնց զոհ դարձող հաւաքականութիւններու չարչարանքները, տագնապները, զրկանքներն ու մասամբ նորին:

Շատ գրուեցաւ ու տակաւին պիտի գրուի այս մասին, յատկապէս օտար մամուլին մէջ (համեմատաբար նուազ՝ մեր մամուլին մէջ), և նպատակս չէ մտնել աւելի մանրամասն պատումի մը մէջ, սակայն այս մասին երբ կը մտորեմ, չեմ կրնար չյիշել իմ ալ ժողովուրդիս ապրած դժոխքը սեփական հայրենիքին իսկ մէջ, դժոխք, որուն մահաբեր բոցերը կը շարունակեն հրկիզել մեր գոյութիւնը մինչև օրս:

Այս ըսածս հաստատելու համար պիտի ընեմ մէկ մէջբերում «Յուշապատում Հ.Յ.Դաշնակցութեան, 1890 – 1950» այն բարձրարժէք հատորէն, որ պատրաստած ու խմբագրած է 1918-1920 Հայաստանի Հանրապետութեան չորրորդ վարչապետ ու հետագային ալ Համազգայինի «Նշան Փալանճեան» ճեմարանի տնօրէն Սիմոն Վրացեան, որուն յաւէտ երախտապարտ պէտք է մնանք կոթողային իր այս հրատարակութեան համար: Այնտեղ՝ Գառնիկ Գիւզալեանի «Հայոց յեղափոխութիւնից առաջ» յօդուածին մէջ, ի շարս բազմաթիւ այլ վկայութիւններու, կայ նաև խումբ մը արևմտահայերու կողմէ 1890ին, այսինքն՝ մեզմէ 130 տարի առաջ, այն նոյն տարին, երբ հիմը կը դրուէր Հ.Յ. Դաշնակցութեան, Մակար կաթողիկոսին ուղղուած նամակ մը, որուն մէջ հայերու կացութիւնը հետևեալ բառերով է ներկայացուած. «Ոչ մարդկային լեզուն և ոչ ալ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտութիւնը, որ կրած ենք ու կը կրենք: Մեր հայրենի հողի վրայ մեր կեանքը խաղալիք է դարձած մեր իշխողներու ձեռքին. մեր կեանքը անապահով դրութեանց մատնուած է, մեր ընտանիքը ամօթաբեր բռնութեանց, մեր զաւակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզմէ կորզելու, մեր զաւակները սովամահ կոտորելու ենթարկուած են, մեր եկեղեցիները կը սրբապղծուին և հրոյ ճարակ կը լինին, մեր սրբութիւնները կ'անարգուին և մեր հաւատը կը հայհոյուի և հոգևորականութիւնը ենթարկուած է հինգերորդ դարում տեղի ունեցած տառապանաց» («Տեղեկագիր Հայկ. գիտ. ակադեմիայի», 1946, թիւ 10):

Այս կացութիւնը կը տիրէր այդ թուականէն առաջ անգամ, այդ պատճառաւ էր, որ ԺԹ. դարու սկիզբէն հայերը օգնութիւն կը խնդրէին

օտարներէն՝ ռուսերէն, եւրոպացիներէն, սակայն ոչինչ կը փոխուէր իրենց կացութեան մէջ, դաշնագրեր կը յաջորդէին իրարու, որպէս թէ բարենորոգումներ կը խոստացուէին, բայց չկար երկաթէ շերեփ...

Նախանձելի չէր փոքրամասնութիւններու վիճակը ամէն տեղ, և հալածանքները, հարստահարութիւնները, հետապնդումները տարբեր ձևերով, տարբեր մակարդակներու վրայ կը շարունակուէին ու կը շարունակուին մինչև այսօր՝ փոքրամասնութիւններէն խլելով իրենց ինքնորոշման իրաւունքը, իրենց ինքնութիւնը պահելու և զարգացնելու իրաւունքը, բոլորին հաւասար ապրելու մարդկային անկապտելի իրաւունքը: Միջազգային մարմինները՝ Ազգերու լիկան, ՄԱԿը և նման կազմակերպութիւնները, չկրցան սրբագրել կացութիւնը: Աշխարհը մնաց «իրաւունքը զօրաւորին» սկզբունքի համահարթիչ գլանին ներքև, և այդ «զօրաւորն» ալ այժմ արդէն ոչ թէ պետութիւններ են, այլ բուռ մը անհատներ, որոնք իրենց վերապահած են «արև ու անձրև ընելու» մենաշնորհը:

Կամ՝ իրենց ծունկերով մեր պարանոցներուն վրայ ճնշելու մենաշնորհը...

Եկող ամիս՝ օգոստոս 10ին, հարիւրամեակն է Սևրի դաշնագրին՝ արիւնո՛վ վաստակուած այն դաշնագրին, որ յաջորդեց Մեծ եղեռնէն երեք տարի անց Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսէի դիւցազնամարտերով յարութիւն առած մեր պետականութեան հիմնադրութեան:

Պիտի նշենք, վերյիշենք, յիշեցնե՛նք Սևրի դաշնագիրը՝ դաւաճանուա՛ծ դաշնագիրը:

Եւ ազգովին մենք ալ պիտի գոռանք բարձրաղաղակ՝

- Վերցուցէ՛ք ձեր ծունկը մեր պարանոցին վրայէն...

1897 թվականի հուլիսի 25-27-ին տեղի ունեցավ Խանասորի արշավանքը

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

16 / 28 Մայիս, Մեծ Քաղաք՝

Ընկերներ՝,

Այսպանք ձեր նամակը, որու բովանդակությունը հետևեալն է.

1) Ռուսապետանցի կռուողներ ուղարկել,
2) Փող ուղարկել,
3) Մեկնիկ մի հեղինակաւոր մէկը դրկել:

Ահա՝ մեր պատասխանը.-

1) Փող արդէն ուղարկել ենք՝ 10.000 ռուբլի, եւ աւելի ուղարկելու ենք: Ճանաչուած մարդերից ոմանց նանուագարհաճախ աւելի ենք կոռել, այնպէս որ պարբրապութիւնների հատար չենք կարծում, որ փող պակասի, եւ այնոհետեւ էլ երբէք չենք թոյլ տայ մեզ, որ փողի պաբնառով անցագղությեան մայնոտիք:

2) Ղրկուած կռուողներից մեծագոյն մասը ռուսապետանցի էին, եւ նրանց մեզ փարձ կիներներ էլ կային, այնպէս որ գանկրանցիները եթէ վճռական բոպեում չհասանակեն իրենց, գործը կարեւոր եւ արդարացի արգելքի չի հանդիպի դրանց պատճառով...

3) Մեկանիկ մինչ[եւ] այդրեղ գալ ներկայ պարհանների անկարելի է, որովհետեւ մինը գալով արիսպուած կը լինենք ազատեղ բորոմոլին պարաս, ամրութեան դատարարդերում: Ընտհանդերջ, Մեքիքին գում ենք ասօր, որ մինչեւ չեկ մոր գալ .... մնում է ազմ միայն թղթակցի հարցը...

Ընկե՛ր, ընկերնե՛ր, աչքի առաջ ունեցէ՛ք կարիները ի վեր այդ կողմի հատար կայմանդերպութեան կոհարերությունները, աչքի առաջ ունեցէ՛ք հակառակ այդ կոհարերությունների, պայրարությունների անգործ անցնելը, աչքի առաջ ունեցէ՛ք այդքան անգործունեության՝ թէ՛ այդ ընկերների եւ թէ՛ ժողովրդի մեզ թողած վատ տպաւորությունը, աչքի առաջ ունեցէ՛ք քաղաքականության կամ Արեւելյան հարցի արագած սուր կերպարանքը ու Հայոց Հարցի մոռացության դրուելը: Եւ վերջապես աչքի առաջ ունեցէ՛ք այս կարուաց արաբան պայրարությունները ու լաւ աղամ շարժեցէ՛ք, ձեր անձնական ու կայմանդերպության վարկը, բարոյական վերաբարձրացնելու, նոր անգործունեություն, նոր ռուսաբարությունն եւ մեծ պարասխանատվություն մեր առէնուն վրայ փրանիրելու. ի սերն Աստծո՛ց, դրէ՛ք, կուրցցէ՛ք գործելու, ինչ որ Ընդհ. ժողովը որոշել է, ինչ որ ձեր խիղճը թելադրում է լանուն Յեղափոխության եւ Հայկական Սբ. Գործի. այլեւս թո՛ղ ջնոի, ցրվնուի հին երգը, թէ «մարդիկ չեկան, արիւն նրան պակեցաց, ջրեր հոլեցան, գրերը շարցան եւն»: Կրվնում ենք, խնդրում ենք, պաղատում ենք, ի սերն Աստծո՛ց. օրը օրին, ժամանակին գործեցէ՛ք, պակեցէ՛ք մեր, ձեր, ազգայի բոլոր յոյսերը՝ փարահ լինելով մեր բարոյական ու նիւթական օժանդակությունների վրայ...

Բարեւներ եւ համբոյրներ

Գեղդ Էղեն

«Քրիստափոր Միքայէլեանի նամակները» Պեյրութ, Համազգայինի Վահէ Մէթեան դպարան, 1993, էջ 31-34:

Քրիստափոր Միքայելյանի այս նամակում ակնարկվում է 1896-1897 թթ. Ռայոնական ժողովի կողմից կայացված արշավանքի որոշման մասին, որը պայմության մեջ պիտի արձանագրվեր որպես հայ ֆիդայիների դավադիր կոտորածն իրականացրած քրդական Մազրիկ ցեղի արժանի պատիժը իրագործած Խանասորի արշավանք:

Նամակը հրապարակվում է կրճատումներով

ԴՐՕՇԱԿ